

3971



3. 2. 3.

ԳՈՐԹՈՂԻԱ

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Թարգմանեաց 'ի Գաղղիականէ

Սարգիս Տիգրանեան Նախիջևանցի

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

3938

A
998




Ի Մ Ո Ս Կ Ո Վ

Ի պատգոսան Հայկական Տարց Լազարեանց

Քեճապանի տրեւելեան շէնքոսաց


1834




ՀՐԱՄԱՅԵՑԻՔ ՏՊԱԳՐԵԼ .

Դասաւանդիչ Գրոց Մեքայէլ Տայրա-
Գոյն Լարգապէս, Տաճարն և Կու-
րսի նրէոյ Էջնածնի .

՚ն Մոսկով . ՚ն 28 ապրիլ . 1832 :



9040
~~4657~~



ԲԱՐՁՐԱԾՆՈՒՆԴ

ԱԶԳԱՍԷՐ ԲԱՐԵՐԱՐԱՅ

ՅՈՎՀԱՆՆՈՒ,

ԽԱՉԱՏՐՈՅ

ԵՒ

ԴԱՉԱՐՈՒ

ԱՍՊԵՏԱՓԵՌ ԻՇԽԱՆԱՅ

ԼԱՉԱՐԵԱՆՑ

1875

С. ПЕТЕРБУРГ

ИЗДАТЕЛЬСТВО

С. ПЕТЕРБУРГ

1875

ИЗДАТЕЛЬСТВО

С. ПЕТЕРБУРГ

ИЗДАТЕЛЬСТВО

1875
 БИБЛИОТЕКА
 ИЗДАТЕЛЬСТВО
 С. ПЕТЕРБУРГ

ԲԱՐՁՐԱԾՆՈՒՆԴ ԲԱՐԵՐԱՐՔ

ԱՄԵՆՈՂՈՐՄ ՏԵԱՐՔ.

Ընդաբայս 'ի Չեզ սիրտ երախտատու չարար
և զիմս ողորմելի անձն՝ անհաղորդ անթիւ բա-
րերարութեանց Չերոց, զորս առատաձեռնէք
յազգ մեր համայն: Անդստին 'ի տղայութեան ի-
մում սիրէին շրթունք իմ թոթովաբանել զա-
նուանս Բարերարացդ՝ կարապետել զհանդեր-
ձեալ առ իս շնորհս Չեր անպակաս: Յինն ամաց
անտի հասակի իմոյ վայելեալ արդէն 'ի սէր և 'ի
հայրական խնամս Չեր ընդ յարկաւ Չերդ գե-
րահաչակ Քեմարանի արևելեան լեզուաց, ետու
զինքն 'ի լեզուս և 'ի գիտութիւնս: Յետ եօթն
ամաց՝ Այսերական Համալսարանն Մոսկովու
ընկալաւ զիս Չերովդ իսկ հոգատարութեամբ
'ի թիւս Ուսումնականաց կարգին Բանասիրու-
թեան: Երանեալ եմ ես այն, զի Բարձրածը-
նունդ իշխանքդ լուսաւորեալ զնուաստախոհ միտս
իմ, և տարրացուցեալ 'ի սրտի իմում զԱստուա-

Տահաճոյ խրատո քարեպաշտուծեան , արդ
ևս ունիք զիս ընդ հովանեալ Չերսցդ խնամոց :
Հաճեցարհէք, Ամենողորմ Բարերարք, ընդու-
նիլ զերախայրիս սերմանցն՝ զոր յիսն սերմանե-
ցիք : Քաղցրասէր ակնսրկուծիւն Չեր յայս ա-
ռաջնապատու Վաստակոցս լիցի ինձ յերաշխ հոր
շնորհաց Չերոց՝ առ յապաշս :

ԲԱՐՉՐԱԾՆՈՒՆԴ ԲԱՐԵՐԱՐԱՅԴ
ԱՄԵՆՈՂՈՐՄ ՏԵԼՐՑԴ ԻՄՈՑ

Ամենախոնարհ Տառայ
Սարգիս Տեգրանեան :

յՑ ապր. 1832 ամի .
ի Մոսկով .

լուսաբանութիւն զամենայն աշխոյժս իւրումն
 հանճարոյ • նորայն երևակայութիւն սրաթև
 առաջի առնէ զառարկայս , յոր զբաղին 'ի մե-
 նաւորութեան : Միակ 'ի լուութեան սենեկի վա-
 յելէ նա 'ի ծիծաղադէմսն գեղոց արգասալիր
 անդոյ , տեսանէ զմեծ նորանշանս բնութեան
 զորոց և փորձ փորձէ զներգործութեանցն , դնէ
 ունկն հողմոցն փչման , սառնու յեղեմանց , տա-
 պախարշ տոչորի 'ի ճառագայթիցն արեգական ,
 ահաբեկ լինի ընդ ամեհութիւն փոթորկի , հրճուի
 ընդ խաղաղութիւն՝ որ վերածնին գկնի ալէ-
 կոծութեան : 'ի մէջ այսպիսի տարբեր ախոր-
 ժակաց յափշտակեալն հոգի նորա տայ զինքն
 յամենայն՝ որ աճէ զիւր կեղծիս և զհաճոյս • անդ՝
 կամէր այն հարազատս մարմին զգեցուցանել
 ծննդոցն իւրոց ցուցանաց , որք շարժեն զնա և
 ամբառնան զմիտս նորա յերկրաւորացս աստի :
 Դիպեսցին ապաբէն ինչ ինչ 'ի տարուբերչաց ,
 է զի մերկացուցեալ զնոսա 'ի թերութեանցն՝ քաջ
 նկարագրէ զվսեմն և զհաճոյն , է ևս՝ զի յանցս
 եղերերգական տեսանէ և եթ զսոսկալիս , և 'ի պա-
 հուն բաշխէ 'ի նոսա հանճարն զաղօտութիւն
 գունոց և զաղդուութիւն կոծաբերն թախծու-
 թեան • կենագործեալ զնիւթն , գարդաներկ առ-
 նէ զբանն : Առ եռանդեամբն յափշտակութեան

ընդոստեալ է նա 'ի վիճակ որոց մուծանէն 'ի
 տեսարան անդր, և 'ի փոխ անձին տուեալ
 զբնաւորութիւնս նոցա: Ընդ առնուլն ցբարձ-
 րագոյն աստիճան սուտկութեան զփորձ կրից
 դիւցազնականայ, վստահութեան իման զհոգւոյն՝
 զոր քաջ հանդիսացուցանէ առ վտանգօք գե-
 րագոյն ինչ զգացումն, զանդր ևս տարելոյն
 մուտցմամբ չափ անձին զսիրոյ առ հայրենիս,
 ստեղծանէ զվսեմն և զչնաշխարհիկն: Այսպէս
 ասան վերամբառնայ 'ի տաճար փառաց պուէ-
 տիկոսն՝ առլցեալ պարգևօք Մեղպոմենեայ. Մու-
 սային ասեմ Մեղպոմենեայ՝ որ ըստ Հովրա-
 տեայ չէ, բայց եթէ նոյն ինք՝ բանաստեղ-
 ծութիւն, աշխոյժք, ներդաշնակութիւն և սրբա-
 վանն յափշտակութիւն. պարգևօքն կամիմ պա-
 տուականօք՝ որք քաջ կանոնադրին 'ի ձեռն վար-
 ժից և արուեստի, բայց զորս բնութիւնն մի-
 այն տայ որոց կանն վիճակեալ պսակաց դաբ-
 նիդէից:

Եթէ բնութեան է գէթ միայնոյ բաշխել 'ի
 նա զհանճար զայն Աստուածային՝ որ տայ նմա
 արարչագործել որպէս և նայն, զմիակցութենէ
 նորին ընդ արուեստակեալ տաղանդոյ, ուռճա-
 ցելոյն իման անդուլ պարապմամբք ուսմանց
 նա իսկ վաստակօք, կախի էապէս կատարելագոր-

Տուժիւն վսեմութեան շարադրածի: Ի հանդի-
 պել նոցա միմեանց տեղի տան անտի անհարժու-
 թիւնք ամենայն և անուղղութիւնք՝ որովք քննո-
 ղութիւն և ճաշակ ՚ի ձեռն ամենահաս ոգւոյ ա-
 ռաջնորդեն ոմանց ոչ սովոր կարգի բաղմա-
 հանճարից յես մանրակրկիտ զննութիւնս. անէ
 բացցին առ ժամ ՚ի վկայ բանիցս՝ Հոմերոս,
 Շեկոպիր, Կորնել: Ըստ բարիք զուգորդու-
 թեանս՝ բացատուժիւնք հանճարոյ առլնանին
 քանքարաւ. ՚ի զանց առնիլ միոյն փոխանակի
 ընդ նորա միւսն, ՚ի հանգչիլ միոյն հսկէ միւսն՝
 կատարելագործել զքերթուածն: Նախապաշար
 արդէն գոլով ՚ի խորհրդոյ մտացածնից՝ գորս
 պատկերացուցանել զօրէ տաղանդն, հաղիւ հաղ
 ՚ի միտ առնուն զնորայն ընդհատութիւնս. իբր
 զի յատուկ են նմա ճարտարութիւն և փոյթ
 յարատե՝ տալ մեզ ՚ի մուայօնս արկանել
 զբացակայութիւն հանճարոյ, ծաղկաւէտս սեր-
 մանելով զմիջատութիւն և զանցս գեղոյ ՚ի գեղ,
 զուարճացուցանելով զմիտս և զերևակայութիւն
 մանրօր խուղիւք բաղցրութեան և ճաշակի, մին-
 չև ցվայրկեանն՝ յորում եկեսցէ նա վերատին
 տիրել սրտի՝ ալէկոծելով զնա և հերձանելով,
 կամ հոգւոյն՝ շարժելով զնա, ամիշեցուցանե-
 լով, ամբօխելով, շփոթելով, յամիշտակելով և

ընդլայնելով : Առ քաջ խմանալոյ զնորին երկու պաշտամունս զայսոսիկ ածեալս միանգամայն 'ի կատար՝ չէն մեզ պէտք, բայց եթէ վերժանութեան Արիդիլեայ, Րասինի կամ Աուտերի . հեշտեաւ ապաքէն տեսցուք անդանօր զհանճարն՝ որ ամբառնայ զնոսա, ընդ տաղանդոյն՝ յոր յենուն հանապազ, և որ ոչ երբէք մեկնի առ 'ի նոցանէ :

Յաւէտ Մեղալովենեայ և Թաղիայ (1) վիճակեալ է վարել 'ի տեսարան զարարողութիւնս մարդկան՝ առ միօրինակ անդանօր նկարագրելոյ զնոցայն բնաւորութիւնս, զբարս, զզգացմունս, զկիրս . բայց պաշտամունք սոցա քաջ տարբերին յիրերաց ըստ սկզբանցն նս ըստ վախճանի : Նիւթ կատակերգութեան (Κωμωδία, Comoedia)՝ չարութիւն մարդկան, որոց և 'ի բնէն յօժարակամ միտումն առ արժանին կշտամբանաց . այլ քանզի ծաղու յատուկ է նմա ուղղել զբարս (Ridendo castigat mores), նպատակ նորուն՝ տալ մեզ նովին չարագործութեամբն փախչիլ յայլոց թերութեանց, զոր օրինակ պէտք են ծայրից անդամանդի առ յղկելոյ զանդամանդն նոյն : «Աստուհէբգո-ւ-ի-նն՝ ասէ մերս Դաւիթ ան-

(1) Թաղիա՝ մի 'ի Մուսայից անտի, (սուսուածուհի կատակերգութեան :

« յաղթ (1), արարուած է իբրևոյցն, որ և
 արեամնացու ինչ է. և Բաթմնի էրհանի, ոճանց
 այանքիճանու-Լիւն զամաչէնցազարու-Լեան, և ո-
 ճանց յօժարու-Լիւն 'ի Բարի հէնցազարու-Լեան,
 որ ունի իրապս Բազու-Տս պէսպէս դիճօճ հարգեալ
 այօրինակ և 'ի իրապ զայելչահան պիտոյիցն. զամ
 ահէնցազարելոցն և անարի ծո-լիցն և ընշաւիրացն
 և 'ի զէրայ նոյնպիւնեացն՝ զէպերահանն և զհէճ-
 անահանն ասնել ճառս և սաւշս, որպէս սասիհին սո-
 ճարաբար սպեշտանէն սա այնոսիչ: Սոյնպիւնեա-
 ճարեացի՝ և գո- յըն-Լեանու-լն, նոյնպէս և զԲա-
 արեացն յորդորահանսն՝ ըստ ի-բախանշի-բոցն ճեա-
 ցու-սցէ՝: » Եւ արդարև քանի՞ սիրելի և ախորժ
 է մեզ ձայն կատակերգուացն՝ որ ընդ հէշտուլի և
 աչաչբուլուր ճառու-ցճան Բանիցն, խառնեալ յօրինե-
 ացին և զզանազան օգտաբէր իրապո-ցն զարգապէ-
 արու-Լիւնս. Տրոն՝ 'ի Բարեացն յորդորեալ արեո-
 յիւն, և Տրոն՝ 'ի շարէն 'ի Բաց հրաժարեցու-
 ացանել զո-արճալից հանդերձ Բերհրանօճ. այնպէս էր-
 ահախանշի-բն հոյճանս զԲազմաժողով շտոյացն յար-
 արեալ հազմեցին զՏրոն (2): » Իսկ ուստի եղերեր-
 գուժիւնն հանէ զիւր սկզբունս՝ գորով մարդ-

(1) Ա. ռ. Եզնկացուցն 'ի մեկն. քեր. յղ. վերճանս:

(2) Խորհն. յք գիրս պիտ. օրին. Կ:

կային օրտի • կրեցաշարժն՝ եղանակ նորին , և վախճանն՝ տարրացուցանել ՚ի մեզ զառ ՚ի յանցանացն զգարշուծիւն և զառ առաքինուծիւնս զսէր մշտաձիգ : « Չէ է ոչէրգու-թեանն ան՛չ աշխարհահան ճայն գաւհիաց , քանիւն աբարուած քերթուացն վէհահանաց , զքաջացն գործեալ էր » և զօրու-թեանն պատճէլ ահա-որայէս և շինաչ « հանգոյն գործեցելոցն գերազանցու-թեանք » ասե-
 անայնիւ (1) : » Աստանօր է մեզ տեսանել զմեծա-
 մեծ յեղափոխուծիւնս թագաւորուծեանց , զա-
 հեղս ՚ի ձախորդուծեանց՝ կուտելոց զժողովըր-
 դով , զմեծանուն մազդեզունս առ թերուծեանց
 ինչ գահավիժիլ ՚ի բարձրուծենէ աւագու-
 թեան յանդունդս աղիտից : Աւարդ՝ եղերեր-
 գուծիւնն օահմանի պատէրպայու-ցու-թեան հաս խա-
 զարհու-թեան պիւ-ցապնահան աբարուցու-թեան , որ զօրէ
 հրէել զճեղ ՚ի սոսկու-թեան ՚ի հարեհու-թեան : Գործո-
 զուծեան նորին սլորտ է լինիլ թախծագին ,
 այլ ո՛չ անշուշտ արիւնահեղ , իբրզի « Չէ՛ ա-
 « սէ Րասին (2) , արժան հարկու տեսանել
 « յեղերերգուծեան զմահունս և զպղպջակս ա-

(1) Նոյնն Դաւիթ անյաղթ :

(2) ՚ի յառաջաբանի անդ եղերերգուծեանն
 Բերեանիկէ :

«բեան • շատ ևս լիցի՝ եթէ գործողութիւնն
 «է արդոյ, եթէ գործողքն հրաշագործեն դիւ-
 «ցազունս, եթէ քաջ անդ շարժին կիրք, և
 «եթէ ամենայնն առհասարակ կրէ յինքեան զվե-
 «հափառ զայն տխրութիւն՝ որ զբովանդակն
 «հաճութիւն առբերէ քերթածաց : » — Սա-
 կայն և այնպէս գործողութեանն եղերերգականի
 չկարօտեալ ինչ կատարածի արիւնահեղ՝ սա-
 հանջէ զայնպիսի վիճակ գործողաց, որ կարող
 իցէ սաստիկս դղրդել զսիրտ. որ և չելցէ երբէք ՚ի
 կատար, բայց եթէ յորժամ լիցի ինչ ահարկու
 և դորովալիւր, ուստի յեղերերգութեան պէտք են
 երկուց և եթ կրից գլխաւորաց, Սուհճան իման և
 Կարէհյուսէնն՝ որք և են և՛ հիմն և՛ առարկայ նո-
 ըին, և իբր երկու գործիք հոգեշարժ : — Սոս-
 կումն՝ ըստ Արիստոտելի ծագի ՚ի մեղ, երբ ՚ի միտ
 առնումք զանհրաժեշտ դժբախտութիւն՝ որ
 ստանայ մեղ զկեանս կամ արկանել զմեղ յո-
 ղորմ դառնութիւն. իսկ զկարեկցութիւն զդամք
 առ թշուառութեամբ որոյ այլում, քան որ է
 նորա՝ բարւոք վիճակի արժանի համարիմք : Քա-
 նի՞ ազդողագոյնս բերի յայնժամ յառ ՚ի բնէ
 բաշխեցեալս ՚ի մարդն ՚ի դիւրազդածութիւն
 սրտի և յերկչոտութիւն անձին՝ կնիք Մուսա-

յին Մեղսյոմենեայ (1) :

Գուժ հեծելին երթայ զիւր հետս .

'ի սպառնագին ինքն յահափետս

Հուարադէմ վերամբարձեալ .

Ընդ ո՞րք թըշուառ նմա կարեկցիլ ,

կամ յո՞յր արիւն կարմրսնեըկիլ

Սրոյն՝ զոր ունի նա առկախեալ (2) :

Իւրաքանչիւր թատրոնական գործողութեան

է ձեռնարկ ինչ՝ յորում պատահին արգելանք

գայթոսք տիրապէս սանձահարելիք 'ի յապայս ,

և ըստ այդմ բազմաց լինի անդ գնալ հա-

կառակս՝ առն ընդ ընկերի : Գլխաւորին 'ի

նոսա՝ որ յաւէտ յակճիւս զմեզ առնէ , թէ-

պէտ և ինքնին բաժանորդ է իրին՝ կամ թէ

մեքենայի ինչ ընդդէմ նորա , չէ արժան յան-

կանիլն իւր յելս ձախողակս լինիլ գլխովին չար

(1) Մեղսյոմենէ սլատկերացուցանի 'ի դիւցա-

քանից ծանր 'ի դէմս , կայծակնացայտ 'ի

կատաղիս աչաց . է զի ընկղմեալ 'ի խորին

թախծուժիւն , առեալ 'ի միում ձեռին

սուր , և 'ի միւսում զգայխոնս արքայական :

(2) La pitié la suit gémissante ,

La terreur toujours menaçante

La soutient d'un air éperdu.

Quel infortuné faut-il plaindre?


Ciel! quel est le sang qui doit teindre

Le fer qu'elle tient suspendu?

Le Génie des beaux arts.

և մեղապարտ, իբր զի անհնարին յայնժամ լի-
 նէր նմա ծնանիլ 'ի մեզ զսոսկուճի և զկարե-
 կցութիւն: Չիմրդ իցէ մեզ հարկանիլ զահի՛
 տեսեալ զժանտարար ոք, որում սպառնի կեանք
 փասակարն բարեգործաց, կամ զիմրդ ցաւա-
 կցիլ ընդ զժբախտութիւն՝ որ չէ այլ, բայց ե-
 թէ արդար պատուհաս չարագործութեան. այս-
 պիտին յաւէտ ատելի թուի քան ինքնայանդոյց:
 Նմա չէ ևս հարկ լինիլ ամենեին սուրբ և ան-
 մեղ, քանզի 'ի դէպս յայսպիտի քաջ այն յա-
 բուցեալ էր նա զառ հալածիչն իւր զսրտմտու-
 թիւն քան զառ անձնն զգորով, որ և բնուին
 անհետանայր առաջի նորա. արդարև կարի իմի
 տհաճ մեզ երևի տեսանել զջինջն յառաքինու-
 թիւնս և զկատարեալն անբժութիւն անկանիլ
 յանբախտութիւն, 'ի նուաստութիւն խոնարհ-
 ուստի և սկտք են՝ զի գործողն լիցի կամ յան-
 ցաւոր, բայց ըստ իմիք առաքինի՝ և կամ ա-
 ռաքինի, բայց ըստ իմիք յանցաւոր: Յանցա-
 ւոր՝ բայց գործէ զյանցանս, ոչ ձգեալ ինչ սո-
 վորոյթ 'ի չարագործութիւն. ուղղի նա վա-
 ղանցուկ իմի թափով կամ ըստ անսանձ բեր-
 ման կրից, վասն այսորիկ և ձախորդութիւնն՝
 յորում նայն գտանի, յարուցանէ 'ի մեզ զկա-
 րեկցութիւն, և ոչ զատելութիւն: Առաքինի՛

Բայց առաքինութիւն նորա շնորհաւ է ընդ
 թերութեան, որ և արկեալն է զնա ՚ի վրէպ
 կարծիքական կամ ճշմարիտ. ըստ այսմ և
 դժբախտութիւնն՝ որ անտի, հոգետանջ է,
 բայց ոչ խռովորար: **Ձ**վատաբախտութիւն
 յայնժամ խոկամք զբարեոյն, և ոչ զչարագոր-
 ծին զմրցանակ. քանզի զկարեկցութիւն՝ յոր
 նայն զմեզ կըթէ, չանհետէ բնաւին գարշութիւ-
 նըն՝ զոր ծնանի ՚ի մեզ հալածիչ նորին: **Ա**ռ
 հարուածն ՚ի պահուն տանի եղերերգու զուշա-
 դրութիւն մեր ողջոյն, առ հարուածն կամիմ՝ յոր
 հարկանի այրն բարեգործ, բայց ըստ իմիք մեղա-
 պարտ, և ոչ ՚ի ժանտարարն՝ որ հարուածս հար-
 կանէ զառաքինին: **Օ**րինակ արդարեւ ահարկու
 և շահաւէտ: Սակայն և այնպէս ոչ ամենայն
 ինչ աղետալի կարէ մուծանիլ յեղերերգու-
 թիւն. ինքնախողխողութեան և սպանդի չիք
 ինչ տեղի անդանօր, բայց եթէ ըստ դիպաց:
Եթէ թշնամի սպանանէ զթշնամի իւր, գործո-
 շութիւնդ այդ ոչ ստատիկս ծնանի ՚ի մեզ ըզ-
 կարեկցութիւն, այլ միայն զխիղճ սովորական՝
 յոր հարկանիմք առհասարակ ընդ մահ ամենե-
 ցուն. կամ եթէ մազաստ ոք վարէ ՚ի սպանդ
 զանձինն զհամանման, ոչ ներգործի ինչ ՚ի
 մեզ, իբրդի չիք յայնժամ տեսնել ընդդի-



մադբուծիւն յոր մղին յեզեռն մարդակորոյս :
 Արեւնակցութիւն , սէր և ընկերութիւն կարի իմն
 նպաստեն առ յարուցանելոյ զերկու կիրս եղերեր-
 վականս . օրինակ քեզ առ այս՝ եթէ փեսայ ամ-
 բառնայ սուր արիւնաթափ ՚ի վերայ հարսին ,
 հայր ՚ի վերայ որդւոյ , մայր ՚ի դստեր , եղբայր
 ՚ի քեռ : ՚ի ցոյց անդանօր ընծայի աչաց ուժ-
 զին մրցումն բնութեան ընդ կրից կամ ընդ
 անշուշտ պարտաւորութեան . և մարտադիր զի-
 մակալութեանս այսորիկ ամբօխեալ , նեղեալ
 զհոգի մեր , տարրացուցանէ ՚ի նմին զսոսկումն
 զուգորդեալ ընդ կարեկցութեան առ եղկելին ,
 հալածատանջ յորմէ պիտէր խնդրել զնորայն
 երջանկութիւն և զօրեր բարեբաստիկ :

Ձոր ՚ի տեսարան անդ վարէ եղերերգուն ,
 տանի զնա ՚ի վտանգ և ՚ի դժբախտութիւն՝ է
 զի ըստ նորայն ճակատագրի , հարգամանաց ,
 պարտաւորութեանց , պէսպէս արկածից կենցա-
 ղոյն և ըստ պաշտամանց նորա առ մարդիկ , առ
 բնութիւն և առ բարձրեալն Ստեղծիչ . է զի
 առ թիրութեանց , անխոհեմութեան , կրիցն
 ամեհի բերման , յանցանաց , և է զի ևս առ
 առաքինութեանց : Յուրուական ինչ ճշմար-
 տութեան զգեցուցեալ զբանս իւր՝ առաջի առ-
 նէ զնա յազնտս շարժածիպս և ՚ի վտանգի , որ

գիթ երկեզուկս արկանէ 'ի մեզ . զի հոգւոյն
 հարազատ հաճոյք 'ի մէջ յուզմանցս՝ աղբողա-
 փոյնս շարժիլ առանց տրտմազեկոյց ինչ վտան-
 քի : Բայց մի՛ զոր օրինակ լինէր այն 'ի կարծ
 դատիլ ոմանցս սրբաբան շուշուն համարի թէ ու-
 թիւն , առանց որոյ և մեքիանայր անտի ամենայն
 ինչ ախորժ , մի աներկեանութեան ասեմ ան-
 ձին նիւթել զհաճոյսն՝ զորոց տեսարանն եղեր-
 երդական տայ մեզ ճաշակել զճաշակ : Միակ
 աղբիւր հաճութեանս՝ համոզութիւն բնական ,
 որ տանի զմեզ 'ի վար արկանել զընդունակու-
 թիւնս մեր բոլոր : Այս կիրառութիւն՝ ընդա-
 բոյս 'ի մարդու մտաբանութեան , առնէ զմանկունս
 ագասս ահաբեկ սքանչելեաց . այս իսկ է՝ որ
 փութացուցանէ զամբոխն խաժամուժ 'ի տեղի
 պատժասարութեան չարագործաց , որ սիրելի
 երևեցուցանէ յաչս աղբաց ոմանց զտեսարանս
 արդարև սոսկալիս , զսլատերազմունս անասնոց և
 սուսերամարտիկ ըմբշաց դօտէկուաց , որ տա-
 նի զլեւ դիւրագագսն և զկակղասիրտսն 'ի նո-
 սա 'ի հանդիսարան կրից . այս իսկ է հուսկ ու-
 բեմն՝ որ ածէ ընդ իւր զամենայն զգեղ բա-
 նաստեղծութեան (1) : Ուրախալիւն գրգանք կե-

(1) «Բանաստեղծութիւնն» ասէ Նոնսըն Անդ-

նագործէ զցո-ցո (chanson), խանդն կաթողին՝
 զոչքանու-ագ (élegie), թերուծիւն մարդկան՝ զէր-
 ֆիծահի-սո-թիւն (satire), յափշտակուծիւն
 մտայ՝ զսաղէրգո-թիւն (ode), զարմացուքն՝ զբի-
 ցանքանու-թիւն (épopée)։ Իսկ յաւէտ արդոյքն և
 արժանիքն կրիցաշարժի՝ սոսկուքն և կարեկցու-
 թիւն, որոց նպաստեալ առ յառաջադիմու-
 թիւն անցից, նա՛ն աճեալ ըստ չափու վտան-
 դին՝ աստիճան քան զաստիճան խաղան յառաջ
 ՚ի կատարելապէս տիրուքն հոգւոյ։ Եւ արդարեւ
 իցէ՞ արդեօք կարեկցութեանն՝ որ յեղերերգու-
 թեան ազդի ՚ի մեզ, զի կամ արդէն փորձեալ
 է մեր զփորձ թշուառութեանց, կամ զի երկն-
 չիմք յապայս զնոցին առնուլ զչափ, հնար
 տնկահաստատ չառնել ՚ի սրտի մերում ճախ-
 րեցուցանել առ ՚ի մերձաւորէն զհարուածս ա-
 զիտից։ Յազդիլն ընդ այն, զի արդէն փորձեալ
 է մեր զփորձ թշուառութեանց՝ դործողութիւնք
 կարեկցութեան լինին լայնատարր և երկայնա-
 ձիգ։ Իսկ յանդրադարձ սակի, ընդ ազդիլ նո-
 րա առ ահի յապայս զտառտպանացն առնլոյ զչափ՝

զիտցի, ՚ի քննութեան Միլտոնին Ռախ-
 տի կորուսելոյ, և է սրտ-էստ զօրէլոյ զսո-սր-
 «Ճո-թիւն ընդ Ճշմարտութեան՝ հոչեալ զէրե-
 «հայո-թիւն յօգնութիւն քանին : »

երկիւղն, որ է իբր հիմն գործող՝ հեռի արա-
 րեալ զմեզ յամենայնէ, յորոյ 'ի ձեռն կա-
 րեմք մղիլ յանբախտութիւն՝ լինի գողցես 'ի
 խրատ փրկաւէտ : Բանաստեղծն ածէ գնոսա 'ի
 խաղարկութիւն՝ է զի յարուցանելով անմիջա-
 պէս զմեծամեծ կիրս՝ յորս յուզին մուծեալն ան-
 դանօր, է զի ևս շարժելով զսիրտն 'ի կարե-
 կցութիւն առ անմեղն եղկելի՝ որ չէ տակաւին
 գիտակ իւրումն պատուհասի . սատանօր ահա
 գործ է նորա ստեղծանել յաւէտ զկարիս և
 զսոսկալիս : 'ի միում կողմանէ՝ լռութիւն խո-
 րին, կեղծիք անընտելք, ուրուական անգորրու-
 թեան հողոյ դժնէի, 'ի միւսոյն՝ խաղաղ վստա-
 հութիւն անձինն անմեղ և դիւրահաւան, սար-
 սափս կուտենն զմեօք 'ի տեսանել մեր զմին մատ-
 նեալ 'ի դարան՝ զոր գործէ նմա միւսն : Ամե-
 նայն ինչ 'ի տեսարանին թուի հանդարտ, և
 սաստիկն կրիցաշարժ տիրեալ է արդէն հանդի-
 սացելոցն :

Բեր 'ի նախագուռն արդ մատիցուք էու-
 թեանն եղերերգականի և սկզբանց նորա :

Դժուարին իմն է գտանել զհայրենիս գործո-
 ղական բանաստեղծութեան, զի ըստ վկայելոյ
 Ակոստայ և Գարկիլասի Ա եգայ նա Չինաց իսկ
 և Պերուլացոյ էին թատրոնք սեղհական . բայց

զի ըստ Քերթողահօրս՝ Գայեանէ եւ Տայր ԻՏառաբնոց
 անբանորոշ սոսի Յուանաբան, և զի ՚ի նմա և եթ
 ծաղկեցան ամենայն գեղեցիկ դարու թիւնք, հարկ
 է անդանօր ելանել ՚ի խնդիր օկոբան և թատրո-
 նականին: Տայր Գայեանք (chants lyriques) ՚ի
 վեր երևեցան առ ամենայն ազգս աշխարհի յառաջ
 քան զայլ տեսակս բանաստեղծութեան. ծնունդ
 նոցին ձգի ՚ի դարուց անտի վաղուրեմ, թերևս
 ՚ի ժամանակէն յայնմանէ, երբ զառաջինն մա-
 տուցաւ պատարապ՝ Ասիին անսահման և անեզր:
 Յոյնք ըստ օրինակի ազգացն այլոց երգէին
 զաստուածս՝ որ ընուն զերկինս փառօք և զերկիր
 գեղեցկութեամբք անթիւ, որ որոտան և տե-
 ղան զանձրև, որ առատաբաշխ բուսուցանեն զող-
 կոյզ և զհունձս. և յելանելն իւրեանց յանշէն
 բնակարանաց և յանապատից, ՚ի կանգնելն
 զքաղաքս և ՚ի ճանաչելն արդէն զշահեկանու-
 թիւնս քաղաքական կենցաղակցութեան, յար-
 մարեալ անդրէն զքնար իւրեանց՝ նուագէին
 զբարերարս մարդկութեան, զօրէնսդիրս ասեմ
 և զլիւցազունս: Ահաւասիկ սկիզբն երգոց նո-
 ցա և տաղերգութեանց: Ծնաւ և Հոմերոս.
 ալևորդ կոյր, հանգներգուդ պսակեալ ՚ի դաբ-
 նիդեայ՝ մուտ արարեալ յառագաստս շքեղ թա-
 դաւորաց, հարկանէր զաղիս ոսկեթել քնարին,

երգէր առաջի նոցա զարարս նախնեացն՝ զորս
խնամեալ էր երբեքն Աթենայն խաժակն, և
դիւթասար ձայնիւն խլէր յաչացնոցա զարտա-
սուս ուրախութեան : — Յիրաւունս արդարեւ
նմանեցաւ շղւթն դորս քաղցրախօս՝ ծովու
լայնատարած, յոգնաչու յընթացս գետոց և
և աղբերաց, առ որս ՚ի խուռն բազմութեան
դիմեալ բանաստեղծից, ագահութեամբ ար-
դեօք ջուր ՚ի նոցունց հանիցեն զովարար (1) :
Յերդոց դորս հրաշալի (2) ծնաւ Դի-յաղնաբ-

(1) Հատասցնւք որով Դիոմիս ասաց զՀոմեր-
րոսէ, այնչափ ասլ նորս ասէնէցուէն՝ ասլայոյ և
ասն և ծերոյ, որչափ ասնուլ հարապէ է-
բասանչիւրն ՚ի նոցունց . "Ομηρος δὲ παντὶ
παιδί καὶ ἀνδρὶ καὶ γέροντι, τοσοῦτον ἀφ'
αὐτοῦ διδῶς, ὅσον ἕκαστος δύναται λαβεῖν.

(2) Այլ խալառ դադարեցան Յոյնք լսել զո-
գեալն ՚ի Հոմերոսէ . զժողովածոց ասլս
նորս քաղցր ասլաքէն հնչեցուցանէին յա-
սլայս ՚ի լսելիս հայրենակցայն՝ Հապսոդք
կամ Աարկատերգակք : Սոքա, զորոց և զհետ
գնացին յետ հարուստ ժամանակաց Տրու-
բադուրք ՚ի դարս խաչակրացն՝ չուեալ
քաղաքէ ՚ի քաղաք, միսէին ՚ի բազմութիւն
անդ ժողովրդոց՝ երգել նոցա զքերթողու-
թիւնս գեղեցիկ : Գուսանութիւնք և նուա-
գածութիւնք (Ραψῳδία) Հապսոդայդ

Կուլիւն (Epopée), հանդիսարանն աստուածոց և
 դիւցազանց : Յունին բնիկ յատկութիւն՝ էր
 միշտ անհանդիստ ինչ հետազօտութիւն, որ տա-
 նէր զնա ՚ի միոյն հաճութենէ առ այլ, ՚ի հնոյն
 առ նոր • ահաւասիկ քեզ վկայութիւն՝ թէ
 բնութիւնն կոչէր զնա ՚ի կատարելագործել զար-
 հեստս : Լսելիք և տեսանելիք են երկու ազնուա-
 գոյն զգացողութիւնք • կատարեալ զհաճոյս ա-
 ռաջնոյն, կամեցու նա կատարել և զերկրորդին :
 Ծնեալ ընդ պարզ և բարեխառն երկնաւ,
 կեայր նա ՚ի պտղաբեր և ՚ի ծաղկաւէտ հովի-

առեալ ըստ ոմանց ՚ի ձայնէդ՝ ῥάπτω, հա-
 բէճ, հարհաբէճ (զի կցկցոտ իմն հաւաքեալ
 էին հումերականքն), ասացան՝ Կարհա-
 բէրժուլիւնս, որպէս կամի և մերս Գրի-
 դոր Մագիստրոս յասելն իւր՝ « սգեալ է
 « հարհէրժուլիւնս ՚ի հարհէլոյ հարհաբաւն
 « բանս • » և ըստ ոմանց առեալ յանուա-
 նէդ՝ ῥάβδος, Գաւաղան (իբր այն, զի մինչ
 նուագէինն զքերթողականս, ունէին ՚ի
 ձեռս իւրեանց զհագնի, զմրտենի կամ
 զսարդենի), ասացան՝ Գաւաղանէրժուլիւնս
 կամ հարհէրժուլիւնս, որում և վկայէ
 նոյնն Մագիստրոս՝ թէ « որպէս ՚ի սար-
 « դենի հահակէ պար գուշով երգէին զհումերա-
 « կանս չէր իւրաւածան : »

տըս, շրջապատեալ էր լերամբք՝ որք ցամալս ամբ-
 բառնան զգագաթն իւրեանց, և լայնատարած
 ծովու՝ որոյ տլիք կատաղութեամբ հարկանէին
 զափանց. բայց տեսարանքդ այդոքիկ չէն ինչ առ-
 աչաց որոց սիրենն զանձանց զհամանմանս, քան թէ
 զբնութիւն: Հանդիսադիր լինէր նա յալդի ազ-
 դի խաղարկութիւնս և յապոյս յԱղիւմպիականս,
 յԻստմեանս, ՚ի Նեմեանս և ՚ի Պիւթեանս, և
 ընդաբոյս ՚ի նմին սէր առ նմանակցութիւն՝
 տարաւ զնա ՚ի նմանակցիլ մարդկայինս սեռի
 գործողութեանցն այլազան. այսպէս ահա էառ
 զսկիզբն իւր Բանաստեղծութեանն Գործողական կամ
 Բանաստեղծական (*Poesie dramatique ou theatrale*):
 Դիքն Որմզդական (1)՝ զոր օրինակ կեղծ է մեզ

(1) Դիքն Որմզդական, որ և Սպանդարտեա և սև
 Բաչոս՝ ծնաւ յԱրամաղղայ և ՚ի Սե-
 մելայ, և էր առտուած արբեցութեան.
 սորա էին այլ ևս անուանք, առ Յոյնս՝
 Διόνυσος, առ Լատինս՝ Bacchus և Liber:
 ՚ի պատիւ Սպանդարամետիդ կատարէին
 երևելի տօնք ՚ի Հնդիկս և ՚ի Յոյնս.
 տօնքն Հնդկաց՝ անուանեալք Թոնս զէդ-
 խո-Թեանց (*orgia*, զորս յիշէ Ավիդիոս Նա-
 զոմե ՚ի Է գիրս Աերպարանափոխութեանց,
 ՚ի գլ. Թ) տօնէին ՚ի գիշերի ՚ի վերայ լե-
 րինն Աիթերոմի: ՚ի հանդէսսն յայնուսիկ

Դիւցարանութիւնն , էած զմարդիկ 'ի կարգ
 քաղաքականութեան , ուսոյց նոցա զտնկազոր-
 ծութիւն այդւոյ , կանգնեաց քաղաքս , յաղ-
 թեաց տենայն կողմանն արևելից , ետ օրէնս
 ազդի մարդկան և գործեաց այլ սխրագործու-
 թիւնս բարերար: Յոյնք կարգեալ 'ի մեծարանս
 նորա հանդէսս տօնախմբական , իբր 'ի բա-
 զումս 'ի նուէր մատուցանէին նմա զնոխազ , և
 առ սրատարագաբերութեամբն ժողովուրդն ա-
 մենայն քրմօք հանդերձ բոլորեալ սլար՝ երգէր
 'ի սրտիւ նորա զերդ ուրախալիր, որ համաձայն
 կարծեացն հասարակաց ասացաւ՝ Τραγὸς ὠδῆ
 կամ Τραγῶδια , Ἰσχυεῖτε φησὶ καὶ ἐν ῥυθμῶν
 քαὶ ἔπειτα (1) : Յայսպիսի սաղերգութիւնս

ակմբէին և կանայք գինէհար, որք 'ի միում
 ձեռին կերոն և 'ի միւսում նիզակ՝ յորոյ
 վերայ հիւսեալ որթ կամ բաղեղն , գի-
 սաճապող և ճշաբարձ վաղէին փողոցէ 'ի
 փողոց: Յոյնք՝ մանաւանդ թէ Աթենայիք,
 կատարէին վասն նորա զմօնս Διονύσια Դիո-
 նի-«էմն», որք բաժանէին 'ի Թեթ« μεγάλα,
 կամ «καὶ ἔπειτα» Διονύσια τὰ κατ' ἄστν,
 և 'ի «καὶ ἔπειτα» μικρά, կամ «καὶ ἔπειτα» Διονύ-
 σια τὰ κατ' ἀγροῦς :

(1) Յեցցո՛ւք 'ի բանոց Անյաղթին՝ «Զ ի ողբէր-
 «գու-«էմն» 'ի «καὶ ἔπειτα» «καὶ ἔπειτα» «καὶ ἔπειτα»

մի զմիով ելևելս արարեալ , ստէպ ստէպ յա-
 ճախէին երկրպագութիւն ՚ի գղըոցս , յաւանս և
 ՚ի քաղաքս : Ընդ քարշ ապա ածէին զայլա-

« Ըստ Յուդէականի , սա ՚ի պաշտօն աստուծոյ Դիո-
 « նիւսեայ ուսեմ գրողի որմոյ , որոյ է պատ-
 « ճառ-ժիւն յայտնի . և զողբերգութիւնն սակ-
 « առնորիչ ասեն նոխարեւրգութիւնն , զի յողբեր-
 « գութիւնն իւրեանց ՚ի սկսանէն և ՚ի հա-
 « ասարեւն նոխարեւր ճեծարեալ շինէն որս նու-
 « արէն ճօնեալ Դիոնիւսեայ : » — Չանունդ
 Նոխարեւրգութիւնն (Tragoedia) ընդունին
 այժմ գրեթէ ամենեքին , ՚ի բայ առեալ
 ևեթ զԳերմանացիս միայն , որք կոչին
 զայն արդարեւ Trauriges Spiel կամ Trauer-
 spiel , սոյն է խաղարհութիւնն արարեալն ,
 որպէս և առ մեզ ըստ նպատակի իւ-
 ըում իրաւամբք լսի քերթողութիւնդ
 այդ թատրոնավայել Նշերեւրգութիւնն և
 ըստ ոմանց Ողբերգութիւնն , իբրզի յա-
 տուկ է սմա սկիզբն առեալ յաղիւսից
 կնքաբանիլ յելս յողբաթախիծս : Աւան-
 դութիւնք ամենայն և կարծիք յանգին ՚ի
 մի բան՝ թէ սարն էր զլիաւոր մասն այդ-
 սիսի նոխարեւրգութեան որպէս և այլոց տե-
 սակաց Գործաբանութեան , և թէ բացա-
 տութիւնք նորին և այլ գործողութիւնք՝
 որք մուծանէին ՚ի տեսարան , լսէին՝ Մե-
 ջարդութիւնն (Episode) : Արիստոսել պնդէ

կերպ ոք ծալտեալ ըստ Սիւղենոսի (1) հեծեալ յա-
ւանակ . պէսպէս ծամածուռ միմոսութեամբք

Թէ զերգս պարուն երգէին ՚ի հնուքս Սա-
տիրք կամ երգիծաբանք , և Կասալբոն
(De Satyrica poësi) ասէ՝ Թէ Դիդիւմոս
վկայէ զպարսն եղերերգութեան չլինիլ՝
բայց եթէ ասիւրացիքն ինչ (Dithyrambus)
և ցուցք զինարբու պաշտօնէիցն Սպանդա-
րամետականաց : Եւ քանզի հինք նուագէին
յայլաբանական արարողութիւնս ինչ զպատ-
մութիւն աստուածոց իւրեանց՝ Եզիպտա-
ցիքն զՍիւրիացիս և զհսիզայն, Սիւրիացիք
զՎիրտիզայն և զՎիտիզայն , Յոյք
զԲեմետրեայն, զՊրոսերպինայն և զԲարս-
սին , Գործաբանութիւնն չէր այլ՝ եթէ
նչ խաղաղութիւն պատմաբանական ան-
ցից ինչ գաղտնի՝ քաղեալ՚ի Դիւցաբա-
նութենէն հեթանոսաց : Բայց յետ բազում
փոփոխութեանց կորցս նա զառաջին հու-
թիւն իւր և զբնութիւն , որպէս և Մերս-
տոսել խուսովանի յայտնապէս՝ Πολλάς
μεταβολὰς μεταβαλλῆσα ἢ Τραγῶδια ἐπαύ-
σατο ἐπεὶ ἔσχε τὴν ἑαυτῆς Φύσιν :

(1) Սիւղենոս էր երգիծաբան և սիրտաբոյժ
կիսասուսուած՝ զոր ոմանք սուսպելախօսք
կարծեն չլինիլ այժամարդն Սատիր, ըստ ո-
րում և ասեն՝ Թէ բնակէր յանտաու և
՚ի լերինս . սա սնոց զԴիոնիւսիոս, որ է

և շուայտուժեամբք ՚ի ծաղր կըթէր սա զհան-
դիսացեալս, զորոյ և զհետ իւր երթային բազ-
մուժիւն մարդկան երդեցիկս կաքաւ կաքաւե-
լով. կիսոցն մըճուտեալ զերեսս իւրեանց ՚ի
դիրտ, ընթացս տալով սայլակացն անճուռնի՝
ուր նստէինն խուռնամբոխ, բաժակ ՚ի ձեռս
և Ուսաննայ Բասուիք (Ευοῖ σοβοῖ, εὐοῖ Βάχχε) ՚ի
շրթուսս՝ գովեստս հիւսէին սստուածոյն գինւոյ՝
՚ի քաղենուազէս ասա՛ յայսմանէ՛ ընդ որում
՚ի մի կան շիոժեալ և՛ խեղկատակն և՛ դիւցա-
պաշտականն, երդք և՛ դենի և՛ գինեհարու-
ժեան, և՛ կաքաւք և՛ թատերք, ՚ի խառնակու-
ժենէ ասեմ առտի՝ ծաղեցաւ Բանաստեղծու-
ժիւնն թատրոնական :

Առ ցցովքն քնարանուադօք մասն ինչ ժո-
ղովրդեան բաժանէր ՚ի դասս երկուս՝ փոփո-
խակի առնուլ ՚ի բերան զտունս իւրեանց, էր
զի ևս երկոցունցն միաւորեալ՝ նուազէին հա-
մաշունչ. և զի հանդիսախմբուժիւնն ամենայն
չէր՝ բայց եթէ գուսանարկուժիւն, առ այլա-
զանուժեանն անդանօր տեղի ունելոյ, ՚ի դէպ
համարեցաւ մուծանիլ անձն գործող (acteur, մեյն-

Բարբոս, և ՚ի ժամանեւն նորա ՚ի տիս չափա-
հասակ՝ գնաց ընդ նմա ՚ի Հնդիկս յաշ-
խարհառուժիւն :

արայուս (սապ) : Այս գիւտ հեղինակեցաւ 'ի
 Թեապիսէ : Ըստ օրինակի Ողիւմպիականայն
 չուէր սա գեղջէ 'ի գեօղ ' նուագել զսխրագործու-
 թիւնս դից Որմգդական, և ծափիւն ունկնդրա-
 ցըն հարկանէր նմա մեծեւանդն (1) : Անուանի
 քանաստեղծիս այսմիկ վիճակեցաւ հնարել և
 զոչ հայեցեալս առ սատուածն գինեհարու-
 թեան . սա անջատեաց զպատմաբանութիւն
 իւր 'ի մասունս յոլով առ ստէպ հատանելոյ
 զերդսն, և նովաւ հաճութիւն մեծ ընծայելոյ
 այլազանութեան : Այս իսկ է՝ որ ժառանգե-
 ցոյց սմա զհաւանութիւն ժամանակակցայն և
 յետնոցն բազմաց :

(1) Տարածայն են կարծիք քանապիտաց զհեղի-
 նակէ գործողական տաղերգութեանցդ :
 Ստանլևս յառաջ բերէ զբանս դպրոցա-
 կանի ուրուք վաղուրեմն՝ թէ 'ի ժամանակս
 Որեստեայ Թովմաս անուն որ առաջինն ցու-
 ցեալ է Յունաց զխաղարկութիւնս թատրո-
 նական, ὅς πρῶτος ἐξεῦρε τραγῳδικὰς μελω-
 δίας : Ըստ Սուխայ Թեապիս է եօթներորդն
 'ի կարգի եղերերդուաց, և առաջինն 'ի նո-
 ցանէ է Եպիգենիոս ոմն Սիւկիոնացի, որ կա-
 ցեալ է դարու միով յառաջ քան զԹեա-
 պիս : Եւսեբիոս յիշէ զանուանս այլոց ա-
 ռաւել ևս հնադունից . 'ի քանիդ յայդմիկ

Հետևորդք սորա Քերիդէս և Փրինիկոս ոչ
 նպաստեցին ինչ յառաջադիմութեանն եղերիւ-
 դականի, բայց յԱսքիւղեայ՝ որ քաջ ՚ի կիրար-
 կեալ զգիւտ թեսպիսի, ստեղծ վարվաղակի
 զխաղարկութիւն թատրոնական, ուրանօր ևս
 ընդ միոյն եմոյճ անձինս երկուս : Գործողու-
 թիւն սորա է ըստ իմիք դիւցազնական • անդա-
 նօր է մեզ տեսանել զամենայն զհիմն վսեմու-
 թեան՝ զլուսաբանութիւն իմաստից, զճար-
 տարութիւն, զշարժումն կրից՝ իւրաքանչիւրում
 բաշխ ըստ իւրում բնաւորութեան և պարտու-

է ինքն Պղատոֆն, և ՚ի նորոցս՝ Գրողդէի
 (Initia historiae Graecorum litterariae. Pars 1):
 Բայց որովհետև չեն ինչ ՚ի գրականութեան
 երևելի վորոց զյիշատակ գտանեմք առ մա-
 տենագիրսդ, Հովրատէս իրաւամբք ընծա-
 յէ զհեղինակութիւն ամենայնի՝ հռչակեալն
 թեսպիսի :

Ignotumque tragicae genus invenisse camoenae
 Dicitur, et plaustis vexisse poemata Thespis,
 Quae canerent agerentque peruncti faecibus ora.
 (*Ars poëtica*).

Thespis fut le premier qui, barbouillé de lie,
 Promena par les bourgs cette heureuse folie;
 Et d'acteurs mal ornés changeant un tombereau,
 Amusa les passans d'un spectacle nouveau.

Boileau. *Art Poët.*

պատշաճ ճոխաբանութեան : Ըստ այսմ և
 պարն՝ որ ՚ի սկզբանն անդ էր իբր հիմն տեսա-
 րանի, եղև յաւելուածոյ և միջանկեալ խաղար-
 կութիւն, զոր օրինակ և սայն էր յառաջագոյն :
 Եւ որպէ՞ս զի սոսկալիք արդարև կուտին զա-
 ջօք ընթերցանելեացն, ՚ի տալն նորա խղճի
 մտաց ամբառնալ զձայն իւր ՚ի տեսարանի և
 յածելն յանդիման զիշխանսն դժոխոց . ուստի
 որպէս և կարծեն բազումք, երևի՛ թէ ըստ
 Եսթիւղիայ սոսկուծն և կարեկցութիւն են
 կիրք շարժելիք յեղերերգութեան, որպէս և
 զարմացուծն ՚ի բանաստեղծութեան զիւցազ-
 նականի : Քննողութիւն հետեանաց՝ զոր այլ
 և այլ կիրքս այսոքիկ ծնանին ՚ի հանդիսացեալս,
 յարտասուս նոցա և ՚ի ծափահարութիւնս, քաջ
 այն նախաստեաց նմա առ գիտելոյ զամենայն՝ որ
 պիտանին էր իւրում արհեստի . նա եղ զառա-
 ջին հիմունս, զառաջին կանոնս եղերերգութեան՝
 բայց բիրտս և անտեղիս : Աեցեալ ՚ի սկզբան
 անդ ռամկապետութեան և առաջնորդեալ ընդ
 դրօշակօք քաջայն յԱթէնս Մելտիադեայ և
 Թեմիստոկղիայ յերևելի պատերազմունան Յու-
 նաց՝ ՚ի Մարաթոնեան կամիմ և ՚ի Սաղամի-
 նեան, յաճախեաց նա զմարտաձիգ աշխոյժ իւր
 յամենայն շորագրածս իւր եղերերգականս, մինչև

Գնորին Եօթն զօրագլուխս 'ի Թեբե
 անդանդաղ համարիլ բազմաց ծնունդ Արեսի:
 Քերթուածք Եօթիւղեայ՝ որպէս ասէ Սուխա,
 էին թուով իննսուն, իսկ ըստ Փաբրիկեայ ա-
 լելի քան զհարիւր. առ մեզ ժամանեցին միայն
 եօթն՝ յորոց միջի և եղերերգութիւնն Եւմե-
 նիդայք մակադիր, որոց պար, ասեն, բազկա-
 ցեալ յօձահեր դից սանդարամետականաց, յա-
 ռաջին անդ խաղարկութեան իւրում կրթեաց
 զհոգիս հանդիսացելոցն յանհնարին սարսափ,
 մինչև մեռանել բազում մանկանց, և յառաջ
 քան զժամանակն լուծանիլ կանանց 'ի յղու-
 թենէ: Շարագրածք նորա, կնքեցից զբանս, դե-
 ռահաս են, և յամենայն մասունս իւրեանց արդա-
 րև վեղճցկահիւս, բայց տակաւին դուրկ յուղղու-
 թենէ, զոր արուեստ և ժամանակ յարեն 'ի
 դիւտս նորանորս. թափուր է առ յայնցանէ ճըշ-
 մարտանմանութիւն՝ զորոց և բանաստեղծք իսկ
 պարտին երթալ զհետ ևսև 'ի կեղծիս իւրեանց:
 Հասուցանելն զեղերերգութիւն ցայդպիսի ծայր
 կատարելագործութեան՝ էր գործ Սոփոկղեայ:

Սոփոկղեայն ընդաբոյս երջանկաւէտ ընդու-
 նակութիւնք եղերերգավայելք, բեղմնաւորու-
 թիւն հանճարոյ, ճաշակ քաղցրահամբոյր, տար-
 օրինակ դիւրութիւն յասացուածո՝ զարդարի-

ցին գոգին եղերերգականի 'ի կանոնս վայելչո՞ւ-
թեան և ճշմարտանմանութեան • զդեցաւ նա 'ի
զնացս իւր զազնուութիւն, զհաստատութիւն,
տարազրեցան առ 'ի նմանէ այտուցութեան ամե-
նայն կամ վեցացութեան, և յաւէտ հրէշակերտու-
թիւնն այն՝ որ խանգարէ զհաւաստեալն դիւցազ-
նական : Յընթացս ամբողջ գործողութեան
քաջ յինքն ձգէ Մեղուդ Ատտիկեան (1) ըզ-
սիրտս ընթերցանելեաց, և մեծաջան իմն աշխատ-
է եղեալ 'ի տաղաչափութիւնս իւր յամենայն :
Փիլիսոփոս՝ խորամուխ գիտակ մարդկային սրտի,
հմուտ նկարիչ կրից և բնաւորութեանց, ճար-
տար անօրէն գործողութեանց և նոցին ընթա-
ցից, պարզամիտ և ազնուախօս 'ի բանս իւր,
Սոփոկղէս չէր՝ բայց եթէ Հոմերոս եղերեր-
գութեան : Քանքար նորա և վաստակ ամբար-
ձին զնա յայն ծագ, որ զամենայն զքերթուածսն
արար մեզ յօրինակ և 'ի կանոն : Ամայ իննանից
ութնևտասն անգամ յաղթական գտաւ նա առա-
ջի ամենայն նախանձաւորացն յիւրում արհեստիւ
Աարձ, ասեն, զոր վճռեալ էին հատուցանել
նմա վասն վերջին եղերերգութեանն, խնդամա-

(1) Այսպէս առհասարակ կոչէր զնա Յունաս-
տան ամենայն :

ատոյցս մահաբեր եղև նմաք **Չ** առ ամենեքումք քն
 այլովք զպատուականագոյն նորին յօրինուած
 ճակատագրեալ **Ի** դիպոս չէ արժան զատիլ,
 բայց եթէ իբրև զճշմարտիւ բանատեղծականս
Ահա քեզ անզոյդ եղերերգութիւն **Յ**ուսաստանիւ
Ե- ՚ի սոցանէ դարձեալ որ զձե՛ծ յաշխմանէ գովու-
 թեանցն երկեալ ասին, **Ե**- ՚ի պիղծող ճանաչի ոչէր-
 գան • զի գորովագոյն իմն եւ գեղեցիկայարժար դի-ցազ-
 նանն ոչէր գու-թեմքսն որ ստիպոցուցեալ զգի-
 ճասուսցն, անջինջ յիշատակաւ ՚ի նորին եւ զխո-
 սուցն ասնանակեալ անճարար էլ ոչ արժանաւոր յի-
 շելոյ արուեստ (1): **Մ**եծանունս **Ե**ւրիպիդէս, որ
 իրաւամբք արդեօք ժառանգեալն է **Ա**րիստո-
 տելէ զմականունդ **Τραγικότατος γε τῶν πικ-**
τῶν, քաջ էղերերգու չան զմեծայն բանաստեղծս,
 խորամխեալ յսկզբունս **Ա**նաբասագորայ՝ որում
 և էր իսկ աշակերտեալ, յաճախեաց ՚ի յօրի-
 նուածս իւր զընտիր ընտիր անաճս բարոյականս
 և զխրատս անխտիր առ ամենեսին, յաւէտ առ
 կանանցն ազդ թուլամորթ • որով և **Ա**նասեաց
 (**Μισογύνης**) անուանեցաւ ՚ի քաղաքակցացն
 համայն • **Ա**ւլցեալ ՚ի զգացմունս մարդասիրու-
 թեան, ընկերութեան և կարեկցութեան առ

(1) Խորեն • յԷ գիրս պիտ • օրին • Գ :

մերձաւորս տառապաղին, քաղեաց սա զստու-
 տիկն կրիցաշարժ յախորժակաց անտի, որք զնչ
 կամացն զմեղս ևս ահագին առնեն յաչս որոյ գոր-
 ծէ զայն, և զդժբախտութիւնն ևս ծանրա-
 բեռն: Բանաստեղծս այս դիւրագորով և քաջ
 կրիցաշարժ, բայց ոչ այնչափ վսեմաճախր և
 հզօր որպէս Սովոկղէս, ՚ի լոյս հաճ զիննսուն և
 երկու եղերերգութիւնս, որք և ամենեքին հա-
 ւանաժառանգ եղեն յիւրոցն համաշխարհակցաց:
 ՚ի բազմութենէ անտի քերթուածոցն հինգքն
 և եթ հին պսակեալ. բայց յաւէտ արժանագով է
 Եւրիպիդէս և բազմահաչակ, զի Սոկրատէս
 առաջիկայ միշտ լինէր ՚ի թատրոնի անդ առ խա-
 զարկութեամբ յօրինուածոց նորա: Առ յապայս
 ստիպեալ յաներախտագիտութենէ քաղաքակցաց
 իւրոց և յերգիծաբանութեանցն Արիստոփանայ՝
 որ շարաշար կեղէր զնա ՚ի կատակահիւսութիւնսն,
 թողեալ Եւրիպիդէայ զհայրենիս իւր զԱթէնս,
 մեկնեցաւ յարքունիս Արքեղայոսի Մակեդոնաց-
 ւոյ: Ասանջական էր թագաւորդ այդ առ արս
 գիտնականս, ուստի և ընկալեալ զնա առ ինքն և
 պսակեալ առատաձեռն պարգևօք, ամբարձ զնա
 յառաջին աւագոյթ ահրութեան, և զկնի մահուան
 նորա կանգնեաց նմա մահարձան հոյակապ ՚ի գե-
 ղեցիկ դաշտագետնի, զոր հոսակից առողանէին եր-

կուց աղբերակաց սահանք հանդարտիկ: Աքան-
 չելահրաշք և մեծամեծք ապաքէն ծնան 'ի միտս
 բաղմաց ընդ շանթահարիլ գերեզմանին բա-
 նաստեղծիս, իբրզի սմին նման անցեալ էր
 անցք ընդ Արդուրկայ: Աթենացիք հրեշտակու-
 թիւնս յայնժամ առաքեցին 'ի Մակեդոնիա՝
 ունիլ զգիական նորա, բայց ոչ եղեն ինչ յայդմ
 կամաղիւտ սակայն և այնպէս ընդ աշխարհասը-
 փիւռ լուր մահու նորա քրձաղգեաց եղեն քաղաքք
 ամենայն, և 'ի յիշատակ նորա յաւէժական հաս-
 տեաց նմա Աթէնք դամբարան մի շքեղաւոր:

Ձկնի շնորհալիր եղերերգուացդ փառազարդ:
 Յոյնք հարստահարեալ 'ի մասնաւոր խռովու-
 թեանց աշխարհի իւրեանց և նեղեալ յայլաղ-
 գեաց, ոչ գտան ինչ երևելի 'ի դպրութիւնս:
 Հռովմայեցիք յաղթականք Յունաց՝ տուեալ
 զանձինս 'ի պատերազմականութիւն, յըմբշա-
 մարտութիւն սուսերախաղաց և 'ի ձիւնթացու-
 թիւն, սակաւահոգ կացին զհաճութեանց բանի
 և ճաշակի, ուտտի և եղերերգութիւն նոցա ոչ
 հանդիսացաւ բնաւին յառաջադէմ, նա՛ բաղմօք
 յետադաս եկաց քան զՅունացն: Բնութիւն,
 Համբրոս և բերմունք ժամանակի քաջ նպաս-
 տամատոյց եղեն 'ի կատարելագործել զքեր-
 թուածս վերջնոցն. 'ի դիւցազնաբանութենէն

'ի փոխ էառ եղերերգութիւնն նոցա զսքանչե-
 լիս իւր, 'ի հաւատոցն զվսեմութիւնն խաւար, 'ի
 հանգամանացն մշտադէպ զնպատակ քաղաքական
 կենցաղաւարութեան, 'ի ծիսից ժողովրդեան
 զչքեղութիւնն բնութեան՝ որ գեղեցիկն է 'ի
 բրաութեան իւրում : Ա՛չ մարթանայր ինչ
 առաւել երկեղուկս արկանել 'ի սիրտ մարդոց
 քան զգինն Յունաց. նոքա հաւատային 'ի գիշե-
 րային երևոյթս և 'ի խրտուիլս. նախազգացմունք
 նոցա և երազք գուշակէին զանհրաժեշտ հարուա-
 ծըս երկնային բարկութեան, պատգամք նոցա էին
 ահեղ գործիք կամայն դից իւրեանց. քուրմք
 նոցա երկնային շանթս 'ի ձեռս՝ խռով հարկանէին
 ամենեցուն : Ի՞բր ահարկու է մեզ Տիրեսիոս
 զրկեալ յաչաց, բայց բաշխեալն 'ի վերուստ 'ի
 նախապատմութիւնն ապուսնուոյ. ի՞բր սոսկալի են
 Ամենիդայք կերոն 'ի ձեռս և բազմութիւնն օձից
 'ի հիւսս հերաց, զորոց զհետ երթան կատաղիք
 սանդարամետից, հալածիչք մեղսպարտի : Ա՛հ որ
 ընցըն վթէատրոն Յունաց յողբս և յարհաւիրս
 անհնարին. յաւել առ այս և զհաւատս նոցա
 յԱստուածութիւնն ահեղ և անզննին, որ 'ի
 ձեռս իւր սափոր ճակատագրական վիճակի մա-
 հացուաց՝ դնէր նոցա օրէնս անսուս և սրբա-
 զան, որ առ ամենաիարողութեանն օրհասաւ ճիւղ

պատահարաց զգողանի հարկանէին ժողովուրդք
 և արքայք, անմեղքն անկանէին 'ի յանցանս և
 առաքինիքն յանբախտութիւնս բարձրագիմի :
 Մի տարագրեացի առ 'ի դիւցապաշտականէդ և
 նպատակն քաղաքական : Առաւարտութիւն Ա-
 թեհացեաց 'ի թեզուսէ անտի մինչև ցԱողբոս և
 'ի Աողբոսէ մինչև ցՊիսիատրատէս, օրէնք Սո-
 ղովնի՝ որք ընդ միապետութեանն մուծին յաշ-
 խարհ անդ զառմկապետութիւն, և վառահիւս
 պասկքն՝ զորս կապեցին զդէսովք նոցա երեւելի
 պատերազմունքն թերմոփիղեան, Մարաթով-
 նեան, Սաղամինեան և Պղատեան, ետուն նոցա
 առ մեծագին ունիլ զազատութիւնն՝ նա՛ գեր-
 քան զկեանս իւրեանց, և զանձինս առ
 վերնագոյնս քան զմարդիկ, կամ լաւ ևս ա-
 սել, առ ճաշխարհիկս յարարածոց : Ըստ այդմ
 և տեսարան նոցա՝ նրբութեան խորհրդոց և եթ-
 էր և քաղցրախառն խորամանկութեան, ընդ ո-
 բում զուգորդեալն էր միշտ կենսակցութիւն
 քաղաքական . անդանօր միջամուտ առնէին
 նոքա, ո՛վ շահաւէտ խրատուդ մարդկու-
 թեան, զարքայս իսկ իւրեանց, զգաթանսն՝ առ
 շրջելոյ 'ի վերայ նոցա զատելութիւն ժողովուր-
 դոց, և զբարիսն՝ առ յուշի ունելոյ զառաքի-
 նութիւն և զպարզմտութիւն իշխանացդ, որք

քաժանորդ էին կառավարութեան : Առաջին
 ժամանակացն եղերերգութեան Յուսիպոսի
 կրթել զուսկնդիրս իւրեանց 'ի զարմանս, յու-
 րախոսութիւն և 'ի յափշտակութիւն մտաց . բայց
 յապայս փորձիւ տեսին զկիրսդ , զի զօրէն փայ-
 լատականց՝ որք արագ ոստիցեն և ընդհուպ կո-
 րիցեն առաջի աչաց , ոչ տարրացուցանէին ինչ
 տալաւորութիւն 'ի հոգիս նոցա : Խորամուկ
 զննեալ զբնութիւն մարդկային , ծանեան զայն
 լինիլ փոքրոգի քանժէ հաստատուն , երկշտ
 քանժէ քաջապինդ , աղէտասար քանժէ բարօ-
 րախնդիր . մուծին 'ի տեսարան անդ զթշուա-
 ռութիւնս մարդկան , չարկեալ միանգամայն 'ի
 մոռացօնս , զի ոչ միակերպ շարժեն զհանդի-
 սացեալն թշուառականք ամենայն : Տեսին՝ զի
 քաժանորդ է նա վշտաց առաքինւոյ , այլ ոչ
 յանցաւորի . տեսին՝ զի կարեկցինա 'ի տեսանել
 իւր զթշնամի վանեալ և 'ի սպանդ վարեալ 'ի
 թշնամւոյ , բայց ընդ տեսարան ասեղ , երբ
 բարեկամ սուսեր ամբառնայ 'ի վերայ բարե-
 կամի , հարկանի նա զահի և թորէ զարտօսը դառն :
 Չայս փորձ փորձեցին բանաստեղծք , և նպատակ
 եղերերգութեան ելև կրթել զհոգի նորա 'ի սոս-
 կումն և 'ի կարեկցութիւն :

Իսկ եթէ յաղագս Հռովմայեցւոց են մեղ

քանք, չի ք ինչ արժանայ իշատակ առ հեղինակօքն
 Յուսայ: Չկնի Լիվիոսի Անդրոնիկայ՝ որ առա-
 ջինն էր յեղերերգուս նոցա, զկնի Նիվիայ, Պոմ-
 պոնիայ և այլոց՝ որք բուռն հարին հնչեցու-
 ցանել զփառանքս քաննայ, Սենեքա դաս-
 տիարակ կայսեր Ներոնի: Բայց զկնի Սոփոկղեայ
 զեղերերգութիւն իւր Իդիպոս, բայց ըստ Բա-
 թէօի քանի Յուսին թուի մարմին զեղեցկա-
 յարմար և չափակից յամենայն մասունս իւր, այն-
 չափ և Հուլմէացւոյն է հրէշ և անդրիք հաշմ-
 անդամ: Սոփոկղէս մեծամեծս առնու զթել
 քանիցն • աստանօր քեզ զառաջեալ արքայ ՚ի
 դրունս առագաստի և ժողովուրդ իւր կոծա-
 բարձ՝ լռիկս ուշադիր նմա, անդանօր սեղանք
 զոհարանաց ուղղեալ առ աստուածս • Սենեքա
 յանդիման առնէ զԻդիպոս եղեալ ՚ի բերան նո-
 րա զանցս թախծագին՝ զորս և տայ նմա պատ-
 մել կնոջն, որպէս ճշդապահանջ լինի պեր-
 ճախօսութիւն կանոնազարդ: Սոփոկղեայն ամե-
 նայն տող է պիտանի, իսկ Սենեքայն բազում
 ինչ աւելորդ և ծանրացեալ ևս զարդաբեռն •
 սա խօսի և ի թ զպատգամաբանից, շպատարա-
 քաբերութեանց և կարգայ միայն զստուերս, իսկ
 նա ՚ի ներգործութիւն ածէ զամենայն:

Անշտասան դարուց պէտք են մեզ մնալ այլ

ևս 'ի տեսանել զնոր փայլիւն եղերերգութեան: 'ի խաւարամած գիշերոյն աշխարհամալ տղխտութեան մերկացաւ առաւօտ թատրոնականին ընդ երկնաւ իտալիոյ: Յամի 1544 խաղարկեցաւ 'ի Աիկենտիա Տրիսին արքեպիսկոպոսի եղերերգութիւնն **Սուփոնիզբէ**, յետ անկման կայսերութեանն Հռովմայեցւոյ առաջին յեւրոպիա: Չկնի սուղ ժամանակաց հրամանաւ Պապին Լեոնի տասներորդի խաղարկեցաւ 'ի Փլորենտիա **Րովսամոնդա** Րուչելայի: Իտալացիք կարի իմն գերազանց համարին զ**Մերովպէ** Մափիէի և զեղերերգութիւնս Մետաստասիոսի՝ նա քան զ**Տովրիամոնդա** Տասոսի, անմահ հեղինակի **Ազատեալ Երուսաղեմայ**:

Գողղիացւոց առ այսու ժամանակաւ էին և եթ խաղարկութիւնք ծաղրաշարժք, անպաճոյճք և անձևք: Ժողել զառաջին եմոյճ 'ի թատրոն նոցա զկարգ եղերերգուացն **Յունաց**: Գարնիէ, Հարդի, Մերէ, Րոտրու, թէպէտ և ոչինչ նմանութիւն բերեն որոց կամեցանն երթալ զհետ, սակայն և այնպէս 'ի բարւոք համարի էին բազմաց: Ընդ երևիլ Պետրոսի Աորնելի անուանք նոցա ամենեցուն եղան անյուշ, և փառք նոցա անհետացաւ ստուերամած քեր-

Թուածք նոցա չեղեն՝ բայց եթէ անհետեթ ,
 զուրկ ՚ի գործողութենէ և ՚ի կանոնաց :
 Քանաստեղծս այս սկանաւոր , որպէս և քաջ
 այն կրեալ էր նորա զայդ անուն առ ոսկեղէն ևս
 դարու Աթէնեանն և Հռովմէական լուսաւո-
 րութեան , ընդուտ էանց ընդ թերի առհա-
 լատչեայ մատենագրաց իւրոց նախորդաց : « Ար-
 ճարե՛ ասէ Րասին (1) , ուրանօր արդեօք իցէ
 « մեզ հնար տեսանել զքանաստեղծ՝ յոր իցեն
 « ՚ի բնուտ բաշխեալ միանգամայն ձիրք մե-
 « ճամեծք , և զուգորդք նոցին արուեստ , զօրու-
 « թիւն , դատողութիւն և ոգի : Ձի՞նչ աղ-
 « նուութիւն և կարգ յառարկայս , զի՞նչ բուռն
 « ազգողութիւն կրից , իրպիսի անբծութիւն ՚ի
 « զգացմունս , իրպիսի խտիր հրաշալի ՚ի բնաւո-
 « րութիւնս . քանի՞ թագաւորք , իշխանք և ախո-
 « յեանք այլ և այլ ազգաց՝ միշտ յանդիման ա-
 « ճեալ ՚ի տեսարանի , որպէս և էինն ճշմարտիւ ,
 « յամենայնի հանգունատիպ բնութեան , և ոչ եր-
 « բէք համանման միմեանց : » Աորնեւ քաջ յանձին
 կրէ և՛ զգողտրիկն և՛ զշարժիչն , և՛ զահարկուն
 և՛ զընտրելականն . բայց որ յաւէտ նմա է

(1) ՚ի բանի անդ արտասանեալ ՚ի Ղեմարա-
 նին Գաղղիոյ :

յատուկ առաւել քան այլում քանաստեղծի ,
 վսեմութիւն և յանդդնութիւն իմաստից՝ որք
 բերկրախառն յափշտակեն զմեզ ՚ի զարմանս, և
 առնին զթերութիւնսն, եթէ են նորա ինչ ինչ
 յայդպիսեաց , արժանիս նախաձեռնութեան
 առ գեղեցկութեամբք այլոց մատենագրաց :
 Այն ինչ Աորնեւ ՚ի հանդիստ փութայր յարե-
 մուսս կենցաղոյն , ծաղկեցաւ ՚ի Գաղղիա ե-
 րևելին Րասին՝ անմահ առնել զանուն իւր ՚ի
 մէջ յիշատակարանացն Գրականութեան :

Ծնաւ Յովհաննէս Րասին ՚ի Փերտէ—Մի-
 լոն ՚ի 21 դեկտեմբերի յամին 1639: ՚ի դպրա-
 տան Քովէի ուսաւ Լատիներէն, և ընդ դաստիա-
 րակութեամբ Աղաւղեայ Լանգելոտի, եկեղեց-
 սլանին Պորտ—Րոյալի , պարապէր լեզուին Յու-
 նական: Այրս այս մատենագիր յլնթացս տարւոյ
 միոյ պակասօք ինչ ևս հասոյց զնա յաստիճան
 վսեմապանծ , մինչև քաջ ՚ի միտ առնուլ նո-
 րա զԵւրիպիդէս և զՍոփոկլէս : Րասինի ՚ի
 տիոց իւրոց անտի ուխտաւոր էր կարի ի՞նչ
 կենդանի ճաշակ Քանաստեղծութեան . որոց
 և հաճոյք սրտին՝ երթալ յանտառս , որոց
 լուութիւն խորին քաջ նպաստամատոյց է մտա-
 ծութեան, և յառանձնութեան անդ տալ զանձն
 յանդուլ վերձանութիւն եղերերգուաց Յու-

նայ՝ զորոց առաջինն համարձակեցաւ յեղուլ ՚ի
 քարքառ իւր զոճ և զխօսիցն եղանակ : Գեղե-
 ցիկս տողէր Լատին ոտանաւորս, յամենայն ի նմա-
 նակից զուով ականաւոր քանաստեղծիցն Հաով-
 մայ, Հովրատեայ և Աիրգիլեայ : Այն ինչ յա-
 ւարտ հաճ զՓիլիսոփայութիւն իւր, աշխարհա-
 ճանաչ հռչակեաց զնա տաղերգութիւն իւր մա-
 կագրեալ՝ **Համբարու Սենայի** (La Nym-
 phe de la Seine—1660) : Ասան պատուականու-
 թեան քերթուածոյս առ այլովքն ամենեքումքք՝
 որք նոյնօրինակ յօրինած կային յամուսնութիւն
 արքայի, Բասին ընկալաւ յառաջին նախարա-
 րէն Գաղղիոյ ՚ի Գուլբերտէ հարիւր ոսկի դա-
 հեկան, և զկնի ժամանակաց ինչ նշանակեցան
 նմա առ ամ լտերք վեցհարիւր : Այս յաջողուած
 առաջին ետ նմա գլխովին անձնատուր լինիլ
 ՚ի Բանաստեղծութիւն, և հողուով չափ սի-
 բեւ զուսումն **Օրէնսգիտութեան** և **Աստուա-**
ծաբանութեան : Յամի 1664 ՚ի վերադառնալն
 իւր ՚ի Փարէզ ընտելացաւ նա Մոլիերի և Բօա-
 լօի՝ քանաստեղծիցն փիլիսոփոսից, որք հազուա-
 գիւտ ասին ողիք հանճարեղ՝ առ Լուդովիկաւ
 չորեքտասաներորդաւ : ՚ի վեր երևեցան յայն-
 ժամ բազմութիւն քերթուածոց նորա յաճա-
 խեալք ՚ի դեղս չափաբերութեան, և ամենեքին

նորա ծայրացեալք յաւէտ յաշխոյժս մտաց և
 ՚ի հոգի բանաստեղծական : Եղերերգութիւն
 նորա Աղեքսանդր (Alexandre)՝ որ զառաջինն
 խաղարկեցաւ յամի 1665, ՚ի պատուականու-
 թեան իւրում կարի իՅն հեռի է ՚ի քերթուա-
 ծոց նորա յետնոց, ուստի և ոչինչ անուն բարի
 ժառանգեաց հեղինակն նորաիթիթ . և արդա-
 քև ՚ի կշռադատել մեր զնոսին՝ քաջ ՚ի դէպս
 ապաքէն լինի մեզ ընթեռնուլ ՚ի լսելիս Բասի-
 նի զայս տաղ Համերեան .

Որչափ ոք նըստեալ առ ամիրն ծովու, յա-
 հեղ ՚ի ժայռէ

Սըփուեալ ՚ի յեթերսն խոր դատարկութիւն
 միայն տեսանէ,

Այնչափ և ընդ այն ՚ի ճախըր ընդոստ ճախ-
 րեն ; սըլանան

Բարձրը ՚ի ճակատ նըժոյղք անմահից Ողիւմ-
 պէական :

Գովեստք՝ զորս հիւսեաց զգլխով նորա Անդ-
 րովմաքէ (Andromaque) իւր, էին՝ բայց եթէ
 մարդեւոյզ իՅն կուտեալ շողոքորդութեամբ .
 գոգջի՛ք և նորանոր յառաջադիմութիւնք, զորս
 մեծաշուք արարեալ էր Աորնել յասպարիզի
 գրոց, դժուարաւ էին ՚ի ձեռս բերելի, իբրզի
 ՚ի զարգանալ արդէն արուեստի ինչ կամ մա-

կացուածեան , առ քաջ յառաջ խաղացուցանե-
 լոյ զսահմանս նորին պէտք են նրբամտութեան
 և հանճարոյ, առաւել քան որոյ կարօտեցանն հե-
 ղինակք առաջին: **Բրիտանիկոս** (Britannicus)
 յորում գործ է, ասէ Առլտեր, տեսանել զազ-
 դու ոճ Տակիտայ ՚ի տաղաչափութիւնս Արի-
 գիլեայ , չեղև ինչ ընկալեալ մարդահաճու-
 թեամբ: Ինքնին խոստովան լինի Րասին ՚ի յա-
 ռաջաբանի անդ՝ թէ բազում ինչ քաղեալ է
 ՚ի Տակիտայ , զոր և քարոզէ աշխարհի՝ հմուտ
 նկարիչ հնութեան . բայց յաւէտ դրուատք
 բերին հռչակահամբաւ պատմագրիս այսմիկ ,
 զի մինչ նմանակցիլ սմա եղեալ է նա ՚ի մտի,
 հարուստ մի կացեալ է ՚ի խոնարհ , և զի հե-
 տևողութիւնք իւր երբեմն ևս քաջայարմարք
 ըստ տանելոյ թարգմանութեան ՚ի բանս տա-
 ղաչափականս և տարբեր ոգւոյ կամ յատ-
 կութեան լեզուացդ երկաքանչիւրոյ , են ըն-
 տիրքն ՚ի հատուածս Բրիտանիկայ , ուրանօր
 ըստ Րասինի « Գրեթէ չիք ինչ իմաստ գե-
 « ղիցիկ , զորոյ Տակիտայ չիցէ ՚ի նմա ծնեալ
 « զգաղափարն նախատիպ : » — Աստանօր չեն
 ինձ պէտք երկարածիգ բանից զշարագրա-
 ծաց նորա ամենեցուն . հերիքասցի ևեթ ասել,
 եթէ ըստ ճակատագրի հիւսուածոց ընտրելա-

դունից անկան նոքա ընդ դատաստանաւ տղէտ
 և դառնալեղի պարսաւադէտայ՝ ըստ բերելոյ
 ժամանակին, բայց յապուշ կըթեցին զարդա-
 րե քաջահմուտս, որոց ընտրողութիւնս բարի
 ընդհուպ կամ անաբան պանծայ սիդաճեմ առ
 անկիրթ ճաշակաւ, և որոց միայն ձայն ճշմար-
 տաքարող՝ անդրահնչիւնս իմն լսելի լինի ՚ի յա-
 պագայս : — Ընդ ամս վեց ՚ի լոյս ածեալ եղեր-
 քողութիւնս հինգ, յորոց ՚ի յետնումն դե-
 ղեցիկս ակներև մեզ ընծային վայելչասիւսու-
 թիւն և սերճ ընտրութիւնս ամենայնի՝ որ վսեմն
 է և խափանիչ դժուարալուր նոյնաձայնու-
 թեան, ՚ի պարգև մեծ պարգևեաց բանասիրա-
 կանն պանծալի դպրութեան հայրենեաց՝ զեղեր-
 քողութիւնս իւր **Փեդրէ** (Phèdre) : Քեր-
 թուածս այս թատրոնական նախամեծար դատե-
 ցաւ առ այլովք ըստ բանից իսկ Րասինի . զի
 որպէս վկայէ բանաստեղծս այս գողտրական,
 եթէ ընթեռնուլ ոք կամիցի զկատարեալն ՚ի
 հիւսուածս նորա, ընթերցցի զ**Փեդրէ**. Բայց կա-
 տարելագործութիւնս այս՝ որում քաջ ելանէր
 նա ՚ի խնդիր, ըստ իմիք ընծայելի է **Իփիգե-
 նիայ** (Iphigénie), թէպէտ և **Փեդրէ**՝ զոր
Առլտեր կոչէ « ընտիր ծնունդ մարդկա-
 « յին մտաց և օրինակ յաւիտենական, բայց

«աննմանակցելի որոց կամք երբէք եղիցի դրել
 «ինչ ոտանաւոր չափամբ», և ճշմարտիւ ե-
 ղերերգական և դերագանց ՚ի թատրոնականս —
 Յամին 1673 թասին փոխանակեաց ՚ի Քեմարա-
 նին Գաղղիոյ զտեղի Լամոթ Լէվայերի, և
 զինի ժամանակաց ինչ Բօալօիւ հանդերձ ընտ-
 րեցաւ պատմագիր արքունական, սակայն և
 այնպէս ըստ Ալալենդուրին վկայաբանութեան
 «յետ ընդերկար փորձելոյ նոցա զփորձ վաս-
 տակոյս՝ ծանեան նորա հաւաստեալ, եթէ
 «ամենևին հակառակ էր այդ հանձարոյ իւ-
 «րեանց» • քանզի առ լինելոյ քաջ պատմա-
 բան՝ պէտք են չնաշխարհիկ տաղանդոյ, խորին
 ճանաչման մարդկային սրտի, երկար փորձա-
 ռութեան և հաստախարհիս հիմարկութեան
 իմաստից, կրթութեան, բանականութեան և
 արուեստակեալ փիլիսոփայութեան : Յոլով
 կենցաղավէպ պատմութիւնք զԹասինէ, կեն-
 սանկար վերտառութիւնք ևս և հնարիւք իմ և
 դառն հեգնութեամբ առակ նշաւակի առնելն
 նորա զՄորնելին քերթուածս բազում՝ վկայեն
 զկծու զայն ոգի և զբնաւորութիւն ցասմական,
 զոր Հովրատէս ընծայէ բանաստեղծիցն ամե-
 նայնի, ընդ կատակս կոչելով զնոսա ծնունդս
 նեղասիրտ : Ընդ ամս երկոտասան տուեալ զինքն

յանդորրաւէտ պարտաւորութիւնս բարեպաշ-
 տութեան՝ որ հեզահամբոյր գողցես քաղցրու-
 թեամբ լցուցանէր զհոգի իւր, կարի իմն ուռ-
 ճալից առնէր զհանճար իւր քաջ և դիւրին,
 որ ծայրացեալ փայլի ՚ի քերթուածս իւր յա-
 մենայն: Առ այս շնտ լիցի մեզ մտադիւր բե-
 ռիւ ՚ի վերժանութիւն շարագրածաց նորա
 վերջնոց՝ յօրինելոց ՚ի խնդրոց բամբջին Մեն-
 տենոնի վասն օրիորդ կուսանաց սրբոյն Աիւ-
 րոսի, յորոց և խաղարկեցաւ ըստ բացախօսու-
 թեան իսկ հեղինակին՝ եղերերգութիւնն **Ես-
 թեր** (Esther): Բանաստեղծուհին Սելիյնէ
 յուշ ածէ մեզ զհանդիսացելոցն ծափս, որք
 զծափի հարան ընդ Բասինին գեղեցկահիւս
 ծնունդ լայնատարր մտաց: — Յետ երկեամ
 ժամանակի ոգեաց նա և զպանծալին **Գոթու-
 ղիա** (Athalie), այլ լռութեանն խորին՝ որ առ
 ՚ի նմանէ մերկանայր այն գլխաւսն նորափետուր,
 չէ էր զէնընկէց արարեալ զնախանձ վատա-
 գրգիւ. հնարք յայնժամ հնարեցան թակար-
 թապատք, և չարանիւթ լեզուաց վիճակեցաւ
 ծնանիլ ՚ի միտս բամբջին Մենտենոնի զաղէտս
 տարակուսից, որք և խափան եղեն խաղարկու-
 թեանցն Աիւրոսանց: Բասին տպագրեաց զթատ-
 րոնական իւր զայս յամին 1691. բայց թիւ

ընթերցանելեացն սակաւ էր յոյժ, զի և բազմաց իսկ առհասարակ յօժարակամութիւն ընծայեալ ձայնի օտարաց, յաճախեցին յանարդ գնահատութիւն Գոթողիայ, ՚ի վերծանութիւն նորին անգամ ոչ մատուցեալ: Ընդ հասարակաց դառնաճաշակ անհաւանութիւն ընտիր շարագրածին՝ որ միայն բաւէր առ յաւիտեանս անմահ առնել զանուն իւր ՚ի յետինս, զարմահասքանչն եղբրերդու զիցէ թէ ըստ իմիք յանցանելն իւր զնիւթ ածէր զմտաւ, անկեղծս խոստովան եղեալ զայն Բօալօի, որ զգորին հակառակն միշտ զպատուականութիւն վկայէր զԳոթողիայն: « Հասու եմ ես՝ ասէր, գեղեցկութեան նորին. եկեսցէ ժամանակ՝ զի ամենեքին խոստովանեսցին զայդ: » Լցաւ արդարև Բօալօին կանխաձայնութիւն. բայց այնչափ երկար յետ մահուան Բասինի, զի մեծանուն բանաստեղծիս չեղև վայելել ՚ի բարւոք ընդունելութեան քերթուածոյն իւրոյ, և ոչ ևս զայն կանխագէտս անգամ գուշակել: Արկին անիրաւ գործս այս հասարակաց ընդդէմ բանաստեղծութեան և բարի ճաշակի՝ ոչ ետ նմա թոյլ պարապիլ այլ ևս ոտանաւորաց, և տողել յաւէտ զթատրոնականս իւր սիրելիս: Բասին էր յոյժ գորովագուլթ, և ծայրագոյն դիւ-

բաշարժութիւնս այս հոգւոյ՝ որ տայր երջան-
 կութեան և դիպուածոց պէսպէս յեղանակս
 տանջելոյ զնա և կուտելոյ զգլխովն բազմադիմի
 ելօ ձախողակ, դարձաւ նմա յաղբիւր տառա-
 պանաց : « Թէպէտ գովեստք՝ ասէր նա, զորս
 « ժառանգեցին իմս վաստակք, կարի իմն ամոք
 « ինձ թուեցան, բայց անհետեթ ինչ քննո-
 « ղութիւն վատադրդիւ և չնչին՝ առաւել անձ-
 « կութիւն ինձ նիւթեաց քան զհաճութիւն և
 « զբերկրանս, զորս չեղև յիս հնար ծնանելոյ
 « դրուատիցն ամենայն » : Բազմազգածութիւն
 Բասինի ձգէր առ ամենայն ինչ. սոյն ինքն է՝ որ և
 եհարն յոգի վթշուառագոյնդ ՚ի բանաստեղծս :
 Ընդ առաջարկել նորա երբեքն ՚ի խնդրոյ
 բամբշին Մենտենոնի՝ որոյ մտերիմ էր բա-
 րեկամ, դրաւոր ինչ բան ՚ի վերայ նորոգ օրի-
 նաւոր պայմանադրութեան գանձուցն արքունի,
 որով ըստ իմիք օգնել լինէր ժողովրդեանն
 դառնումքեր կարօտանաց, ըստ դիպաց տեսնալ
 զայն Լուդովիկայ չորեքտասաներորդի ՚ի ձեռս
 Մենտենոնի, չարաչար պարսաւեաց զԲասինին
 նախանձ անխոհեմ : « Քանզի գեղեցիկս հիւ-
 « օտ ռտանաւոր չափմունս՝ ասաց սրբայն,
 « միթէ բաւական անձին նա կարծէ զամենայնն
 « զիտել. և զի է քաջ բանաստեղծ, նախարար

«արդեօք կամի նա լինիլ 'ի վերայ գործոց» :
 Եւ արդարեւ կարի քաջ՝ լաւ ևս լինէր նմա
 յաճումի փառաց անուանն և յառաւել հանգիստ
 իւրոյ անձին պարապիլ յօրինման եղերերգու-
 թեան, քան բուռն հարկանել զորոյ չէր բնա-
 ւին կրթեալ, և զորոյ իբր 'ի բազումս դիպի
 քաջագիտաց և բազմամեայ փորձառուաց դիւ-
 րաւ անկանիլ 'ի վրիպակս. բայց առ փոքր մի
 յաղթեաց նմա յիրիդ սնապանծութիւն ընդ-
 վայր : Որոգայթ ադիր իմի պատրեալ՝ զի 'ի Մեն-
 տենոնէ ընտրեցաւ խօսիլ զճշմարտութիւն ա-
 ռաջի աթոռոյն Գաղղիոյ, կանգնեցաւ նա յո-
 ղոք և 'ի քաղցրիկ ասլաւինութիւն լինելոյ
 պատճառ երջանկութեան իւրոյն հայրենակցաց :
 Սակայն մինչդեռ բամբիշն արդեւ նմա այլ ևս
 երթալ յապարանսն արքունի, և մնալ առ այն
 հրամանի նորոյ, Բասինի չեղև ինչ դժուար
 գիտել քաջասաս՝ եթէ կորոյս առաջի նորա
 զշնորհս նախկին : Հարստահարեալ մեղամաղ-
 ձութեամբ՝ զկնի ժամանակաց ինչ վերադար-
 ձաւ նա 'ի Աերսայլ, բայց աշխարհ ամենայն
 երևէր նմա կերպարանափոխ, մերկացեալ զշք-
 քեղութիւն իւր զառաջին. մուտ արարին 'ի
 սիրտ նորա օձաթոյն նեղութիւնք անձնակուր,
 և թափեցին զնա յողի 'ի 21 ապրիլի 1699

ամի՛ յես տանջելոյ զնա զտարի մի ողջոյն ընդ
լծով կենաց դժնդակ և ծանրաբեռն ՚ի վիշտս
բազմագիւմի :

Յամենայնի յարմարավէպ ճաշակի իւրուքն
դարու՛ Րասին բղխեաց զքերթածաց զհիւսս բո-
ւորովիմբ Գաղղիական : Առաջնորդ անձին ու-
նելով զառ ՚ի բնէն ալդողութիւն զհամագգի՛
որ քաջն դրուատեցոյց զպարերգս դիւցազնա-
կանս , զձիւրնթացութիւնս յասպարիզի , զնիզա-
կախաղութիւնս ՚ի մեծարանս տիկնանց և զա-
ղուական բարուցն բոյս նախկին բնակաց Գաղ-
ղիոյ , ճշմարտանման իմն նկարէր զկիրս՝ որք
տիրէին անձին հանդիսայելոյ : Առլտեր հա-
մարէր զնա կատարեալ քան զամենայն բա-
նաստեղծս . մինչև ընդ հարցանել զնա շնորհա-
շուք գիտակի ուրուք գրոյ՝ եթէ առ ի՛նչ ոչ
մատնոյր ՚ի վաստակ զննելոյ զդրուածս Րասինի,
որպէս և երբեքն արարեալ էր նա դատ Աոր-
նելին մեծահամբաւ , պատասխանել նորա ան-
կեղծօրէն՝ «ամենայն ինչ կատարեալ է . միայ մի-
այն ստորագրել ՚ի ներքոյ իւրաքանչիւր եջի՛ Գե-
օղէցի է , ալդու , ներդաշնակաւ որ և վեհապատիւ : »
Րասին յաճախեալ ՚ի բնիկ ձիրս իւր՝ ՚ի քաղց-
րութիւն կրից , ՚ի ճաշակ ազնիւ , և տուեալ զինքն
յանխոնջ վերծանութիւն անզուգականացն յԱ-

թէնս , բուսոյ բարուց իւրումն դարու և աշ-
 խարհի յարմարադրել նկրտէր զեղերիրգականս
 իւր սլանծալիս : Աորնել էր գերազանց իմն
 մտաւարժեալ յամենայնի . սակայն և այնպէս
 չէր ինչ նա թափուր 'ի վրիպակաց , 'ի ստէպ
 ասեմ կիրառութենէ վաղեմի բառից , շփոթ զը-
 րուցաց և անտեղի ճոռոմաբանութեան : Բա-
 սին քաջ կրթէր խորշիլ 'ի դոցունց . գոլով
 միշտ գեղեցկախօս և անվթար , ոչ մերժէր եր-
 բէք առ յիրերաց զհանճար և զարուեստ , 'ի
 կիր արկեալ զմին առ զմիւսոյն փոխանակելոյ
 զտեղի : Ոչ այնչափ 'ի խնդիր ելանէր նա ամ-
 բառնալ զհոգի , որչափ շարժել զայն ուժգին ,
 ուստի և ընտելագոյն երևեցաւ հանդիսացե-
 լոյն , կամ լաւ ևս ասել՝ առաւել քաղցրա-
 բան և հեղահամբոյր : Աորնել մարթի նմա-
 նիլ արծուոյ , որոյ նազիկս թռուցեալ 'ի վեր-
 քան զամպս թխալայօդ , անթարթ հայիցի յակն
 աւուր լուսաճաճանչ , կամ որ բերկրանօք ար-
 դեօք անձին դիցէ ունկն որոտընդոստ ճայթ-
 մանց ամպրոցացն փայլակնացայտ . և Բասին՝
 աղաւնւոյ , որ հեծիցէ 'ի մէջ վարդենեաց
 կամ 'ի թաւուտս մրտոյ մշտականս :

Ձկնի եղերերգուացդ մեծահռչակ զթատրո-
 նին Գաղղիացւոց նորափետրեն զփառս՝ Արե-

բիյլեօն և Առլտեր: Առաջին քերթուածք
 Արեբիյլեօնի ետուն բազմաց ընդօստնուլ ՚ի
 կարծ, եթէ է նորա ՚ի գրուածսն գեղեցկասիւս
 ինչ եղանակ խօսից՝ նմա և եթ յատուկ, ան-
 յայտ և անվայել բնաւ բանաստեղծիցն այլոց:
Ելեքտրէ, Հռադամիսթ և Մդրէա
 կարգեցին զնա արժանաժառանգ յաջորդ նա-
 խագահ եղերերգուացն Գաղղիոյ՝ Աորնելի և
 Բասինի. և արդարև եթէ առաջինն ամբառնայ
 զհոգի մեր՝ որպէս Սոփոկղէս, և եթէ երկ-
 րորդն առնուլ զայն ՚ի խանդաղատանս քաղցր՝
 որպէս Եւրիպիղէս, Արեբիյլեօն հերձուլ զայն
 յարհաւիրս անհնարին՝ հանգոյն Եսքիւղեայ:—
 Առլտեր առաջինն եմոյծ ՚ի թատրոն զ՚ի հնու մն
 խաղարկութեանց զգանձս անդին՝ զզգայմունս
 ծնողական սիրոյ, զվեհութիւն ընկերութեան
 և զզաւակացն պատուոյ առ հայր և առ մայր և
 զհպատակելոցն զհնազանդութիւն, զորովք տի-
 րապէս զանց էր արարեալ իւրոց նախորդաց ՚ի
 հայրենի դպրութեան թատրոնականի: Եւ
 զոր կրիցաշարժ չեղև նմա քաղել ՚ի զգաց-
 մանցդ յայդոցիկ աղնուականաց. **Մերովպէ**
 և **Յովկաստա**՝ խոստովանեցայց զհուսկն,
 ընդ նոսին և **Մնդրովմաքէ, Հեկուբա** և
Աղիտեմեատրէ, առեալ են ՚ի թատրոնէ

հնոց • իսկ բարուցն բոյս **Բրուտոսի**, **Աե-**
սարայ, **Աղվարեսի**, **Չովպիրեսայ**,
Հիդամեսայ, **Շամիրամայ**՝ չէ հանեալ,
բայց եթէ 'ի բնէ անտի: Գիտաց նա ըզ-
գաղտնիս քաջ շարժելոյ զմարդկայինս սրտի
զօրութիւնս զմեծամեծ, որ և դասեսաց զնա 'ի
շար տաղաչափիցն առաջնոց:

Մինչ **Աորնել** աշխատէր 'ի փառս թէատ-
րոնին **Գաղղիացւոց**, առ **Անդղիացիս** ծաղկէր
շնորհաշուքն **Շեկսպիր**: **Չուրկ** էր սա ամե-
նեւին յերկուց գլխաւոր խթանացն հանճարոյ՝
յօրինակաց և 'ի նախանձորդաց • սակայն և
այնպէս բաշխեալ 'ի տուրս բնածին, յոգի
հուժկու և բեղմնաւոր, և գոլով թափուր 'ի
կանոնաց ամենայնէ, ամբարձաւ ցլայր բարձրու-
թեան և գերեզանցութեան, մինչև թողուլ
հեռաւորութիւն անչափ 'ի մէջ իւր և դարու՝
յօրում և կեայրն: **Համլէթ**, **Յուլիոս**
Աեսար, **Անտոնիոս** և **Աղէովպատրէ**,
Ոթելլոն, **Հռիքարդոս** երրորդ՝ վկա-
յեն զանսպառ խորս բանաստեղծութեանն թատ-
րոնականի: Բազումք 'ի քերթուածոց նորա
խաղարկեցան առաջի թագուհւոյն **Եղիսաբե-**
թի՝ ընդ որում, ասեն, երթեկութիւնս
միշտ առնէր՝ խորհրդակից լինիլ զբազմաց:

Չէր ոք երբէք ցաստիճան գերադոյն ժամա-
 նեալ իւրուքն լեզուի քաջավարժութեան, և
 ոչ ևս 'ի յեղանակս բազմադիմի ակներև ա-
 րարեալ վկարողութիւն իւր 'ի գեղեցիկս շար-
 ժիւն զկիրս՝ առաւել քան զՇեկսպիր, քաջ
 կրկնաշարժ և վսեմ, ինքնահար և նկարու,
 թախծագին և զուարթ: Արիտիսաց յոգունց
 բուռն հարեալ մատչիլ 'ի ցոյց թերութեանց
 ինչ եղերերդուիս անզուգական, յաճախէին
 ճախր առնուլ ընդ նմա համաթռիչ, և ընդ
 առ 'ի բարձանց 'ի վայր կործանուքն նորա կե-
 ղակարծ անչափս հրճուիլ յիւրեանց անձինս:
 Մին 'ի դոցանէ անշքացուցանէ զնա բասիրս
 զնովաւ արկանելով, եթէ օտարալեզու բար-
 բառի 'ի թատրոնին Անգղիական. միւսոյն զի-
 նաւառ սեթ և եթեալ 'ի վերտառութիւն ինչ՝
 տալ պատերազմ ընդ հանճարոյ, 'ի թանձ-
 րամտութիւն ծպտեցուցանէ զպարզաբանու-
 թիւն նորա աղնիւ. և բազմայ առհասարակ
 լրբեալ քաղցրաբանել ըստ նորա, բարբա-
 ոէին ծամածուռ և թիւրախօս, իբրզի շըր-
 թունք նոցա այլակերպ էին և ոչ գեղեցկաշէն
 ըստ Շեկսպիրին: — Առ դատելոյ դատաստան
 անաչառ և ողջախոհ 'ի վերայ շարագրածացն
 բանաստեղծիս չնաշխարհիկ, պէտք են ըստ նո-

րայն՝ հաստահիմն տեղեկութեան լեզուի, խո-
 յանաց երևակայութեան, ընթացից մեկնաբա-
 նութեանց, գեղեցիկ դունավիտխութեան և այ-
 լազանութեան պատկերաց, տարօրինակ քաջա-
 վարժութեան ՚ի նկարագրութիւնս ազգի ազգի
 բնաւորութեանց և յաւէտ բնիկ հեղինակու-
 թեանն այնմիկ՝ որով գերազանցէ նա զեղերեր-
 գուօք այլովք: Չարար ոք **Շ**եկսպիրի արդար դատ
 քան զերևելին Պոպ: Մատենագիրս այս Անդ-
 ղիացի՝ որ ՚ի լոյս հաճ գյօրինուածս **Շ**եկսպիրի,
 ասէ ՚ի յառաջաբանութեան՝ թէ ականաւորդ
 եղերերգու, թէպէտ և են նորա թերութիւնք
 ինչ, արժանի է նախադասութեան ՚ի մէջ ա-
 մենայն թատրոնական բանաստեղծիցն **Ե**ւրո-
 պիոյ • և ՚ի գլուխ բանիցն, շարագրածք նորա,
 յարէ՝ մարթին համարիլ վաղեմի ինչ հոյակապ
 շինուած Գոթական, ուստի հանիցին նիւթոց
 բազմութիւն վասն այլոց կերտուածոց: —
Շեկսպիր էր առատաձեռն, ազնուաբարոյ, ըն-
 կեր մտերիմ և բարեսէր • շարժեալ յազդո-
 ղութենէն սրտի, եթող զթատրոնականս իւր, և
 ՚ի վարել զկեանս ՚ի խաղաղութեան՝ մեկ-
 նեցաւ ՚ի ծնետղ իւր ՚ի Ստրասպորտ, ուրանօր
 և ամաց յիսնից և երից փոխեցաւ յամին 1618:
 ՚ի յաւէրժ յիշատակ անուան նորա կանգնե-

ցաւ նմա յամի 1742 հոյակապ մահարձան յաբ-
բառութեանն Աեստմինստեր՝ այսու Լատին
վերտառութեամբ . Guillelmo Shakespeare anno
post mortem CXXIV amor publicus posuit (1) :

Բենիամին Ռոնսըն հետեւեցաւ Շեկսպիրի .
առաջնորդ ունելով ինքեան զչլև 'ի հայրենին
Ժատրոնի յայտնի կանոնս եղերերգութեան .
Շեկսպիր՝ ոչ այնչափ կանոնայոյզ և ուղղագիր
'ի քերթուածս , զգեցոյց զշարագրածս իւր զա-
մենայն 'ի գիւթասար գեղս հանճարոյ և ե-
րևակայութեան . Ռոնսըն՝ վաստակաբեկ քան
զգա , մանաւանդ ևս բոլորովիմբ անձնատուր
'ի վերժանութիւն հնոց , որոց և շարագրածք
գեղեցկահիւս՝ էին միշտ առաջի իւր , յամե-
նայնի ուղեցոյց ունէր զգիտութիւնս արուեստա-
կեալ : Աատիղինա յարգանօք ի՞նչ հնչեցոյց
զանուն իւր 'ի շրթունս հայրենակցաց , մինչև
չնորհապարտ զանձինս կարգացեալ , կանգնել
նոյա բանաստեղծիդ շիրիմ մեծակառոյց , յո-
րոյ վերայ քանդակեալ ազդու վերտառութիւնն
քառաբան՝ O rare Ben Johnson ! —

Չփառս երգաբանիս ժառանգեցին քաջ

(1) Գուշիէշայ Շեկսպիրի ճիշտ աճօք յեա հա-
կուան կանգնեաց սէր հասարակաց :

կրիցաշարժն գողտեր Օտուայ, Ճշգախնդիրն
 Կոնդրեվ և բարեսէրն Րօու, յորոց միջի նազիկս
 ճախրէ Աղիսոն մեծանուն : Սա է՝ ասէ Առլտեր,
 յազանաւորսն Անգղիոյ, որ ծայրացեալ ճաշա-
 կաւ և հանճարով, էաճ ՚ի կատարելագործու-
 թիւն զհայրենի բանաստեղծութիւնն թատրո-
 նական . որոյ և **Կատովն Ուտիկեան** առ-
 ձայնի դրուած ընտիր ըստ ՚ի նմայն կանոնապա-
 հութեան, պիրճութեան իմաստիւց և վսեմ
 ամբարձման զգացողութեանց սրբազան և մտ-
 քուր :

՚ի սկզբան եօթնուտասներորդ դարու Գեր-
 մանացիք ևս ընտելացան թատրոնական ա-
 բուեստի թարգմանութեամբք ՚ի Սպանիացի,
 ՚ի Փղամանդացի և յիտալական բարբառոց,
 Ջկնի ժամանակաց ինչ յայդեստանի նոցա
 տնկեցաւ եղերերգութիւնն **Կանայք Տրու-**
վացիք, զոր նախապտուղն Օպիւց քաղեալ էր
 ՚ի բուրաստանէն Սենեքայ . անդանօր ևս բարե-
 բողբօջ բուսան երախայրիք ծառատնկոյն Կոր-
 նելի : Տրիփիուս Լոպինշտեյն և Գոտշեդ բա-
 զում ինչ գրեցին ՚ի փառս Գերմանիոյ . բայց
 ուռուցիկ ոճ նոցա մարթացաւ ևեթ լինիլ
 հաճոյ առ բրտութեամբն ճաշակի : Յամին
 1739 ծաղկեցաւ մին յառաջինս եղերերգու

Ալեգորիա՝ որ արդարեւ քաջ նպաստեալ էր կատարելագործութեան հայրենի բանաստեղծութեան, եթէ կեանք տուողահասակիդ չլի էր վաղ իմ կարճեալ ՚ի մահուանէ : **Լեւոնդեան Միս Սարա, Սամիսովն** և **Արոնէայն Աողրոս և Սոփրոնիա** ծնան նախանձայոյզս բազում՝ զորս և յառաջ խաղացուցին յասպարիզի Գրականութեան : ՚ի բազմութենէ անտի շարագրածաց **Ալեյսի** յամենեցուն արժանագոյլ համարի **Հուլիոն և Յուլիա**, գաղափարեալ յեղերերգութենէ **Ալեյսպիրի** : Յանդուզն երևակայութիւն **Ալեյսի ստեղծ զԱլազալս** (Die Räuber), պտուղ յիրաւի արժանի մտացածնիցն տիոց երիտասարդութեան. և հոտարակացն շնորհապարտութիւն վասն եղերերգութեանդ այդորիկ տարաւ զհանճար նորա ՚ի յօրինուիմ այլ արդոյ շարագրածի, **Աուսանին Հորլէանսայ** (Die Jungfrau von Orleans) : Գեօթէ (Johann Wolfgang von Goethe) ևս փառս անձին ժառանգեաց թատրոնականաւն **Ալալիզոն**. Ալոպշտոկ յօրինեաց **զՄահ Ադամայ** և **զՍաղովմոն**՝ յորս ցանկալի է արդեօք տեսանել ցոր վայր վսեմապանծ ամբառնայ **Աստուածաբեալ** ողի քնարերգակիդ **Մեսիադայ** : Աոյեբու արժանի է գովես.

տից վասն երկուց բարեհաշակ եղերերգու-
թեանց իւրոց **Մոնիփոկոնի** և **Սուլթանի**
Աամպուլնայ . սակայն և այնպէս կատակեր-
գութիւնք նորա նախամեծար համարին քան զե-
ղերերգութիւնսդ զայդոսիկ :

Աստանօր կարեմք յիշատակել՝ եթէ ըստ ո-
մանց արդի բանագիտաց թատրոն Գերմանա-
ցի ունի զմիջավայր **Անգղիացւոյն** և **Գաղղիա-**
կանին, զի մատենագիրք Գերմանիոյ երթան ըզ-
հետ ճշդիցն ՚ի կանոնս միութեան առաւել քան
զ**Անգղիացիս**, ունին զզօրութիւն և զհամարձա-
կութիւն քաջ նկարագրելոյ զբնաւորութիւնս
և զկիրս առաւել քան զ**Գաղղիացիս** : Եղերեր-
գութիւնն Գերմանացւոյ, և մանաւանդ առձայ-
նեալն «ոսկէան կամ «սփէան», պատկերացու-
ցանէ մեզ առաջի աչաց զյաւէտ ահագինս՝ որք
յատուկ են և եթ **Անգղիացւոյ**, և զմանրա-
մասն հանգամանս իրաց, զորս տեսարանն **Գաղ-**
ղիական և ոչ վարել անգամ մարթանայ :
Գերմանացւոյն կամեցեալ որպէս **Անգղիացի** ոք
մանրախոյզ իմն ճանաչել զդիւցազն իւր, մզի
անդ ՚ի շարժառիթս դործողութեանց նորին,
աղիտից, մտացն խորհրդոյ և զգացմանց : —
Աարժութիւն ոճոյ և հեռաւորութիւն պատ-
շաճողութեան և բարեյարմարութեան՝ նմանե-

ցուցանեն զԹատրոն Գերմանացոց առաւել
Գաղղիականին քան Անգղիականի : Առ Գեր-
մանացիս նախամեծարն քան առ այլս եղերեր-
գուժիւն սոսկական՝ է քանաստեղծուժիւն ,
ոչինչ կրասեր ՚ի դիւցազնականսն , և ոչ զուրկ
՚ի գեղոց ինքնաւայել :

Ճաշակ Թատրոնականին էանց և առ Սպա-
նիացիս , բայց հանդիսարան խաղարկուժեանց
նոցա կարէ միայն պարծիլ թուով քերթուա-
ծոց , և ոչ գեղեցկուժեամբք նոցին : Աւլդե-
րոն Բարկա ՚ի լոյս էած ինն հատորս կատա-
կերդուժեանց և լեց հատորս սրբազան խա-
ղարկուժեանց : Լոպէ Աեգա՝ ժամանակակից
Ըեկսպիրի , դրեաց աւելի քան զհազար հինգ
հարիւր Թատրոնական յօրինուածս : Երկու
քանաստեղծքս այսօքիկ եղին հիմն հայրենին
Թատրոնի , մանաւանդ Լոպէն Աեգա , զոր
անչափս մեծարեն Սպանիացիք , մինչև առ հաս-
տատելոյ՝ թէ յայսմ ինչ դրուածի չի՞ք գեղ
քանաստեղծական , ՚ի Չէ՞ն այդ Լոպէի համար-
ձակ կի՞քել նոցա զգանն : Սակայն ոչ Լոպէ և
ոչ Աւլդերոն հեռեեցան կանոնաց , գուցէ և
ոչ գլխացին իսկ զնոսա . քերթուածք Լոպէի
Ցուհեգայ առաւել կանոնահիւս են քան նախոր-
դացն : Եղերերգուժիւնն Սպանիացոց , ասա-

ցից հուսկ ուրեմն, ոչ հայեցեալ ՚ի բազմու-
թիւն գործողական քերթուածոց և ՚ի վաս-
տակս Լոպէի Աեգայ և Դոն Օդոստինայ
Մոնտիոնի Լուվանդայ, եկաց միշտ անտարա-
դիր ՚ի կատակերգութենէ և ՚ի ծաղրաշարժ մի-
մասութեանց :

Այլ ամենայն ազգք Եւրոպէացի չունին քեր-
թուածս սեպհական, բայց եթէ նմանողականս
վերոյասացելոցդ : Առ Լուսիտանացիս երևելե-
է կոմսուհին Աիմիէրոն, առ Հոլանդացիս
Աոնտել, առ Դանիս Էլենշլագեր, առ Պո-
ղոնիացիս Աոխանովսկիյ, Րըժեվուսկիյ, Փելին-
սկիյ և այլք :

Մասն ինձ այժմ բանք զՌուսաց : Առաջին
պտուղ թատրոնի նոցա է Տրեդեակովսկիյին
Դէիդամիա : Բանաստեղծդ այդ կանոնա-
դրեալ զչափ ոտանաւորաց, եյեղ ՚ի բարբառ
իւր զհին սլատմութիւն դաստիարակին իւրոյ
Ռոլենի . « Եւ զորով արդեօք ոմամբ՝ ասէ
« հեղինակ Պանթէոնին Ռուս մտտենադրաց
« (1), չէր անցեալ դորա, եթէ ձրիցն բնական
« հաւասարեալ ինչ էին որ ՚ի դմայն փոյթ ջա-
« նից և եռանդեան երկասիրի : » Ժամանակա-

(1) Пантеонъ Россійскихъ авторовъ.

կիցն գորա Սուամարոկով երևելի գտաւ 'ի հայ-
 րենիսն • որոյ և **Դեմետրիոս ստանուէն**
 (*Деметриу Самоэвасеуэ*) նախապատիւ զնա գա-
 սեաց քան զՏրեդեակովսկից նա քան զԼոմոնո-
 սով : «Լնհնարին իմն լինէր մեզ՝ ասէ Մերզ-
 շեակով, չտալ զանձինս 'ի զարմանս, տեսեալ
 «զտարօրինակ յառաջադիմութիւն Սուամարո-
 «կովի յարհետին եղերերգական • քերթուածք
 «նորա ամենայն կարեն լինիլ մեզ յօգուտ, յօ-
 «ւրինակ գեղեցիկ և հարուստ : » Քնարերգակն
 ևս Լոմոնոսով բուռն եհար զթատրոնական
 շարագրածաց • բայց զի զուրկ էր 'ի տիրապէսն
 շնորհաց Մեղպոմենեայ, **Տամիրէ և Սեղիմ**
 և **Դեմովփոնտոս** 'ի պարտութիւն մատնե-
 ցան հաւաստեալն եղերերգականի : Չէք 'ի քեր-
 թուածս նորա և ոչ մի տեսարան՝ որում շար-
 ժեւ ինչ լիցի զսիրտ • և եթէ շիպին ուր
 ուրեք ինչ ինչ եղերերգավայել, անդրէն և
 անդ 'ի կոր զնոսա կործանեն կուտակք զարդա-
 բեռն բանից և ճարտարասական շրջաբանու-
 թեանց : Անեաթնին միանգամայն գուն գործէր
 նմանակցիլ ամենայն եղերերգուացն Գաղղիոյ,
 կամ լաւ ևս ասել՝ ընծայել զնոսա յիւր բար-
 բառ • չիք ինչ նմա յատուկ և ոչ մի եղա-
 քանութիւն կամ ձևակարգութիւն 'ի բանս •

աակացն և այնպէս ոճ նորա իբր 'ի բազումս
 ազնիւ է, պատուական և վսեմ քան զՍուամա-
 րոկովին : Խերասկով, Մայկով, Նիկոլեով ա-
 ռաւել յայլ շարադրածս ծաղկեցան քան յեր-
 րգականս : — Այն ինչ Մեղպոմենէ հանգիտ
 առնոյր առ ժամանակ՝ երևիլ յապայտ և ևս չըք-
 նաղ և պանծալի, Օղերով խափանեաց զնիրհու-
 մըն նորա զերկարատե : Երախայրիք իւր Մահ
Օլեգայ՝ իշխանի Դրեվլեանաց կան-
 խաձայն ընծայեաց զտալափայ յառաջադիմութիւն
 եղերերգուիս, և **Իդիպոս Մ.թէնս** (Эдуард
 ԾԾ Αουναχ) հատոյց զհասարակայն ակնկալու-
 թիւն : Յօրհնեալն Հելլադայ մուսայն Օղերո-
 վի բնակեցոյց զնա ընդ վայրագ և միգապատ
 երկնաւ՝ զոր հանգունատիպ, բայց հոգեշահ և
 զօրաւոր երգովք գեղեցիկս բարեբանեալ էր
 Ուլսիանայ (1)՝ հիւսիսային ասեմ Հոմերոսի :
Փինգալ է արդարև քերթուած ոչինչ
 կրտսեր 'ի բանաստեղծականսն եղերերգուի : 'ի
 ժամանակին յայնմիկ՝ յորում Ռուսաստան պա-
 տերազմ մղէր ընդ նեղչին Եւրոպիոյ, Օղերով
 յուշ հաճ իւրովն **Դեմետրեալ Դանայի-**

(1) Ուլսիան՝ էր բանաստեղծ Սկուլտիայի,
 որ ծաղկեցաւ 'ի 7 դարուն :

սեանն (Духомъ Донскоу) զվաղեմի փառս
 հայրենեաց, երբ 'ի դաշտս սքանչելալկայս
 մեծամեծաց՝ զորս առողանէ Դանայիս, 'ի հա-
 բուածս հարաւ անհնարին՝ խրոխտապանծն Մա-
 մայ: Յեղերերգութեանս յայսմիկ վառ փայլի
 սէր հայրենեաց՝ որ կենդանի իմն և ազդողա-
 գոյնս անդրաշողի 'ի սիրտս ամենեցուն, և ու-
 բուամ 'ի նանիր ապաքէն լինէր մեզ ելանել 'ի
 խնդիր 'ի շարադրածոն Սուամարոկովի, Անեաժ-
 նինի և նոյն ինքն խերասկովի՝ քնարերգակին
 Ռուսիոյ: Ա երջինն և ընտիրն յեղերերգու-
 թիւնս նորա **Պողիքսենէ** կատարելագոյն է 'ի
 կազմուածս նիւթոյն. անդանօր նորոգ իմն պան-
 ծայ Օգերովի ճարտարութիւն 'ի կենդանա-
 գրութեան բուսոցն բարուց կանայի:

Յագեցաւ ուշագրութիւն մեր 'ի քննելոյ
 զբանաստեղծութիւնս պլազդեաց. բայց զի՞նչ
 արդ 'ի հայրենիս մեր: Դժուարացեալ է իսպառ-
 քսողցրտհամբոյր ունկն դարագիտի 'ի լսելոյ
 զամենայն աղէտս՝ որոց 'ի ժամանակս ժամա-
 նակս լիճակեցան դանձարանք գրուոր հարըն-
 տութեանց Հայոց: Եւ զի՞նչ մարթոսցի ի-
 մաստախնդիրն, եթէ յանհամար պատճառս
 պտկասութեան յիշատակարանաց Գրականու-
 թեան մերոյ յաճախէ անհաւատալին, անտես և

անլուր 'ի տեղւոջ ուրեջն , որոյ և մինչև յայ-
 սօր անընդհատ են հետեւումնք չարաչար , սևա-
 պաշտն ասեմ սովորոյթ թագուցանելոյ զար-
 մանալի իւրք խնամով զգրուածս աւուրց հնու-
 թեան , եթէ այս եռանդն չարագրդիւ տանի
 զբազումս յայն ծագ ստսոգատ կտրծեաց , մինչև
 թաղել զմատեանս 'ի փասլարո , յորմունս շի-
 նուածոց , 'ի գերեզմանս և յայլ խաւարամած
 անկիւնս՝ ուր եթէ ըստ դիպաց ինչ ծագէ լոյս
 հետաքրքրութեան առն բանասիրի , տեսանին
 գանձքն այնօքիկ գլխովին փտեալ՝ կիսով 'ի
 'ի տսմիութենէ , կիսով յանխնայութենէ ամե-
 նածախ ժամանակի : Բայց մի յաղթական հան-
 դիսասցի ողիշ այդ ապականարար . ոչ անխը-
 տիր կարաց նա մատնել 'ի հուր և 'ի փոշի
 մոռացութեան (փառք բերմանց ժամանակի)
 զհաստուածս ճարտարահնար մտաց . Տեսցին
 տակաւին 'ի ձեռս մեր շարագրածք արժանա-
 գով և արդարև գեղեցկահիւս :

Չեկաց անգործ Հայախօսն հանճար վսե-
 մաթուիչ . հանճար՝ որ լիաշուրթն՝ գլտաց
 օրհնաբան մերձիլ յաթող Աստուածութեան ,
 որ եհար զաղիս ինքնայարդար քնարի 'ի նուա-
 գիլն զվհհանձինս ականաւոր , զարարս հռչակա-
 համբաւ : Պանծալի է մեզ ասլաքէն անուն

Նարեկեան վարդապետի, պանծալի գրիչքն
 վերնապարզև, զորոց զչքնաղաճիւսութիւնս ան-
 նման լսեմք 'ի տաղերգութիւնսն Շարակնոցի,
 բայց ոչինչ և անհրաշատողք՝ մրմունջք Հօրն
 Շնորհալուոյ: Գրականութիւն մեր հայրենի,
 գիտեմք, չէ գուրկ 'ի քերթողութեանց քնար-
 երգականաց և յորոց սովորեցաք անուանել
 դիւցազնականս, բայց 'ի թատրոնականաց՝
 այն, և զուրկ բնաւին: Են 'ի մերս բարբառ
 յօրինեալ եղերերգութիւնք ինչ, զորս խաղար-
 կեցին Հայազգի համբալք եպիսկոպոսական
 դպրատան Լէովպօլսոյ Լեհաստանի, Մահ
 Աեսարայ, Առակք Սաղովմոնի, Մահ
 Հերովդեայ, Մահ Թէոդոսի փոքու,
 և այլք. բայց չեն նոքին տիրապէս գրուածք
 թատրոնականք, և ոչ հաւասարակից Եւրոպեա-
 կանաց: Սեն — Մարտեն՝ Գաղղիացի Հայկա-
 բան, որ բանս արկանէ 'ի վերայ քերթուա-
 ծոցս այսոցիկ, յիշէ և զայլ եղերերգութիւն
 մի 'ի հինգ գործողութիւնս, ճակատագրեալ
 Աոյս և նահատակ սուրբ Հռիփսիմէ,
 շարադրեալ՝ որպէս 'ի կարծ նա ընդոստնու,
 'ի Լուդովիկայ Պիդուէ, (1) 'ի Հայ ոտանաւոր

(1) Սա էր 'ի կարգէ Թէատինեանց, հաստա.

և ՚ի միջատու թիւնս ՚ի լեզու Պողոսիացւոց (1) :
 Լ. Բարկայ նորին չէ անյայտ որոց միանգամայն
 ընթերցեալն է զպատմութիւն Հայոց (2) . Ըո-
 վանդակին ՚ի նմա հարկանել թագաւորի մերոց
 Տրդատայ և Կարէն անուն արնուատոհմի ՚ի սէր
 Հախիսիմեայ՝ բարեգեղ կուսի Հովմէացւոց ,
 դիմել իշխանին յարհեստ կախարդութեան ջատ-
 կի, կործանել Հախիսիմեայ զարձանս կուց մեհե-
 նին Լ. նահտայ , սպանութիւն սրբուհւոյն ընդ
 Գայիանեայ և ընդ այլ ընկերակիցս նորա , ելք
 սրբոց Լուսաւորչին ՚ի վերապէ և քարոզութիւն
 նորա ՚ի դրանն արբունի , և դարձ Հայաստա-
 նեայցն ՚ի հաւատս Քրիստոնէութեան : Ահաւա-
 սիկ քեզ զառնջեալ ՚ի նախերգանսն անձն ոք այ-
 լաբանական , աստուածուհի փառաց , աւետաբան

տեցաւ վերատեսուչ դպրատան Հայոց
 Լէոպոլսոյ , և ասլա եղև եպիսկոպոս Տա-
 բելոմի :

(1) *J. Saint — Martin* , dans son *Analyse*
 d'une tragédie arménienne , représentée à
 Léopol , en Pologne , le 9 avril 1668. — *Journal*
Asiatique , Janvier 1823. Tome II.

(2) Լ. դաթանդ . 55 — 88 : Խորեն . Ճառ
 Հախիս : Լ. սողիկ . ք . 1 : Չամչ . Թ .
 379—385 : Յայսմաւ . հոկտ . 4, 5, 6 :

մեծամեծայն՝ որք համատարած հռչակել ունին
 զաշխարհ մեր, սլէք ևս երկու՝ զՀռովմ իմա-
 նամ և զՀայաստան, քնէածք ՚ի կապանս հե-
 թանծուծեան. յարուցանեն զնոսա ճառա-
 գայթք ծայրակարմիր արևու, և խնդակցին
 նոքա ընդ փրկութիւն իւրեանց հանդերձեալ. Գեղեցիկ է և միջատութիւն շորրորդ գործո-
 լութեան. տեսեալ կուսալաշտութեան զանկուսե
 իւր դիւրակործան, բողոք կարդայ առ աստուածս
 Հայոց՝ Արամազդ և Անահիտ, որք և առաքեն
 նմա յօգնականութիւն զՆանէ, զԱստղիկ,
 զՍպանդարամետ, զԱստաղիս դժոխոց և զբազ-
 մութիւն զօրսլարաց՝ զադահութիւն, զփառա-
 սիրութիւն, զպագշտութիւն, զորկորաժետու-
 թիւն և զայլս՝ մղել պատերազմ արիւնահեղ.
 Բայց պաշտօնեայք ճշմարտին Աստուծոյ ընդ
 դրօշակօք համբերութեան և խոնարհութեան
 զինաւառեալ ՚ի վահանս հաւատոց, հալածա-
 կանս առնեն զթշնամիս, աւերեն զամբոց կու-
 պաշտութեան, և լուսաւորեն զբնակիչս երկրին
 լուսով Աստուածգիտութեան : — Ցանկալի էր
 ապաքէն տեսանել և զլուսաւորութիւն մտաց մե-
 րոց. զարթիցէ, ծանիցէ յայսմհետէ շնորհա-
 շուքն Հայախոս զչքնաղութիւն զօրութեան իւ-
 րոյ, երգեսցէ զչաշխարհիկս՝ յորս պանծան

որքան չեղիք և գեղեցկութիւն բնու. թեան Հայաս-
 տանի, վեհութիւն մեծագործութեանց որդւոց
 նորա, պատուականութիւն բուսոց բարուց, ազ-
 նութիւն զգացողութեանց և վսեմութիւն
 դատողութեանց նոցա, զի իմասցի աշխարհ,
 եթէ սխրալի են և անդոյգ՝ ծնունդք հրաշա-
 ստեղծ Հայ հանճարոյ :

Դիւրաւ այժմ կարեմք առնուլ 'ի միտ՝ եթէ
 յորսլիսի կատարելագործութեան է եղբրիւ-
 դութիւնն յիշատակեալ ազգաց : Ը. յս սեսակ
 գործողական շարագրածից բերեալ յամբող-
 ջութիւն մի անչափ զբազումս 'ի գեղեցիկ
 դպրութեանց և զսլատմութիւն իսկ, կենդա-
 նագրէ առաջի աչաց մերոց զմեծամեծարար
 դիւցազունս հնութեան, բուրէ առաքինու-
 թեան զխունկ քաղցրահաճոյ 'ի հոտոտելիս,
 յանդիմանէ զդժնեայս վասն չարագործութեան
 և յանցանաց, ուսուցանէ մեզ ճշմարտութիւնս
 ոգեշահ, լըջմտեցուցանէ զմեզ 'ի գործողու-
 թիւնս մեր յամենայն, տարրացուցանէ 'ի յի-
 շողութեան զանցս պատմաբանական, առլնու
 վհոգի յազնիւս և 'ի պատուականս զգացողու-
 թեանց, միով բանիւ՝ նպաստէ 'ի լուսաւո-
 րութիւն և 'ի կրթութիւն աղանց : Գերազան-

ցէ նա զքերթողութեամբն դիւցազնականաւ 'ի
միութեան իւրում , 'ի համառօտութեան և 'ի
ճշդութեան ազդողականին , զԱտակերգու-
թեամբն 'ի վսեմութեան բնաւորութեանց և
պարագրութեան , զԱքանչելահիւսութեամբն
'ի ճշմարտանմանութեան , և զայլ ամենայն
ազգօք Ռանաստեղծութեան' 'ի կենդանագիւր
պատկերացուցութեան անդ կրից և զգացմանց :
Քնարերգութիւնն է ցուցք և նուագ կենդանի
կամ երաժշտական արտազեղումն հոգւոյ . Դիւ-
ցազնաբանութիւնն՝ վկասանութիւն հանդարտ
կամ քանդակագործութիւն իրակացեալ , իսկ
Գործաբանութիւնն է ինքն կեանք՝ պատկերիչ
գործոց մարդկան :

Գործողութիւնն՝ առաջին հիմն թատրոնա-
կան քերթողութեանց , է միաւորութիւն պա-
րագայից և հետևողութեանց անցիլյն գլխաւոր ,
որոյ են միանգամայն սկիզբն , մէջ և կատա-
րած . իսկ եղերերգականն՝ է պատկերացուցու-
թիւն դառն պատահարաց կուտելոց զգլխով
անձինն գործող , վուգորդեալ ընդ այլ և այլ
մանրամասն հանգամանս իրաց և ընդ բազ-
մադիմի յեղանակս վիճակափոխութեան , դիտա-
ւորութեանց , ցանկութեանց , խոչընդոտն խա-
փանածոց կրից և խորհրդոց : Ըստ այսմ քեր-

Թուածք ամենայն թատրոնականք բաժանին 'ի
 գործողութիւնս (actes, дѣйствія), և սոքին 'ի
 տեսարանս (scènes, явленія): Գործողութեանն է
 առանձին ինչ դէպք՝ որ զգլխաւոր անցիցն կա-
 ցուցանէ զմասն, զնպատակին նախադրեալ օ-
 ժանդակիչ ելից կատարածի: Յառաջնութեան 'ի
 գործողութիւնս եղերերգութեան յանդիման
 բերի նախերգանք անցիցն առարկելի . անդանօր
 'ի քննին մատչիմք 'ի հետազօտ: Յերկրոր-
 դութեան՝ լուսաբանութիւն ընծայի անցիցն, զոր
 պատմել նկրտէ հեղինակն բանաստեղծ . անդա-
 նօր սկիզբն առնու 'ի մեզ ոչ հանդարտն համ-
 բերութիւն: Յերրորդութեան՝ 'ի ցոյց անկանին
 խափանք և անյաջողութիւնք . անդանօր քաջ
 զաճութեան աճէ արդէն տարրացեալն 'ի մեզ
 անհանգստութիւն սրտի: 'ի չորրորդութեան՝
 յառաջ ածի նախերգանք կամ սկիզբն կատա-
 րածի . անդանօր ծնունդ ահա՛ առնուն 'ի մեզ
 սոսկութեան և կարեկցութիւն: 'ի հինգերոր-
 դութեան՝ դնի վախճան կամ լուծութեան, որ չէ այն-
 չափ հաճոյ, քան երբ ճշմարտանման լինի և
 անկարծ . անդանօր 'ի բարձրագոյն աստիճան
 ամբառնան կիրքն եղերերգավայելք, և գոր-
 ծողութիւնն բերի 'ի կնիք: Քերթուածն
 թատրոնական կարէ ևս բազմապէս 'ի միոյ և

երբեք յերից գործողութեանց, բայց այս կարգ
չէ ՚ի կանոն հարազատ: Են որոց լինին երկու
և չորք, բայց ոչ առաւել քան զհինգ, սակայն
և այնպէս այսպիսի քերթուածոյ, ըստ Հովրա-
տեայ, չէ սլարտ լինիլ գործողութիւն պակաս
քան զհինգ.

Neve minor, neu sit quinto productior actu
Fabula quae posci vult, et spectata reponi.

Տեսարանն է մասն գործողութեան՝ որ առ-
նու զսկիւքն իւր, երբ մի կամ բազում ան-
ձինք մուտ առնեն ՚ի հանդիսարան, և կամ ե-
լանեն անտի:

՚ի թատրոնսկան բանաստեղծութեան հար-
կաւորին ևս կարի՝ հանգոյց (intrigue, узелъ,
завязка) և շուճոճո (dépouement, развязка),
որպէս և Յո՛ւնիտե (unité, единство)
գործողութեան, արեւոյ և ժամանակի: Չհանգոյց
կապեն արգելանք՝ խափանիչք գործողութեանն
կատարածի, վտանգք խորշելիք, ճգունք խար-
դախահնարք, ՚ի վար արկանելիք առ առաջա-
կայն հասանելոյ նսլատակի: Յեռանի նա արդա-
րե, զի կամ անձնն գործող չէ գիտակ հան-
գամանաց ինչ, կամ զի տկարանան առ ՚ի նմա-
նէ ձեռնարկք. որպէս զոյ մեղ տեսանել ՚ի

Գոթոդիայդ զքահանայապետն զլեռականօք հան-
 դերձ հարկանել բուռն զգահալիժուժենէ հզօր
 դշխոյիդ աշխարհակալի՝ թագաւորեցուցանել 'ի
 վերայ Յուդայ զմանուկն Յովաս : Քանզի սղ-
 բիւր արգելանացն 'ի քերթողութեան՝ է յո-
 րին նիւթ , պէտք են , զի լուծումն հանգոյթ
 տիրապէս ծածկեսցի յաչտց դիտողին , և զի մի
 անտեղի անդանօր երևեսցին խափանք կարի
 պարզայօդք և կամ կարի շեղջալէպս շո-
 թեալք : Լուծումն է սանձահարութիւն սր-
 գելանացն ամենայնի՝ որք առաջի կային գլխաւոր
 անձին , կամ՝ է պարագայն այն , որ էտճն յա-
 ւարտ զանցս խաղարկեալ . և լինի կրկին , մի՝
 'ի ձեռն ճանաչման (reconnoissance , узнаніе) և
 միւս՝ 'ի ձեռն վիճահարսխուժման (Περίπétεια , br-
 tunaе mutatio , péripétie) : Առաջինն բերի 'ի
 յանդ , երբ յոչ լինելոյ անձինն գործող հս-
 սու հանգամանաց ինչ կաշկանդեալն հանգոյց
 լուծանի հուսկ ուրեմն , զի արդէն ածան նոյա
 յերևան ամենեցուն . և ետևոյն՝ յորում կատու-
 րի այդ , ասի յէշահարժ (внезапноcть , coup le
 théâtre) , յատուկ միայն գործողութեանց սքա-
 չիլապատում : Իսկ երկրորդն՝ երբ զառ 'ի
 ակարութենէն հանգոյց քակտէ հակառակորդին
 յաւազութենէ 'ի վայր հասումն անկարժ և մե-

ճահրաշ • այսպէս ահա Յովհաննէս գտանէ հնարա-
կորուսանել զԳոթողիա և թագաւորեցուցա-
նել զՌթողիայն որդի բարեպաշտ : Լուծումն 'ի
ձեւն վիճակափոխութեան կատարի ևս, երբ
գործողն ձեռնամուխ յիւր ինչ՝ կորնչի ինք-
նիս, բայց վիճակափոխութիւնն լինի յայնժամ
ձախորդ և անյաջող :

Սրէնք Տիւրքի հաստատեալ են յօրէնս
ճաշակի՝ որք միայն կարեն գիտել զոր գեղե-
ցիւն է, յօրէնս բանականութեան և նորին
գործականութեան : Եթէ կամք լինէր մեզ 'ի
զնն մատչիլ բնականին ընդ նմին և բարոյա-
կաին, ոչ լինէր բնաւ հնար ըմբռնել միան-
գամայն զբազմապատիկ մասունս նոցա, և 'ի մի-
ում նուագի ձեւակերպել 'ի միտս մեր և 'ի տե-
սարանի անդ զամենայն զանցս արժանայիշա-
տակ առ քննելոյ մանրամասն, ուստի և անջա-
տալ զայնս յիրերաց, տանիմք զուշադրու-
թիւն մեր 'ի գերագոյնն 'ի նոցանէ, և նուաւ
միմք 'ի կենդրոն մի զմտաւոր ընդունակու-
թիւնս մեր ամենայն • իսկ արդ՝ միութիւնն է
սոջատումն աւարկայի, որ քաջայարմար է նա-
խագրեալ նպատակին (1) : Աստի՛ միութիւն

(1) Allgemeine Theorie der schönen Künste, von J. G. Sul-

գործողութեան, տեղւոյ և ժամանակի, և 'ի սոցունց' միութիւն շարադրութեան, հանդուցի և լուծման, նա՛ բնաւորութեանց, զվերաբերութիւն կամիմ առ գլխաւոր հիմն նոցին, և ոճոյ՝ որ եկեալ զեղանակաւ ինչ խօսից, քաջաւայել է բնաւորութեանց և վիճակի գործողացն : Ընդ թէութիւնսդ զուգորդեալ է պարզութիւն՝ որ ազատութեամբ իմն բնիկ քաղցրացուցանէ 'ի քիմս մեր զզգացմունս սրտի և հոգւոյ, և որոյ է միայն կարեւոր թիւ հանդամանացն անցից, հակառակ միութեան՝ որ ըստ Բլեյրի կարէ երբեմն ունիլ և զիւրն Բադէպու-Բիւն (1) : Բայց զի մի ճշդասլուհութիւն կանոնիդ ձանձրացուցէ զմտադրութիւն ընթերցանելեացն, տեա՛րք եմք ընծայել այլապէս Բիւն ինչ անցից, ոճոյ և բնաւորութեանց, որք թէպէտ և հակակիր են կամ միակերպ, բայց միշտ տարբեր յաստիճանս ազդողականին (2) . աստի յառաջ գայ նորութիւն՝ որ կցեալ

zer. 2 Th. S. 26—30. — Dramatische Kunst, von A. W. Schlegel. 4 Th. S. 403.

(1) Lectures of Rhetoric and Belles Lettres in three volumes, by Hugh Blair. Lecture XLV.

(2) Les élémens de la Littérature, par Batteux. Tome III.

ընդ այլ գորութիւնս զգայաբանականս , տանի
 զերեւակայութիւն մեր 'ի զնին հետաքրքրու-
 թեան : Այլազանութիւնն մուծանի հարգա-
 սնն է , յարմարելի մասանց առարկային , որոց
 տարբեր են ժամանակ և տեղի , քաջադէպ հա-
 մեմատութեամբ ընդ նպատակի քերթողին :
 Յաւել առ այս գրառչաճոզն-իւն որ բաշխէ
 'ի մասունս իւրաքանչիւր ըստ որիշ վայելչու-
 թեան , զորմէ կախին աստիճանափոխութիւն
 ապաւորութեանց և ընթացից գործողութեան ,
 և բարեյարմար կարգաւորութիւն տեսարանաց .
 գրառչաճոզն-իւն որ զպարտուպտաշուճ դրու-
 թիւն վիճակի խնդրէ ընծայել գործողաց և
 կրից նոցին , 'ի խառվիլն 'ի նոսա հոգւոյն շարժ-
 մանց դիմամարտիկ (1) : Սկզբանցդ այդոցիկ
 քաջալաւ է նպատակ ազդողութեան 'ի միտս
 հանդիսացելոցն , երբ առաջնորդ է դոցա ճշշ-
 ճարտ-իւն-իւն որ չի այլ , բայց եթէ համեմա-
 տութիւն առարկելի նիւթոյն ընդ բնութեան
 և իդէպի : Մի անդէպ ինչ վարկանիցի աս-
 տանօր ասել՝ եթէ ճշմարտութիւնն , որ կարէ
 քաղիլ յաւանդութեանց անտի պատմաբանա-

(1) Cours analytique de Littérature générale,
 par Lemercier. Tome I. page 492.

կանաց և առասպելականաց, 'ի սկզբանց Հոգե-
բանութեան և նոյն ինքն երևակայութեան, չի
երբեքն հաւաստի (1), զոր օրինակ և սա է
ընդհակառակն (2): Ջսահմանս ճշմարտին հա-
տանէ (հատէ՞) 'ի հարկուհի, որոյ շարժա-
ռիթ ածէ ընդ իւր զհետեանս անհրաժեշտ. 'ի
հարկուհի, երբ գործողութիւն ինչ զօրէ անխա-
փան կատարել 'ի բնութեան. 'ի ճշմարտանման
կամ 'ի հարկուհի, որ 'ի խնդիր ելանէ պատճա-
ռի ինչ առ հաստատելոյ զնիւթն առարկելի,
և 'ի չարկուհի, որ յանդիման մեզ առնէ ըզ-
գերբնական ինչ զայնպիսի, որ սակաւադէպ է
կամ գեր 'ի վերոյ քան զճշմարտանմանու-
թիւն զամենայն: Անմեկնելի է առ 'ի զգայա-
բանական զօրութեանցդ եղերերգութեան և
ժեհի (3), նախ՝ գեղեցիկ յանդգնութիւն իմաս-
տից, ծնունդ ձևացուցման 'ի միտս մեր առար-
կայի ինչ գերաբուն և մեծարգի, որ 'ի վեր է
քան զհասարակ կարողութիւնն ըմբռնելոյ, ա-
ռարկայի ասեմ՝ որ է կնիք բնութեան 'ի նո-

(1) Le vrai peut quelquefois n'être pas vraisemblable.

Boileau. *Art poët.*

(2) Հստ Ա եմերսիերի. հոբր ւ. եր. 228:

(3) Διονύσιος Λογγίνος περὶ ὕψους. — Lycée de

La Harpe. Tome I.

բանշանան դերբնական, ՚ի տարածութեանն ան-
 չափ, ՚ի զօրութեանն և ՚ի դիմակալութեանն
 ոչ հաւասարի, ՚ի լռութեանն խորին և խա-
 լարչտին, կամ պտուղ կեղծեաց, խաղալիկ
 ստահակ և յանդուգն երեւակայութեան, խառն
 ընդ բարոյականին և վարդապետականին • ասոն
 քեզ հիմն պատկէրացուց՝ զստե՛ն-՛էն : Արկ-
 ըորդ՝ դերբնական վիճակ հոգւոյ, զնորին գի-
 տեմ շարժմունս, զխորհուրդս և զգործողու-
 թիւնս անսովոր, զքաջութիւն անընդիլ, զվի-
 հանձնութիւն անլուր, զկարեկցութիւն, զոչըն-
 չութիւն և զտկարութիւն մարդկան առ ամե-
 նակարողութեամբն Աստուծոյ, զչարութիւն ամ-
 բարձեալ ցաստիճան դերագոյն, սահմանազանց
 զճշմարտամանութեամբ, և զորս սաստիկս՝
 եթէ կրկնել իցէ հրաման, ներգործենն ՚ի
 նա, մինչ տանին զնա ՚ի վեհագոյնս և յազ-
 նիւս, կրթենն ՚ի գերաշխարհիկ չքնաղութիւն
 և ՚ի զարմանս ընդ հանդէս առաքինու-
 թեան, կամ հարկանեն զգողանի առ եղե-
 ուանցն օրինակօք անտես և անլուր • աստի վսե-
 մութիւն բարոյականութեան և կրից հոգւոյ,
 կայլ լաւ ևս ասել՝ զստե՛ն-՛էն զգացողու-՛էն :
 Քաջ աղղու լինի ՚ի մեզ առարկայն, երբ տի-
 րեն խօսից մերոց համառօտութիւն, պարզու-

Թիւն կամ զօրութիւն կարի, երբ նկարագրի
 վեհութիւն և յափշտակութիւն հոգւոյ կամ
 անձինն վիճակ գթածիդ և հաղորդարար. զի
 մերթ ճշմարտութիւն լոկ, բան մի մերկ, մերթ
 ինքն լուութիւն, գեղեցիկ հանդիսանան քան
 զմեծազարդ պաճուճանս պարբերութեանց
 ճոռումալիր: Երբորդ՝ խտիր բառից համոզա-
 կեր, գերակայութիւն ՚ի բացայայտութեան ի-
 դէպից, զճշգրիտ ասեմ բարանութիւն,
 զյիշատակ երիկայց և ապագայից, զգիմառ-
 նութիւն մեռելոց, զորոց և զնկարագրութիւն
 նոցա կենդանազիր, յաւել և զիրացն բնակա-
 նաց զըքեղազարդութիւն և առհասարակ զա-
 մենայն զհնարս՝ զորս հնարել մարթայցէ պեր-
 ճախօսութիւն չքնաղ. ահաւասիկ զոր անուա-
 նեմքս՝ վեհութիւն ոճոյ: — Մի առ տարադէպս
 համարեսցուք ՚ի կատարելագործութեան եղերեր-
 գականին և զընտրութիւն առարկային ճառելի:
 Տառապալիրն յուսահատութիւն պարագլխի
 ընդ արկածս թշուառ, կամ մահ նորին՝
 պանծալի սփոփանք առաքինեաց և յաղթա-
 նակ ժամանակեան որոց արժանի են պատու-
 հասից վասն գործոցն չարութեան, մահ ասեմ
 ոչ հասարակ ինչ, որ խաղաղ կարճէ զա-
 լուրս մարդոց, այլ որում կարապետեալն են

վիշտք և տանջանք չարաչար (1), մահ՝ որ արմատախիլ բառնայ զքարօրուծիւն կենաց, որ չէինչ անգերծ յարհաւրաց և ՚ի հետեանաց նոցին դառնաբեր նա՛ յորոց շարժենն զկիրս զօրեղ և թախծագին, քաղաքականութիւն, փառասիրութիւն, բանդագուշանք, սէր սաստիկ և յուսահատ զուգորդեալ ընդ այլ յարակիցս, են աղբիւրք միակ՝ ուստի քաղէ այրն շնորհաշուք զխրատս բարոյականութեան • թո՛ղ զկենսագրութիւնս երևելի անձանց, զքերթուածս Քանաստեղծութեան, Դերասանութեան, Նկարագրութեան և Քանդակագործութեան, որք պճնել կարեն զերևակայութիւն նորա ՚ի գեղեցիկս և յընչաւէտս պատկերաց :

Եղերերգութիւնն նկատի երրակի՛ ըստ «Կահո-Թեան, Կարգութեան և Էդանակի շարագրելոյ» : Ըստ որակութեանն՝ որպէս վկայէ Արիստոտել, բաժանի ՚ի «Կարգ» յորում գործողութիւնն թափուր է յարգելանաց ամենայնէ • ՚ի Բարգրեան՝ որ յանդիման առնէ մեզ զկեղակարծ վիճակափոխութիւն գլխաւորին յանձինս գործող • ՚ի Էրեյուշտ (2)՝ որոյ առարկայ են մեծամեծ աղէտք

(1) Handbuch der Aesthetik in Briefen, von F. A. Eberhard. 2 Ausg. Halle. 1809. 2 Th. S. 414.

(2) Աչ հետեւեցայ ինչ ՚ի բաժանմանդ

և թշուառութիւնք, և նստատակն կրթել ՚ի
 կարեկցութիւն և լուծանել յարտասուս . ՚ի
 Բարոյահան՝ որ քաջապնդէ յառաքինագործու-
 թիւն, ՚ի բարեկարգութիւն, ՚ի սէր առ հայ-
 րենիս և առ մերձաւորս, և յանձնախոստովա-
 նութիւն թերութեանց և մոլորութեանց : —
 Ըստ սլարագրութեանն լինի նա «բէսիւն» յորում
 արփիաճաճանչ փայլի արդարադասութիւն
 Աստուածային . «սասիւն» երբ աստուածք
 ինքնին մուծանին ՚ի տեսարան, կամ աներևոյ-
 թըս գործակցին օրհասաւճառութեամբն խիստ
 և անողոքելի . «սասիւն» որ կենդանա-
 գրէ զանցս ճշմարիտ, զբոյս բարուց ընտիր և
 երևելի ՚ի մէջ տարեգրութեանց աշխարհիս .
 «սասիւն» կամ հեղծեալ՝ որ ստեղծանէ զո՞գ զո՞չ
 եղեալս բնաւ, զպարագայս ասեմ և զպատահ-
 մունս անկարծ և անհաւաստի . «սասիւն» նկա-
 րիչ կենցաղակցութեան սոսկականաց, որ թէև
 կրտսեր է քան զբէսիւնսն ՚ի վսեմութեան

յայդմիկ Բերթողասօրս մերում խորենաց-
 ւոյ, որ (ք Գերս պիս .) զՅունական ձայնսն՝
 παθητικός և ηθικός իմանայ արիւնքն և
 Բարոյահան, յասելն իւր՝ «Բարոյահան»
 «(ἠθοποιία) ասիւն էս արիւնքնս, ասիւն Բար-
 արոյահանս, և հէսս խառնս : »

անդ իւրում, սակայն ըստ Մարմոնտելի (1) ունի զազնուութիւն ինքնավայել, և երբեք կարէ ապաքէն զանցանել զնովիմբ ՚ի կարեկցականին և ՚ի վարդապետականին: — Ըստ եզանակի շարադրութեան եղերերգութիւնն է հին (2) ճիշդ ՚ի կանոնապահութեան, որ բնիկ իմն վստմութեամբ կատարելագործէ զկազմուածն ողջոյն, կամ նոր՝ մերթ օտար յերկից միութեանցն, և մերթ բովանդակիւն ոչ արգոյից և մեծարուայ. յորում յանդիման լինին տեսարանք և բնաւորութիւնք կատակերգադէպ, սնտիապաշտութիւնք հասարակաց, հմայք, դիւթահարութիւնք, կերպարանափոխութիւնք, միով բանիւ միջին ժամանակացն ծնունդք այլազան (3). մուծաւ անդանօր յապայս և սէր՝ որ և եղև

(1) Oeuvres complètes de Marmontel, Tome V. page 128.

(2) Բաժանուամբս այս քաջայայտ է արդի բանասիրաց: Խորհրդով փոխեցի զԱլաուէնիւմն և զՌաճախիւմն նոցա ՚ի հին և ՚ի նոր, թէպէտ և վերջինդ ՚ի կարգաց երևի յոմանս ՚ի քերթուածոց նախնեաց:

(3) Տես զվերոյասացեալ գիրս զգայաբանութեանց: Աբերհարդ. հմր ք. եր. 450: Ալեգել. հմր ք. եր. 12:

կարևոր և միակ նպատակ արդի եղերերդու-
թեանց :

Առ գերաբունս յատկութեանց թատրոնա-
կանին ունէին հինք զգործակցութիւն գից և
ճակատագրի՝ վիճակակցել զունկնդիրս մեղա-
պարտին յակամայս, ընծայել զատելութիւնն
անհասութեան ամենակարող երկնից և զկարե-
կցութիւնն անձին հանդիսադիր : Նկարագրեալ
ըստ սլաշտամանյն հաւատոց իւրեանց, օրինաց
քաղաքականութեան և նոյն ինքն բարոյականու-
թեան զանհրաժեշտ վիճակ զայն՝ զոր նախասահ-
մանեալ էր նոցա օրհասավճիռն, ուսուցանէին
նոքա քաղաքակցացն զհամբերութիւն, զա-
րիութիւն և զհաստատութիւն խորհրդոց : Ա-
ռասպելաբանութիւն նոցա վկայէ զմահացուացն
հպատակիլ կամացն գից, և զգիցն անդարձ
ճակատագրի : Մեծութիւն թատրոնի, հանդի-
սահայեցութիւն և սովորութիւնն այն՝ որ ոչ
առնէր զկանայս միջամուտ ՚ի հանդէս խաղար-
կութեանց նա խօսակից ընդ արս (1), ընդ որս

(1) Աորնելիոս Նեստան ՚ի յառաջաբանու-
թեան անդ կենսագրութեանց իւրոց ասէ
զկանանց Յունաց Quod multo fit
aliter in Graecia : nam neque in convivium
adhibetur, nisi propinquorum; neque sedet,

և հանդերձք՝ որք զհասակ դերասանացն ցուցա-
 նէին արտաքոյ կարգի, տային նոցա մուծանել
 ՚ի տեսարան զդիմակաօքոզս և զվիթխարիս :
 Գողով օտար ՚ի սիրոյ, ընտրէին նոքա ՚ի գոր-
 ծիս համոզութեան զանցս յարգոյ, զբողոքս և
 զհեծութիւնս : Ակայ են քեզ առ այս՝ ապի-
 կարն Փիղոկտետէս, զիւրև զկապերտիկ ցնցո-
 տի, գետնաքարչ հառաչաձայն • դժոխահալածն
 Որեստոս՝ որ խնդրէր յԵլեքտրեայ սրբել ըզ-
 բերանոյն փրփուրս կատաղի • բլեռեալն զժայ-
 ուէ Պրոմէթէս • կոծաբեր սուգք Հերակլեայ,
 Այասի : Չսորին հակառակն՝ ՚ի քերթուածս
 նորոց մուծան փոփոխութիւնք բազում, շար-
 ժեւն զհոգի փոխանակեաց զազդողութիւն ճա-
 կատագրի և զգործակցութիւն դից առասպե-
 լականաց, պարն երգեցիկ եղև ՚ի յատկութիւն
 աւելորդ և պատահական, հանգոյցն եղ զհիմն
 իւր ՚ի վերայ անընդհատ միութեան, լուծումն
 ՚ի վերայ հաղորդաձգութեան, և յատկանիշք
 ՚ի վերայ ծանրաբարոյութեան, պատշաճողու-
 թեան և ազնուութեան : Բանաստեղծիցն Յու-
 նաց բաւէին գործք ինչ արքայական սերլն-

nisi in interiore parte aedium, quae γυ-
 ναιχωνίτις appellatur, quo nemo accedit,
 nisi propinqua cognatione conjunctus.

դեան, իսկ նորք հանին զնիւթս իւրեանց ՚ի
 տարեգրութեանց անտի իւրաքանչիւր ազգի
 և դարու, որով և անչափս տարածեցին զգոր-
 ծողականիդ նահանգ, կանուխմի սահմանափակ
 ՚ի փոքունս : Եղբրերգութեանցն հնոց տիրէին
 զգացողութիւնք և կիրք, կապակուիւք արենա-
 կցութեան և ընկերութեան, և յարմարավայելք
 դիւցազնականին և առասպելականին • Տանրա-
 մտեցան արդիք ընդ դիւրահաւանութիւն կար-
 ծեացն հնոց, չի՛ք ինչ նոցա շինուած կարի ըն-
 դարձակ, ուրանօր մարթ լինէր քաջագրեցիկ և
 զգալի առնել զիմաստս կորովի, վասն որոյ այլ ըն-
 թացս և կազմութիւն հաստեցին եղբրերգու-
 թեան, բուռն հարին զկենդանագրութենէ ներ-
 քին դիմամարտութեանց բնութեան, պատուոյ,
 պարտաւորութեանց, ցանկութեանց, զգացմանց
 և կրից հակադիր : Պատկերացուցութիւն կրից
 յատուկ է ամենայն ազգի և դարու, ուստի օրի-
 նագրութիւնդ այդ նորոց քաջահրահանգ է և
 տիեզերադէպ, ուր ընդ հակառակն՝ հաստուածք
 հնոց վայել էին միայն արարոց և սովորութեանց
 աշխարհի նոցա : Յոյնք նկրտէին ուսուցանել մար-
 դոյ զփորձանս ձախորդ, իսկ նորք յանդիման կա-
 ցուցանեն նմա զճշմարտութիւնն զայն շահաւէտ
 և փրկարար՝ եթէ պարտի նա երկնչիւ յինքենէ

և հեռանալ 'ի թշնամեաց անտի, որք որջանան
 յանձին իսկ իւրում, 'ի խորս ասեմ իւրումն
 սրտի: Ատելութիւն, բարկութիւն, ոխ, փա-
 ռասիրութիւն, բնաւին տարադիրք 'ի շարա-
 դրածայն Յունաց, և մանաւանդ սէր՝ որ ոչ ե-
 րևէր ինչ հնոց վեհ և ազնիւ, բաղկացու են արդի
 քերթուածոցն դործողականաց. ճարակ առնուն
 անդ կիրքդ այդոքիկ, և եղերերգութիւնն լինի
 'ի խրատ բարոյականութեան և քաղաքականու-
 թեան: Հինք գունակէին ըստ նկարուց Չի-
 նաց 'ի ներկս պայծառ և փայլուն, և սրատ-
 կերք նոցա զուրկ են ամենեին 'ի ստուերար-
 կութենէ. առ նորս տեսանին բաղում փոփո-
 խութիւնք և երանգազանութիւնք, որք և ընծա-
 յեն գրչի առաւել կորովութիւն և զգացողու-
 թիւն:

Ո՛չ 'ի յետնոց կարգի է յարհեստս քերթո-
 ղականին՝ 'ի վայելուչ կենդանագրութիւն ածել
 զարս սլատմելի: Գործող անձինք՝ գլխաւորք,
 միջինք և յետադասք, բերեալ յընդաբոյսս
 իւրեանց 'ի բնական, երթան ըստ հաճոյիցն մտաց
 և կամաց, երկուց մեծամեծ ընդունակութեանց
 հոգւոյ՝ որք կացուցանեն զմարդն բարոյական.
 միոյն՝ զի ծնող է իմացութեան և բարուց, և
 միւսոյն՝ զի բնաւորութեանց է աղբիւր ինքնա-

բուռնիս : Չօրութիւն կամաց տեսանի 'ի գործս մեր և յարարողութիւնս ըստ յատկութեանց այլ և այլ , որոց հիմն են հաստատուն՝ արմատացեալ 'ի մեզ կիրք բազմադիմի . ուստի բնաւորութիւնն եղերերգական չէ քան եթէ զլլխաւոր կիրք ինչ ըստ մասանցն ամենայնի , որ 'ի դիմի հարկանի այլոցն հակակայից : Եւս՝ զի առ յատկութիւնս անձանց ունին գործողք զգացմունս , զինիք գիտեմ փոփոխութեանցն այնոցիկ և նախասկիզբն շարժմանց , զորս տարրացուցանեն 'ի հոգիս տպաւորութիւնք զանազան : Նա՛ կիրքն իսկ նոյն՝ են զգացողութիւնք ամբարձեալ ցգերագոյն աստիճան , յորս և ակներև ընծայի հոգւոյն զօրութիւն բարոյական (1) . բարքն՝ եղանակ գործողութեան մտաց և կամաց , ունակացեալ 'ի ձեռն սովորութեանց և դաստիարակութեան , իսկ դատողութիւնքն եղերերգադէպ՝ կնիք բնաւոր զօրութեան , վարժից , բնաւորութեան և բարուցն գործողաց :

Նպատակ եղերերգուին , որպէս և ասացի՝ ուղղել զբարս մարդկան , վարեալ 'ի հանդի-

(1) Physiologie des passions ou nouvelle doctrine des sentimens moraux , par J. L. Alibert. Tome II.

սարան անդ զարարս ինչ օրինակադէպ • Բայց
 զի որ էարկն յանհնարին 'ի վիշտ համայն զտէ-
 րութիւն, էարկ 'ի նա այն զազգատոհմ մի,
 չեն պէտք կրից զոհի մեծահամբաւ, առ ըն-
 ծայելոյ խրատուդ՝ խրատ ընդհանուր: Սէր,
 ատելութիւն, սնապարծութիւն, նախանձ, ոխ
 և այլ կիրք թուներն զաղբիւրս երջանկութեան
 զսուտնին իման և զհասարակացն: Եւ արդարեւ
 եղերերգութեանն սոսկականի իւրն շահեկանու-
 նութիւն, զոր օրինակ և դիւցազնականին օ-
 գուտ ինքնավայել • Բայց չէ ևս արժան չքմե-
 ղիկս զանց աստ անձին ընծայելոյ զտիրապէսն
 առաւելութենէ վերջնոյդ 'ի բարուցն կամիմ
 'ի նկարագրութեան: Նախապատիւքն 'ի հա-
 սարակապետութեան դժուարաւ արդեօք լինին
 հասու՝ եթէ աղէտք կենացն հանուրց են նոցա
 յօրինակ ահաբեկ • նոքա ծանօթ են և ընտանի
 միայն որոց նմանն են նոցա • իսկ արդ՝ պէտք
 են եղերերգութեան, նոցա միայն յատուկ, և
 դիւցազնականիդ ահան միայնում վիճակեալ է
 լինիլ յարժանի խրատ 'ի մեծագին: Բազմա-
 դիմի են եղանակք սանձահարելոյ զմոլորու-
 թիւնս ժողովրդեան, բայց ոչինչ այնչափ հա-
 զուագիւտ 'ի կրթել զիշխանս փառահեղ: Յե-
 ղերերգութեանդ յայդմիկ յառաջ բերին հրա-

պուրանք նոցա առ հեշտասիրութիւն . անե-
 րևոյթս բազմին նոքա ընդ ոսկեզօծ յարկաւ օ-
 տար առագաստից , և տեսանեն զմիմեանս ներ-
 կայ 'ի հինաւուրցն ժամանակս վաղուրեմն : Ան-
 դանօր գեղեցիկ իմն յանդգնութեամբ խօսի ընդ
 նոսա ճշմարտութիւնն . անդանօր 'ի դատաս-
 տան մատնի բանականութիւն մարդկութեան ,
 իրաւունք ամենայն դնին 'ի կշիռ , պարտաւորու-
 թիւնք ամենայն գան զպայմանաւ , և իշխանու-
 թիւնն հաստի 'ի կոպար . անդանօր սկզբունք
 բնական նաև զորս ազդէ բանականութիւնն ,
 հիմն 'ի վեր տապալեն զնախապաշարմունս դաօ-
 տիարակութեան ապականարար . անդանօր նկուն
 լինի հպարտութիւն , և փառքն ընդունայն բե-
 րի 'ի խոնարհ . անդանօր բացարձակն ինքնիշ-
 խանութիւն բռնակալ տեսանէ զիւր կորուստ ,
 և սնապանծութիւնն վտանգի յալէկոծութեան :
 Անդանօր զգայ իշխանն զամենայն զմեաս մոլե-
 գին կրից հոգւոյն՝ որում ամենայն ինչ է հնա-
 զանդ , և որոյ միայն գործ անխոհեմ է զի
 դժբախտութիւնս կուտէ զժողովրդով . անդա-
 նօր իմանայ նա քաջ՝ եթէ է մարդ , եթէ
 պէտք են նմա կարեկցութեան առ մարդիկ , և
 եթէ կարօտէ սիրոյ մարդկան . անդանօր հուսկ
 ուրեմն անդիմակ 'ի տես նմա անկանին ստու-

թիւն , դարան , շողոքորդութիւն և դաւազար-
 ծութիւնք գաղտնահար , որք զաճուի աճեն
 անդադար յարքունիս իւր : Եւ արդ՝ յետ կոր-
 ծանմանդ չնաշխաքհիկ , առադատ իշխանին և
 թատրոն հանդիսի , և եղերերդութիւնն՝ սլար-
 դութիւն կազմակերպութեան , որ և նիւթ նո-
 ըին բաղկացու • առաջօքն ցնորք մեծասանձ
 յաղթանակէ յառադաստի , և ճշմարտութիւնն
 ՚ի տեսարանի անդ խաղարկութեանց :

՚Ի ՀԵՂԻՆԱԿԻՆ

Քաջայայտ է ամենեցուն, եթէ թաղաւորութեանն Յուդայ բաղկացու էին երկու ազգք՝ Յուդա և Բենիամին, և թէ այլ տասունքն՝ որք վտարանջեցան ՚ի Ռոբովամայ, կացուցանէին զթաղաւորութիւն Իսրայելի: Որովհետև արբայիցն Յուդայ՝ որոց ՚ի Դաւթէ անտի ձգէր տունն, վիճակեալ էր քաղաքն Երուսաղէմ տաճարաւ իւրով հանդերձ, քահանայք և ղւտականք անկան ընդ իշխանութեամբ նոցա և կացին միշտ սիրայօղ, մանաւանդ զի ՚ի կառուցմանէ անտի տաճարին Երուսաղէմայ արդէն արգելեալ էր այլուր պատարագաբերութիւն ամենայն, և զի այլ համայն սեղանք՝ զորս կանգնէին Աստուծոյ ՚ի վերայ լերանց, և որք ըստ այսմ ՚ի սուրբ գիրս ասին Բարձրան, չէին ինչ հաճոյ նմա: Արդ՝ օրինաւոր պաշտօն Տեառն էր միայն ՚ի Յուդա • իսկ մնացեալ տասն ազգք բաց յարանց սակաւուց կային կամ ՚ի կապալաշտութեան կամ ՚ի հերձուածս:

՚Ի վերայ այսր ամենայնի քահանայք և ղւտականք ինքնին կացուցանէին սղգ Թնչ բազ-

մաթիւ : Նորա բաժանեալ էին ՚ի դասս
դասս՝ ճառայել կարգաւ ՚ի տաճարին , և պաշ-
տօնափոխ լինէին յիւրաքանչիւր եօթնեկի :
Քահանայքն էին ՚ի տանէ Ահարոֆնի . սոքա
միայն ունէին հրաման զոհելոյ զզոհս : Ղևտա-
կանքն էին հպատակեալ սոցա , և բաց յայլ
պաշտօնատարութեանց հոգային զերգս , զհան-
դերձանս պատարագաց և պահէին զպահպանու-
թիւն տաճարին : Երբեմն յայս անուն Ղևտա-
կանաց կոչէին անխտիր ամենեքեան՝ որք էին
՚ի ցեղէս յայսմանէ : Շաբաթամուտքն բնա-
կէին որպէս և քահանայապետն ՚ի շրջապատ
սրահս կամ ճեմելիս , որք բաղկացու էին տա-
ճարի : Բոլոր շինուածն կոչէր առհասարակ՝
«ուրբ» «եղի» . բայց զայս անուն կրէր յաւէտ այն
մասն ներքին տաճարի , ուր գտանէին ոսկի աշ-
տանակք և սեղանք վասն խնկոց և վասն հացի
պատարագին (1) : Այս մասն անջատեալ էր ևս
՚ի սրբութենէն սրբութեանց , ուր էր տապա-
նակն ուխտի , և ուր քահանայապետն և եթ ու-
նէր իրաւունս մտանելոյ մի անգամ ՚ի տարւոջ :
Թուի ստոյգ իմն աւանդութիւն՝ թէ լեառն , յո-
րոյ վերայ կանգնեալ էր տաճարն , իցէ նոյն ինքն՝

(1) Թաղ . ք գերբ . Է . 48,49 : Եւրից . Էս :

ուր Աբրահամ 'ի պատարագ մատոյց երբեք
զորդի իւր զԽասակ :

Արժան անձին համարեցայ յանդիման տրկա-
նել աստանօր զմանաւոր սլարադայս , զի մի՛
որոյ չէ այնչափ քաջայայտ՝ պատմութիւն հնոյ
կտակարանի , դժուարասցին ինչ յընթեռնուլն
զայս եղերերգութիւն : 'ի սմա բովանդակի
բազմիւ Յովասայ յաթու . ոյր ազագաւ թէ-
պէտ և ըստ կանոնի հարկ էր ինձ ճակատագրել
զայն Յովաս , բայց որովհետև բազումք խօ-
սին զքերթուածոյս յաճախեալ յանունդ Գու-
թողիա , անդէպ դատեցայ առաջի առնել նո-
ցա զայն այլով մակագրաւ , այնու առաւել զի
Գոթողիա է մի յերևելի անձանց եղերերգու-
թեանս , և զի մահուամբ նորա կնքի այս շա-
րագրած :

Ահաւասիկ քիզ գլխաւոր կանխապատեհք
ինչ մեծամեծ դիտուածոյս այսոցիկ :

Յովրամ , որդի Յովսսափատայ , եօթներորդ
արբայ Յուդայ 'ի տանէ Դաւթի , էառ կնու-
թեան զԳոթողիա , գոուստր Աբահաբու և
Յեզաբելայ , որք թագաւորէին յԻսրայելի , և
որք երկօքին իսկ՝ յաւէս Յեզաբել , հռչա-
կեալ էին արիւնահեղ հալածմամբք 'ի վերայ
մարդարէից : Գոթողիա անօրինացեալ ըստ

օրինակի մօր իւրոյ, էաճ վաղվաղակի և զայրն
 ՚ի կռապաշտութիւն, և ետ կանգնել յԵրու-
 սաղէմ մեհեան մի Ճանճիկ Բաճաղու՝ որ էր
 աստուած աշխարհին Տիւրոսի և Սիդոնի, ու-
 րանօր ծնեալն էր Յեզաբել : Յովրամ՝ զկնի
 կոտորածի ՚ի ձեռաց Արաբացոց և Փղշտաց-
 ւոց ամենայն արքայորդւոց իւրոց բաց յՈթողիայ,
 չարատանջ մեռաւ յերկարատե հիւանդու-
 թեանէ ընդերածախ : Աղետալի մահ սորա ոչ
 խափանեաց զՈթողիա երթալ ըստ անօրէնու-
 թեանց հօր և Գոթողիայ մօր իւրոյ : Ջկնի
 միամեայ և եթ թագաւորութեան իւրոյ զնա-
 ցեալ Ոթողիայ յայցելութիւն արքային Իսրա-
 յելի՝ եղբօր Գոթողիայ, գոգցէս դատապար-
 տակցեալ ՚ի սատակումն տան Աբաճաբու,
 սպանաւ հրամանաւ Յէուայ, զոր ձեռամբք
 մարգարէից իւրոց օծեալ էր Աստուած թա-
 գաւոր Իսրայելի՝ առնել զնա պաշտօնեայ վրի-
 ժաւութեան իւրոյ : Յէու սատակեաց զամենայն
 ծնունդս Աբաճաբու, և ընկէց ՚ի պատուհանէ
 զՅեզաբել՝ զոր ըստ մարգարէութեան Եղիա-
 յի կերին շունք յագարակի Նաբովթայ Յեղ-
 րայելացոյ, զոր սպանեալն էր ամբարշտուհիս
 առ գրաւելոյ զժառանգութիւն նորա : Գոթո-
 ղիա լուեալ յԵրուսաղէմ քաղաքի զամենայն

Կոտորածս զայսոսիկ, բունն եհար յիւրուքն
 կողմանէ՛ ՚ի բաց կորուսանել զազգն Դաւթի, և
 սրոյ ճարակ արար զորդիս և զթոռունս Ոբոզիայ :
 Սակայն ըստ մեծի բարեյաջողութեան, Յով-
 սաբէ՛ քոյր Ոբոզիայ և դուստր Յովրամայ, **Յով-**
 բայց յայլմէ մօրէ և ոչ յորմէ ծնեալն էր
 Գոթողիա, ՚ի ժամուն յայնմիկ՝ յորում սպա-
 նանէին զեղբօրորդիս իւր զարքայազունս, եգիտ
 հնարս դողանալոյ ՚ի միջոյ դիականցն զմատազն
Յովա՝ որ էր տակաւին ստնդիաց, և յանձն
 արար զնա ընդ կաթնտուի նորա առն իւրում
 քահանայապետի • զորս և թագոյց նա ՚ի տա-
 ճարին, ուր ՚ի ծածուկ դաստիարակէր մանուկն
 մինչև ցօրն՝ յորում օծեալ եղև արքայ **Յու-**
 դայ : Պատմութիւն թագաւորաց ճառէ՛ թէ
 այս անոց էանց յեօթներորդ ամի ծննդեան նո-
 րա, բայց Յոյն բնագիրն Մնացորդայ՝ որում
 հետևեցաւ և Սեվերոս Սուղպիկիոս, խօսի զայս-
 մանէ լինիլ յութերորդումն : Սոյն այս և ետ
 ինձ ստեղծաբանել արքայիս այսմիկ իննամեայ
 կամ տասնամեայ հասակ՝ առ ՚ի կարող ընծայել
 զնա ՚ի սլատասխանատուութիւն առաջարկեալ
 նմա հարցմանց :

Թուի ինձ՝ թէ ոչ ետու նմա խօսիլ ինչ ՚ի
 վերջան զկար մանկան, որոյ են միանգամայն

միտք և յիշողութիւն . բայց եթէ առ փոքր մի
 անդր է իմ անցեալ, իմա՛ զի մանուկդ չէ՛ ոք
 սոսկական, այլ ՚ի տաճարի կրթեալ ՚ի նոյն ինքն
 ՚ի քահանայապետէ՛ որոյ խնամեալ զնա իբրև ըզ-
 վերջին յոյս ազգի իւրոյ, կանխաւ ուրեմն մար-
 ղեաց զնա յամենայն պարտաւորութիւնս, որք առ
 կրօն իւր և որք առ օրէնս կառավարելոյ: Ման-
 կունք Հրէից ամենևին ո՛չ վարժէին ըստ մեծի
 մասին համաշխարհակցացս . նոյա ուսուցանէին
 զսուրբ գիրս ո՛չ միայն անդստին ՚ի ստանա-
 լոյ զվարիլն բանականութեան, այլ՝ եթէ
 հրաման ինձ իցէ ՚ի գործ աստանօր դնել զբան
 սրբոյն Պօղոսի, ՚ի ստեանց անտի մարց նոցա :
 Իւրաքանչիւր Հրէի պարտ ՚ի վերայ անձին ե-
 դեալ էր զմի նուագ ՚ի կեանս գրել իւրով ձե-
 ոամբ զողջոյն սուրբ գիրս, իսկ արքայք պար-
 տական էին օրինակել զայն երկիցս, և ՚ի վե-
 րայ այսորիկ պատուէր կայր նոցա ունիլ զայն
 անդուլ առաջի աչաց : Աստանօր կարեմ ասել՝
 եթէ յաւուրս մեր յայսոսիկ Գաղղիա տեսանէ
 յութնեկէսամեայ օգոստափառ զաւակի իւրում՝
 որ է ՚ի սխրալիս բերկրանացն, նազելի օրինակ
 ամենայնի, զոր կարէ առնել ընդ մանկան գե-
 ղեցիկն բոյս բարուց ընտիր դասախարակու-
 թեամբ հանդերձ, և զի եթէ տուեալ էր իմ

մատաղ Յովատայ զնոյն աշխոյժս և զնոյն խտիր՝
որք զարմանալի իմն առնեն զպատասխանատու-
թիւնս ծաղկափթիթ արքայորդւոյս, իրաւամբք
արդեօք ստգտեալ էին թէ յանցեայ ընդդէմ
կանոնաց ճշմարտանմանութեան :

Ըստ որում հասակ Չաքարիայ՝ որդւոյ քա-
հանայապետի, չի՞ք նշանակեալ ուրեք, կարէ
իւրաքանչիւրօք ըստ հաճոյիցն համարիլ զնա
երկու կամ երեք ամօք աւագ քան զՅովաս :

Ի տնօրինել զառարկայ իմ հետեւեցայ երևե-
լի մեկնչաց բազմաց : ըստ ապացուցութեանց
նոցա, զորս հանեն ՚ի բանից իսկ անտի սուրբ
գրոց, թէ այն ամենայն զինուորք՝ որոց Յովի-
ադա կամ Յովիադ, որպէս կոչէ զնա Յով-
սէփ՝ ետ վառիլ զինուք, զորս Դաւիթ նուի-
րեալ էր Աստուծոյ, և թէ առաջնորդք նո-
ցա հնգեակ հարիւրապետքն՝ էին քահանայք
և զլետակահք : Յիրաւի՝ ասեն մեկնիչքն, ՚ի
արքայարոյց պատերազմի ամենայն ինչ պարտ էր
լինիլ սուրբ, և աշխարհայնոցն համայն տարա-
զիր էր կալ անտի : Գործ էր յայնժամ ան-
փորձ պահել ՚ի սան Դաւթի ոչ միայն զգայի-
սոն իշխանութեան, այլ և զյաջորդութիւն զա-
ւակաց մեծի արքայիս այսօրիկ՝ յորոց ճնանելոց
էր Մեսիա. «Իբրզի Մեսիա՛ որ և ստէպ խոս-

«տացեալ եղև իբրև որդի Աբրահամու, պարտ
 «էր լինիլ որդի Դաւթի և ամենայն արքայիցն
 «Յուդայ:» Ըստ այսմ բարեհամբաւն և բազմ-
 մահանճարն Մօ (1)՝ զորոյ զբանս զայսօտիկ յա-
 ռաջ է իմ աստանօր բերեալ, կոչէ զՅուլաս «մե-
 «ծագին մնացորդ ՚ի տանէ Դաւթի:» Զայս բան
 կրկնէ և ինքն Յուլսէփ. նա՛ սուրբ գիրք յայտ-
 նապէս ասեն՝ թէ Աստուած կամեցեալ պահել
 զճրագ՝ զոր ինքն խոստացեալ էր Դաւթի, ոչ
 իսպառ ջնջեաց զտուն Յուլրամայ: Եւ արդ՝
 զի՛նչ էր այս ճրագ, բայց եթէ լոյս՝ որ երբեմն
 ճառագայթել ունէր յազդ մարդկան:

Պատմութիւնն ոչ նշանակէ ամենևին զօրն
 զայն՝ յորում Յուլաս բազմեցաւ յաթոռ թագա-
 ւորութեան Յուդայ. բայց և այնպէս մեկնիչք
 ոմանք համարին զայն օր՝ օր տօնախմբութեան:
 Ըստ իս՝ քաջադէպ եղև ՚ի մատակարարել եր-
 գոցն պարու սյլազանութիւն ինչ ՚ի ձեռն պէս-
 պէս պարագայից, ընտրել առ այս զմի յերկից մեծ
 հանդիսիցն Հրէից զօր պենտեկոստէի՝ յորում
 տօնէին զյիշատակ ընդունելութեան օրինաց
 ՚ի Սինայեան լերին, և ՚ի նուէր մատուցանէին
 Աստուծոյ զնոր հնձոց զառաջին հացս, ոյր
 վասն և տօնս այս ասէր առ նոսա՝ ⲙⲟⲩⲏ ⲙⲏⲙⲉⲣⲁⲓⲟⲩ

(1) M. de Meaux.

ԿԵԼՈՅ ԽԽՄՃԻՈՅ ԽԲԺԽԷՍՅ (1) :

Չպարն երգեցողաց կացուցանեն մատաղատի աղջկունք յազգէ Ղևեայ, որոց 'ի գլուխ կարգեալ է իմ զպատանուհի ոք իբրև զքոյր Չաքարիայ, Սաղովմիթ անուն : Սա ինքն է՝ որ ածէ զպարն առ մայր իւր, երգէ, խօսի ընդ նմին և միանգամայն տանի զպաշտօն Պարագլիէ (Coryphée) երգեցիկ դասուցն հնոց : 'ի փորձ ևս մատեայ երթալ ըստ հնոց 'ի շարունակութեան անընդհատն դործողութեան, որով թատրոնն նոցա ոչ մնայր երբէք դատարկ, և միջոցք գործողութեանցն տեսանէին ևեթ 'ի տաղերգութիւնս և 'ի բարոյական խորհրդածութիւնս պարուն՝ որք վերաբերէին առ որ անցանէրն անդանօր :

Գուցէ աւելորդ իմն յանդգնութիւն համարեսցին, զի համարձակեցայ վարել 'ի տեսարան անդր զԱստուածարեալ մարգարէ ոք՝ նախագուշակող ապագայից : Բայց 'ի զգուշութեան կացի յաւէտ, և 'ի շրթունս նորա արկի միայն զասացուածս՝ զորս հնար էր ինձ քաղել 'ի մարգարէից անտի : Թէպէտ և սուրբ գիրք չասեն որոշակի զՅովհադայ որպէս զորդւոյ նորին զգենուլ զոգի մարգարէու-

(1) ԵԼԷԳ. ԻԿ. 16 :


թեան, այլ յանդիման զնա կացուցանեն իբրև
 զայր լցեալ շնորհօք Աստուծոյ. ոչ ապաքէն ըստ
 բանից իսկ Ատակարանին մարթ էր մարգարէու-
 թիւնս սունել նմա՝ ծայրագոյն ասեմ պետին քա-
 հանայից : Ըստ այսմ և վարկանիմ, զի ետեսնա
 հոգևով զողորմ կենցաղափոխութիւն Յովասայ,
 որ յետ երեսնամեայ բարեպաշտ թագաւորու-
 թեան ետ զինքն՝ ՚ի չար խորհուրդս հրապուր-
 չաց և յանցոյց զանձն իւր սպանմամբ Չաքա-
 րիայ՝ որդւոյ և յաջորդի քահանայապետիս այ-
 սորիկ : Այս սպանդ՝ որ եղև ՚ի տաճարին, էր
 մի ՚ի գլխաւոր պատճառաց բարկութեանն Աս-
 տուծոյ ՚ի վերայ Հրէից և ամենայն վատաբախ-
 տութեանցն՝ որք անցին ընդ նոսա յապայս .
 ըստ որում և ՚ի կարծ ընդոստնուն՝ թէ յօրէ-
 աստի յայսմանէ գլխովին զկայ առին պատաս-
 խանատուութիւնք Աստուծոյ ՚ի սրբութեանն
 սրբութեանց : Սոյն այս և ետ ինձ սզգեցուցա-
 նել զՅովիագա ՚ի գուշակել մի զհետ միոյ և՛
 զաւեր տաճարին և՛ զկործանումն Արուսաղեմայ .
 բայց զի մարգարէք իբր ՚ի բազումս միսիթա-
 րութիւն յարէին ՚ի սպանալիս, և զի գործ
 էր բազմեցուցանել յաթոռ զմի ՚ի նախնեաց
 Մեսիայ, ՚ի գէպ վարկայ աստանոր աւետարա-
 նել զգալուստ միսիթարչին՝ որում հառաչանօք

ապաքէն ակնունէին ամենայն հաւատացեալք
 'ի հնուքն : Այս տեսարան , իբրև Մեջտարու-
 Ռիւն (1) ինչ , յանդիման բերէ զերաժիշտս
 ըստ սովորութեանն այնմիկ , զոր ունէին բազումք
 'ի մարգարէից 'ի զարթուցանելն զսրբազանս 'ի
 յափշտակութեանց 'ի ձայն արուեստական նուա-
 զարանաց : Ահայնքն քեզ այսմ' ժողով մար-
 գարէից , որք եկին առ Սաբուղ տաւղօք և
 քնարիւք հանդերձ զորս տանէին առաջի նոցա ,
 և նոյն ինքն Աղիսէ' յորմէ հարցին զհանդեր-

(1) Episode, իսկ յաւելուածոյ կամ Մեջտարու-
 Ռիւն' զոր բանազարդ իմի այլազանութեամբ
 մուծանէ հեղինակն 'ի Քնարերգական ,
 'ի Դիւցազնական և կամ յայլ ինչ բանա-
 ստեղծութիւն , որ և գոլով օտար 'ի բուն
 վիպասանութենէ , վարի գոգ անյայտ կապա-
 կցութեամբ ընդ նիւթոյ : Առ Յոյնս միջա-
 դրութիւնն այն , անուանեալ Գործողութիւն
 յաւելեալ 'ի վերայ Գործողութեան (Πράγμα
 πράγματι συναπτόμενον) , էր այն ամենայն'
 որ ոչ հայէր 'ի դասն երգեցիկ , իբրպէ 'ի
 հնուքն պարն , գոգցես դատաւոր արարողու-
 թեանց անձինն գործող և միջնորդ բոլոր
 մարդկութեան , էր գլխաւոր յատկութիւն
 եղերերգականին :

Ծանօթ . Թարգմանչի :

ԳՈՐԹՈՂԻԱ



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ .

ՏԵՍԱՐԱՆ Ա .

Յովնայ , Աբնէր .

Աբնէր .

Յաւիտենին երկըրպագուս օրհներգաբան
Յայս սուրբ տաճար եկի ըստ հին սովորութեան
Տօնել ընդ քեզ ըզմեծ վայս օր , յորում տուան
Մեզ 'ի Սինայ Տեառն պատուիրանք տասըն-
բանեան :

Ո՛վ փոփոխմանց . 'ի հնումն փողոյն բարձր ա-
ղաղակ

Չընքաղ աւուրս չե զմեզ առնէր կանխագիտակ ,
Այն ինչ սըրահքէ ծաղկաղարդեալ մեր տա-
ճարին

Հանդիսադիր խուռն բաղմութեամբ լընանէին :
Լմենքին 'ի սուրբ սեղանն կարգաւ մուծեալ ,
Չերախայրիս անդաստանայն 'ի ձեռս առեալ ,
Պըտուղս Հաստչին տիեզերաց նուիրէին .

Առատ զոհմանցն և քահանայք ժաման չէին :
Ժողովըրդեանս ահա խափանս եղեալ չար կին ,
Չպայծառ օրեր դարձոյց յօրեր խաւարչըտին ,
Մինչ սակաւուց յեռանդալիյն երկըրպագուաց
Հազիւ բերել մեզ նըշանակ զաւուրց նախնեաց .
Նա՛ մընացորդք ըզՏէր Աստուած մեր ուրանան ,
Եւ կամ փութան 'ի Ռահաղու զապիր մեհեան ,

Քաջավարժիլ յամօթալի խորհուրդս նորին ,
 Պըղծել զանուն՝ զոր հարք նոցա վերօրհնէին :
 Գուցէ և զքեզ , դողամ յանձին , Գոթողիայն
 Հեռացուսցեն ՚ի սեղանոց գործք դաւաճան :
 Անդէն իսկ ժանան ՚ի քեզ զիւր քէն ունի
 [Ժափել ,
 Եւ պանծացեալ ընդ նոր պատիւ՝ զայլս [Ժա-
 կարթել :

Յովիադա .

Ուստի՛ այսօր նախազգացումնդ այդ սառն ՚ի քեզ :

Աբներ .

Դու անվըտանգ կարծես մընալ սուրբ , մըշտա-
 հեզ :

Աաղուց խոտէ Գոթողիա զհաստատութիւն ,
 Որ զառաւելն բերէ խուրիդ պայծառութիւն .
 Աաղուց ահա՛ զառ մեր հաւատս քո սէր ըզվառ
 Նա համարի վըտօրանջումն աղմըկարար :
 Դըշխոյն դաժան , չարանախանձ ընդ յարդ
 փայլուն ,

ԸզՅովսաբէ եպերէ զկին քո մեծանուն .
 Դու Յովիադ , ժառանգորդ ես Ահարովի ,
 Եւ Յովսաբէ է քոյր վերջին մեր արքայի :
 Մաթան , Մաթան , պըղծադաւան լիրբ քահանայ ,
 Չար քան զտիկինն՝ որում յոռի խըրատս միշտ տայ ,
 Մաթան , մերոցս սուրբ օրինաց ոսոխ , մատնիչ ,
 Եւ ամենայն գործոց բարեաց խիստ հալածիչ ,
 Յօտար ՚ի միթր ճակատազարդ չեղեալ հերիք ,
 Պաշտէ զհասազ մեր զլատականդ այդ դասալիք .

Ատեայ զտաճարս , և թէ 'ի ձեռս իւր յաջողէր ,
 Այն զԱստուած՝ զոր ուրացաւն , ջընջել կամէր :
 'ի քո կորուստ յոչինչ հընարս նա խընայէ .
 Ե զի խըղճէ , է զի կարի ըզքեզ գովէ .
 Ե զի ընդ քեզ սուտ քաղցրութեամբ 'ի սէր
 յարի .

Խրոխտ յարուցեալ անդրէն 'ի քէն սեաւալեղի ,
 Ե զի ըզքէն չարախօսէ առ դըշխոյին ,
 Կամ զառ ոսկի տեսեալ զանյագ ծարաւ նորին ,
 Կեղծէ նըմա՝ թէ ըզԴաւթի թագուցանես
 Ձգանձս 'ի տեղուջ , զոր մի միայն դու ճանաչես :
 Ուստի թուի Գոթողիս տառապագին ,
 Ձաւուրս երկու լըցեալ 'ի սուգ անհընարին :
 Տեսի երեկ , ըզհայեցուածս սարսափելիս
 Ձըգէին աչքն 'ի շնորհալիր 'ի սուրբ տեղիս ,
 Իբրու թէ Տէր ընդ այս յարկաւ լայնատարած
 Ձիւր քինառու պահէր՝ նմա տալ ըզվասն չա-
 րեաց :

Հաւատան ինձ , մինչ միջամուխ ես յայդմ լինիմ ,
 Այլ չերկբայիմ՝ թէ քեզ չիցէ նա ոխերիմ ,
 Թէ մարդասպան ապա և դուստրդ Յեզաբելեան
 Ոչ յարիցէ և 'ի վերայ տանս սըրբութեան :

Յովհադա .

Որ զալէկոծ ծովու ծըփանս սանձել կարաց ,
 Ածցէ և սանձ ըզմիաբան դաշամբք չարաց :
 Հըլու եմ ես սուրբ կամաց Տեառն , ես երկընչիմ
 'ի նըմանէ , և զայլ երկիւղ բընաւ չունիմ :
 Բայց շընորհ տամ քեզ վասն անկեղծ այն նա-
 խանձու ,

Որով ողջոյն իմ վըտանդաց լինիս հասու •
 Ընդ գործքս չար դու վայրանաս 'ի քուժ անձին •
 Չէ քո այն զսիրտ մերկացեալ զեռանդագին •
 Տեառն օրհնութիւն , բայց բարկութեամբդ
 այդու գաղտնի
 Առանց դործոց կամիս մընալ առաքինի •
 Հաւատք անգործ մի՞թէ հաւանք է ճըշմարիտ •
 Ահա զուժն ամս օտարազդի կին չարամիտ
 Ըզգայիսոն Դաւթի գրաւեալ յանիրաւի ,
 Լուղեալ յարեան թագազարմից մեծայարգի ,
 Մատնեալ 'ի սուր զորդիս համայն որդւոյ իւրոյ ,
 Չեռս ամբառնայ մինչ 'ի ճակատ Տեառն Աս-
 տուծոյ •
 Հաստախարիսխ սիւնդ տէրութեանս դիւրակոր-
 ծան ,
 Որ զինակիրթ վարժեալ 'ի դաշտս Յովսափա-
 տեան ,
 Առ Յովսամաւ էիր դընդից պետ քաջասէր ,
 Որ յաղմըկեալ քաղաքսն հանգիստ հաստատեցեր ,
 Երբ մահ անբախտ Ոքողիայ անկարծահար
 Չզօրս առաջի Յէուայ ցիր և ցան արար ,
 Պընդես անդուլ՝ թէ երկընչիս դու յԱստուծոյ •
 Այսպէս իմովքս շըրթամբք կարդայ 'նա յուն-
 կըն քոյ •
 «Ի՞՞ր ճըղնիս զանձնդ ընդ իմ օրէնս սիրազարդել •
 «Չընչի՞ն զոհիւք զիս խորհիցիս փառաբանել •
 «Չի՞նչ ինձ օգուտ 'ի քոյդ ըստէս պատարագայ •
 «Մի՞թէ արի՞ւն ինձ երընջոց և նոխազաց •
 «Դու՞՞թէ արիւն թագաւորացդ , բայց չէս նըմին

«Ունկնամատոյց • բարձ զեղեռունս, զուխտս չա-
րածին •

«Փռլթան ըզմեղս իսպառ յաղգէ իմմէ ջընջել ,

«Ապա ըզքոյդ եկ ինձ ըզգոհս պատարագել :»

Աբներ •

Եւ զի՞նչ մարթիմ առնել վասն մերս ազգաց
տըկար •

Ահա սնգոր Բենիամին և Յուդա չար :

Յորմէհետէ բարձաւ սերունդ թագաւորաց ,

Բարձաւ իսպառ և սէր նոցին առ գործս նախ-
նեաց :

Նոյն և Աստուած՝ ասեն , 'ի մէնջ 'ի բաց եկաց •

Որ էրն երբեմն Եբրայեցւոց փառանախանձ ,

Անկարեկից է յոտնակոխն 'ի մեծ ութիւն •

Դադարեցաւ բընաւ առատ իւր գըլթ ութիւն •

Չիք վասըն մեր այլ ևս բազուկն վարհուրելի ,

Որ հըրաշիւքն զմարդ հարկանէր ըզդողանի •

Սուրբ տապանակն լըռէ , չասէ մեզ զապառնի :

Յովիադա •

Ե՞րբ յաճախեալ են հրաշք քան յայսմ ժամա-
նակի •

Ե՞րբ Տէր այսչափ զիւրն մեզ եցոյց զկարողու-
թիւն :

Ազգ ապերախտ , միթէ քեզ միշտ 'ի կուրուլթի՞ւն

Տուեալ են աչք . . . մինչև զիջցի քո սիրտ ան-
գուլթ ,

Ընդ գործս անլուր ծանր լըռելեացդ եցէ՞ ինչ
փոյթ :

Կամօրս, զի զհրաշս ամից քեզ յուշ, յարգոյ
 Աբներ,
 Հրաշք մեծամեծ՝ որովք լըցեալ են աւուրք մեր:
 Կորեան իսպառ դաժան բըռունք Իսրայելի,
 Արդարացան ըսպառնալիք Տեառն սոսկալի.
 Իարք և անդն զարիւն զմուլի Աբահաբու,
 Անդ՝ զոր պըղծեալ էր նա սըրբոց անբիծ մահու.
 Անկաւ դըշխոյն չար Յեզաբել մերձ ահագին
 Տեղւոյն սպանման. ձիք առաժուր զնա ջարդեցին,
 Ըունք ըզնեխեալ արիւն նորա լախլիզեցին,
 Եւ զգարչելին անդամ անդամ յօշատեցին.
 Չիք այլ ժողովն այն սըտախօս մարդարէից,
 Եւ ՚ի սեղանն խընկանուէր էջ հուր յերկնից.
 Տարերց տիրէր սուրբն Եղիաս, ահա փակեալ
 Աուլաւ երկին և ՚ի պըղինձ գողցէս փոխեալ
 Չերեամ յերկիր ոչ անձրեւէր և ոչ ցօղէր.
 Չայն Եղիսեան զմեռեալս ՚ի կեանս դարձու-
 ցանէր:

Ծանիր, Աբներ, ըստ այս գործոց հըրաշալից
 ՉԱստուածն ըզնոյն՝ որպէս և էրն յաւիտենից.
 Նա քաջ գիտէ, յորժամ հաճի, ըզփառս զգե-
 նուլ.

Նա ոչ ունի ՚ի մըտաց զազդ իւր ընկենուլ:

Աբներ.

Բայց ո՞ւր են փառք՝ զորս խոստացեալ էր նա
 Դաւթի,

Որք կանխասաց եղեն և նոյն Սաղովմոնի:

Մեք յուսայաք՝ թէ ՚ի ցեղէդ բարեբախտիկ

Ծընցի մեզ շար թագաւորաց քաջամարտիկ,

Թէ ՚ի վերայ ազգայ , լեզուայ ամենազան
 Մին ՚ի նոսա կայցէ արքայ միահեծան ,
 Թէ նա մարտից և խռովութեանց դիցէ վախճան ,
 Եւ թէ նրմա իշխանք երկրիս լիցին կոխան :

Յովիտադա .

Դու ուրաննս ամենեւին զխոստմունս երկնի :

Աբներ .

Եւ ո՛ւր իցէ այն թագաւոր , որդի Դաւթի
 Միթէ կարէ՞ երկին փոխել ըզգօս ծառոյ ,
 Ծառոյ կամիմ , մինչև ցարմատ չորացելոյ :
 Գոթողիս ըսպան զմանուկ յօրօրոցի .
 Յառնե՞ն մեռեալք յետ ութամեայ ժամանակի :
 Ո՛հ եթէ նա ըզկատաղիս իւր էր թողեալ ,
 Կամ արքայիցս արեան կաթիլ մի դադարեալ . . .

Յովիտադա .

Հապա . զի՞նչ էր քո արարեալ :

Աբներ .

Օր բարեբախտ .

Ա. իմս արքայ յնրալիսի սուրբ խանդ մեծերախտ
 իմ էր . երթեալ մերս առ նովաւ ազգք
 ամենայն

Բայց ընդէ՞ր զիս որսան կեղծիքս այս ընդունայն :
 Թըշուառ ժառանգ թագաւորացս յաղթաբա-
 զուկ

Ոքողիսս որդւո՛ւք հանդերձ կայր միայնուկ :
 Տեսի ես ինքն , ըզհայրն Յէու նետահարեաց .
 Տեսեր և դու , զի զիւր որդիս մայրն սատակեաց :

Յովիադա •

Այժմ լըռեսցո՛ւք • քայց երբ աւուր աստղըն
 յերիւ
 ՚ի մասըն իւր լեցի յեզերտս շըրջանադիր ,
 երբ հընչեսցէ ժամըն երրորդ յաղօթս առ Տէր,
 ե՛կ այսր միւս ևս ՚ի դոյն եռանդն անձնանուէր :
 Քեզ յայտնեսցէ Տէր Աստուած մեր շնորհօքն
 անհուն ,
 Թէ ոչ սըտէ, թէ իւր խոստմունք են հաստատուն :
 ե՛րթ , ժամ է ինձ զաւուրս հոգալ զհանդեր-
 ձանիս •
 Սպիտակազգեստ է ընդ այդն արդէն յարկ տա-
 ճարիս :

Աբներ •

Ո՛վ շընորհացդ դըժուարագիւտ, անգիտելի...
 Ահա՛ առ քեզ դայ Յովսաբէ մեծայարգի :
 Փուժամ ես այժմ ժողովակցիլ հաւատարմաց,
 Որք խուռներամ եկին յայս տօն հասարակաց :

ՏԵՍԱՐԱՆ Բ •

Յովիադա , Յովսաբէ •

Յովիադա •

Տեկին , էանց այն ժամանակ : Դէպ է խօսիլ •
 Յաջող գողօնդ այլ ոչ կարէ քօղաւորիլ :
 Բենամարտից յանդըգնութիւն իմն չարաչար
 Այսն արարեալ ըզլըռութիւն Հաստչին զերկար,
 Ըզտուրբ խոստմունս իւր համարի խաբէութիւն •
 Ահա՛ և բախտ զնոցին վառէ զկատաղութիւն ,

Եւ Ռահաղու փուխայ մօրու քո ամբարիշտ
 'ի մեր սեղանս բուրեւ ըզխունկ կըռապարիշտ :
 Ցուցցո՛ւք, ազգաց զարբայորդին՝ զոր փըրկեցեր .
 Ընդ իւր թևովք 'ի տաճարի կըրթեաց զնա Տէր .
 Ըստ քաջազանցն Եբրայեցւոց նա երթիցէ .
 Ահա և խելքն ըզհասակաւ գերազանցէ :
 Բայց մինչև բանքս ըզվիճակին վըճիւ հատցեն,
 Ձնա ձօնեցից որում արբայք թագաւորեն .
 Եւ կոչեալ զազգ զլետականաց, քահանայից,
 Ըզճաղկափթիթն յաթու իւր հարցն հաստա-
 տեցից :

Յովսաբէ .

Գիտէ՞ արդեօք նա զիւր անուն, զբախտ գերադոյն :

Յովիադա .

Պատասխանէ յեղիակիմ կոչեալ յանուն .
 Ձինքըն մանուկ՝ զոր մոռացեալ իցէ իւր մայր,
 Եւ զիս վասն իմս առ նա խնամոց համարի հայր :

Յովսաբէ .

Ո՛հ 'ի սաստիկ 'ի վըտանգէ զնա փըրկեցի,
 Եւ յևս սաստիկ՝ նոր այլ վըտանգ այժմ անկանի :

Յովիադա .

Դու մերկացար յանձնէ զհաւատս քո առաջին :

Յովսաբէ .

Ընդ քո խորհուրդս, տէր իմ, յօժար եմ գըլ-
 խովին :

Յորմէհետէ 'ի մահուանէ զնա կորզեցի,

Ը զնրմանէն խընամ ողջոյն քեզ յանձնեցի :
 Յիմա կաթողին առ նա սիրոյ դո՛ղ երկուցեալ ,
 Փախչիմ անտի՛ ուր իմ հանդէպ լինի կանգ-
 նեալ ,

Ձ ի մի անկարծ առ աչս նորա աղմուկ պըղտոր
 Ծորեալ զարտօսը ընդ բերանս հանցէ զդաղտ-
 նիս իմ խոր :

Ձ երիս աւուրս , զերիս գիշերս ինձ ըսփոփանք
 Լին միայն իմ արտասուք և սուրբ մաղթանք :
 Բայց մարթացնոյց արդեօք 'ի քէն այժմ հար-
 ցանել ,

Ո՛յք են ընկերքդ՝ քաջայարդարք քեզ հետևել :
 Աամբ՝ Աբներ , հըղօրն Աբներ , մեզ պաշտպա-
 նել .

Երդուան նա քեզ զիւր արքայի ըլթեկն ածել :

Յովիադա .

Թէպէտ Աբներ հաւատարիմ լիցի , գիտեմք ,
 Բայց չէ նրմա դեռ յայտ՝ թէ զիւրն արքայ
 պահեմք :

Յովսաբէ .

Այլ ո՛ւմ ըզպահ ունիս յանձնել ըզՅովասայ .
 Ո՛չ Աֆսովնայ մընայ պատիւս կամ Ովբեդայ .
 'ի նոսա հօր իմոյ բարեաց շըհորհք հեղան :

Յովիադա .

Ամենեքին Գոթողիայ վաճառեցան :

Յովսաբէ .

Ձ ո՛ յարուսցես ճակատամարտ ընդ դիմակայս :

Յովիադա .

Քեզ ասացի՝ թէ զղևտականս, ըզքահանայս :

Յովսաբէ .

Քոյդ նախատես հողովք այն յոյժ բազմացեալ
 է թիւ որոց է ընդ քեզ գաղտ համախոհեալ :
 Յո՞ր սէր առ քեզ , 'ի վրէժ առ չարն Գոթողիա,
 Աաղուց երդուքն հանդիսաւոր ձրգէ զնոսա
 Յորդին Դաւթի՝ որ վերածնել ունի բազմաց :
 Բայց յոր եռանդն և վառեսցին 'ի վհապանձ,
 Նոքա միայն կարե՞ն առնուլ ոխ զարքային .
 Առ այդ մեծ գործ բաւէ՞ արդեօք նախանձ նոցին :
 Ո՞չ գիտիցես՝ թէ իմացեալ Գոթողիայ ,
 Եթէ պահեալ է մին յորդուոց Ռթողիայ ,
 Սէդ այլազգեաց գընդաւն զտաճարս զայս պա-
 տեսցէ ,
 Եւ զանպաշտպան դըրունսն իսպառ խորտակեսցէ :
 'ի դէմ նոցա մի՞թէ բաւե՞ն սուրբ պաշտօնեայք,
 Որք առ Հաստիչն միշտ ձեռամբարձ զցերեկ
 և զցայդ ,
 Գիտեն միայն հեծել , մտղթել վասն մեր մեղաց,
 Եւ ընդ նըմին զարիւն հեղուլ ըզսուրբ զենլեաց :
 Թերևս խոցեալ 'ի խոր հարուածս Յովաս
 անմեղ

Յովիադա .

Ո՞չինչ գըրես զմեր մարտակիցն Աստուած ասեղ .
 Աստուած՝ որ զորքս միշտ խընամէ , որ զըրու-
 նութիւն
 Ատեայ զչարաց , որ 'ի տըկարս զկարողութիւն

Իւր ցուցանէ, որ և երդուաւ 'ի Յեզրայէլ
 Բնաջինջ առնել զչարն Աքահաբ, ըզՅեզաբել.
 Աստուած՝ որ զայր դըստեր դոցա զՅովթամ հա-
 րեալ,

Ըզտուն նորին մինչև ցորդին է հալածեալ .

Աստուած՝ ոյր ձեռք քինախընդիր, առ ժամս
 անգործ,

Չըգին յայս ազդ ամբարտաւան ծանըր 'ի փորձ:

Յովսաբէ .

Քանզի յարքայսդ կըշռեցան խիսք յիւր իրա-
 ւանցն,

Ընդ եղբօրորդւոյս ես երկընչիմ ընդ դըժբախտ
 անձն .

Եւ ո՞ գիտէ՝ թէ 'ի ծընէ չարեացապարտ

Ընդ պատժահարսն չիցէ մանուկն այն դատա-
 պարտ,

Թէ և Աստուած զնա ոչ դասեալ յազգ ատելի,

Արդ հաճեսցի գըթալ 'ի նա վասըն Գաւթի:

Ո՛հ չար աղէտք, զորս էր կուտեալ զնովաւ
 երկին,

Յուշ ինձ բերին՝ յիս ծընանիլ խէթս ահագին:

Սըրախողխող արքայազնիւք պալատն էր լի .

Սուր 'ի ձեռին Գոթողիա անհաշտելի

'ի սպանդ վայրագ զիւր զինաւորս սըրտապընդէր,

Յառաջ զիւրոցն հուղիահարաց ըզհետս վարէր:

Յովաս անկաւ ինձ յաչս, թողեալ իբրև մե-
 ռեալ .

Արդ ևս 'ի միտ գայ ինձ դայեակն զասի հա-
 րեալ,

Որ 'ի նանիր խըտասըրտացն յաղերս կանգնէր,
 Որ ինքն անգօր, ըզտղայն տապաստ 'ի գիրկս
 պահէր :

Ձարիւնաներկն առի զՅովաս. ըզդէմս թացեալ,
 իմարտասուք էին զզգայմունս իւր զարթուցեալ.

Առ երկիւղի կամ առ 'ի զիմ շահիւ ըզսէր

Ձիս անարատ ձեռօքն անդուլ ողջագուրէր :

Իմս առ նա սէր մի լիցի, Տէր, սէր չարըմբեր.

Մերումս Դաւթի նա մընացորդ է պատուական.

Սերապըճնեալ ընդ քոյդ հաւատս 'ի սուրբ
 քո տան,

Այո՛ ոչ զոք նա բաց 'ի քէն ճանաչէ հայր :

'ի յարձակիլն յայն թագուհի վընասահար

Եթէ զհաւատս իմ սպառեացէ չար պատահար,

Եթէ հոգի իմ ահաբեկ ալէկոծեալ,

Հաղորդեսցի յարտօսը՝ զոր եմ ընդ նա հոսեալ,

Ձանմեղ զմիակ ժառանգն խոստմանց քոց պահ-
 պանեան,

Եւ զիս միայն վասն յանցանացս պատուհասեան :

Յովիադա .

Այդ արտասուօք ոչ բերես զանձնդ ըզմեղանօք,

Բայց Տեառն հրաման՝ յուսալ մեր յիւր գոգն
 հայրական .

Չէ կոյր յարհօրս . վասն հօր չարեաց նա ոչ
 պատժէ

Բընաւ զորդին՝ որ երկընչի 'ի նըմանէ :

Որք են 'ի մէջ Եբրայեցւոց հաւատարիմ

Նորոգ այսօր ընդ նըմա ուխտ դիցեն մտերիմ :

Իբրև զի մերս սըրբոյն Դաւթի աղգ՝ մեծարի,

Անօրէն դուտար Յեզաբելայ թըշնամանի :
 Զնոսա Յուլաս յիւրն շարժեսցէ յանմեղու-
 թիւն ,
 Որով այն պըճնեալ է իւր շքեղ արիւն :
 'ի ձայն երկնից մերս օրինակ հաստատեսցի .
 'ի տաճարի իւրում ընդ սիրտս Տէր խօսեսցի .
 Նըմա երկու արքայք դըժնեայ հարան զդիմի .
 Յաթոռ բազմիլ այն թագաւոր միայն պարտի ,
 Որ յուշ երբեմն անցէ՝ թէ զնա 'ի շարս հաւուց
 Աստուած ձեռամբք պաշտօնէիցն հանդիսացոյց ,
 Եթէ նոքօք յանյուշ շիրմէ ըզնա կորզեաց ,
 Եւ թէ զշիջեալն ջահ ըզԲաւթի նոքօք վա-
 ռեաց :

Ո՛վ մեծդ Աստուած , թէ վըճուեցեր երբէք
 հեռի

Լինիլ մանկանն 'ի բարեգնաց հետոց Բաւթի ,
 Թո՛ղ յաճիլն անդ պըտղոյ նըման բարձցի ցար-
 մատ ,

Կամ դառնաշունչ փըջմամբ անկցի փոթորկա-
 հատ .

Բայց եթէ սոյն այս դիրդ մանուկ , քեղ հընա-
 զանդ ,

Է շահաւէտ գործիք կամաց քոյինաւանդ ,

Տո՛ւր զգայիսոն նըմա զնախնեացն առ 'ի յաջորդ ,

Եւ յիմ թոյլ ձեռս մատնեա՛ զիւր քաջ հա-
 կառակորդ :

Խըռովս յարո 'ի միտս տիկնոջն պըղծադաւան .

Հաճեաց , Աստուած , հաճեաց 'ի նա և 'ի Մա-
 թան

Բաշխեւէ զհոգի մուրրութեան , ըզցընորման ,
 Ըզկարասեա թագաւորացն ողորմ անկման :

Չիք ինձ սլարասլ . մընա՛ բարեաւ : Տէս , ըզ-
 սուրբ տանց
 Իւր քերք հանդերձ ածէ որդիդ զսլարս աղջը-
 կանց :

ՏԵՍԱՐԱՆ Գ .

Յովսէփէ , Չաքարիս , Սաղսփիւ , Պար էրգէցողաց :

Յովսաբէ .

Մի յասլաղեր , Չաքարիաս իմ սիրելի .
 Փութա՛ն , որդեակ , երթաւ ընդ հօր քում սլա-
 տուելի :

Դըստերք Ղևեայ , հաւատարիմ ուխտ նորատի ,
 Չորս աճեն սէր և բարութ իւնք Տեառն Ա-
 րարչի ,

Որք դայք ըստէս հաղորդակցիւ յիմ հեծու-
 թիւնս ,

Դըստերք նաղիկ , միակ սփոփանք յիմ նեղու-
 թիւնս ,

Ըզփունջս ձեռացդ և ըզգըլսոցդ ծաղկանց կո-
 կոնս

Իր զի յաւուրս յարդարէիք ՚ի մեծատօնս .

Բայց աւանդ մեզ , զարդիս ՚ի ժամ ողբոց , վըշ-
 տայ

Չոր ընծայ Տեառն դէս է բերել քան զար-
 տասուայ :

Բայց և սիհա լըսեմ ըզձայն ըզսուրբ փողոյն .

Մեք 'ի տաճար մտանել ունիմք միահաղոյն :
 Մինչ կազմեցայց 'ի խաղայուլմն հանդիսական ,
 Ուխտ գողտրական , օրհնեալ զԱստուած յերգս
 բարեբան :

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Պար երգեցողայց :

Բողոք պար երգե .

Լի է աշխարհ յանմահարար շընորհան բա-
 րեաց .

Մեծացուցէք , տո՛ւք նըմա փառս 'ի յաւիտեան :
 Իւր տէրութիւն կանխեաց ըզնունդ ժամանա-
 կայց .

Օրհներգութիւն իւր մեծութեան :

Չայն արարի .

'ի զուր սաստք չար և անօրէն

Ափս 'ի բերան դընեն ազգացն՝ որք զնա պաշ-
 տեն .

Անուն իւր սուրբ է յարակաց ,

Եւ օր աւուր զիւրոցն պատմէ փայլիւն զփառաց :
 Լի է աշխարհ յանմահարար շընորհան բա-
 րեաց .

Օրհներգութիւն իւր մեծութեան :

Բողոք պար երգե .

Լի է աշխարհ յանմահարար շընորհան բա-
 րեաց .

Օրհներգութիւն իւր մեծութեան .

Չայն արարի .

Նա տայ ծաղկանց նազիկ նըկար .
 Բուսուցանէ ,
 Հասուցանէ ,
 'ի պտուղս ձեռօքն մատակարար
 Ըստ չափու բաշխէ տօթ ըզտուընջեան ,
 Գիրգ զովութիւն ըզգիշերոյ .
 Եւ տոկոսեօք զայն ամենայն
 Անդն բարեբեր շնորհէ մարդոյ :

Չայն երկրորդ .

Ասէ , և կեանս տայ բընութեան վըճիտ արփին .
 Չեռացն են գործ ճաճանչք նորին :
 Օրէնք իւր սուրբ և փըրկական
 Յանձառ պարգև են պարգևեալ ազգի մարդկան :

Չայն երրորդ .

Լեառն դու Սինայ , անջի'նջ պահեա ըզյիշատակ
 Մեծի աւուրն բարձրահրաչակ ,
 Երբ 'ի քո վըլուխ վառեալ բոցով
 Տէր մեր ըզթուխ սրտեալ զամարով ,
 'ի մահացուս ըզլոյս ծագեաց
 Չսքանչելահրաշ զահեղ փառաց :
 Ասա՛ առ ի'նչ այն հուր , որուք և շառաչմունք ,
 Հեղեղք ծըխոց , փայլատակմունք , օդոց շաչ-
 մունք ,

Այն մեծագոչ փող՝ որ հընչէր .

Միթէ կամէ՞ր նա անցանել ըստ տարերց սահ-
 ման ,

Կամ յիւրում հին հիմնարկութեան
Յո՛ւմալ կըլանել զերկիր ունէր :

Չայն չորրորդ .

Եկն միւսանգամ առ աչս որդւոցն Եբրայեցւոց
Շառաւիղել զօրինաց լոյս անմահական .

Եկն պատուիրել ժողովըրդոց ,

Զի սիրեսցեն զինքն 'ի սուրբ սէր յաւէժական :

Բոլոր պար .

Ո՛վ Տէրունեան քաղցրիկ պատուէր ,

Սուրբ իրաւունք, շնորհք պատուական .

Ո՛վ ծայրագոյն երանութեան ,

Թէ տընկեսցին 'ի սիրտըս մեր հաւատք և սէր :

Չայն աստուծոյն .

'ի ծանր լըծոց զմեր հարս փըրկեաց ,

Յանապատի անդ կերակրեաց :

Պատուէրս մեզ տայ , տայ նոյն և զանձն իւր
վասըն մեր ,

Ուստի կամի՛ զի սիրեսցուք զինքն 'ի սուրբ սէր :

Պար .

Ո՛վ Տէրունեան քաղցրիկ պատուէր :

Նոյն ճայն .

Ասան հարց մերոց ըլծովս եբաց ,

Յանքեր վիճէ աղբիւրս բըղխեաց :

Պատուէրս մեզ տայ , տայ նոյն և զանձն իւր
վասըն մեր ,

Ուստի կամի՛ զի սիրեսցուք զինքն 'ի սուրբ սէր :

Պար .

Սուրբ իրաւունք, շնորհք պատուական .
 Ո՛վ ծայրագոյն երանութեան ,
 Թէ տընկեսցին 'ի սիրտըս մեր հաւատք և սէր :

Երկրորդ ձայն հայն .

Ո՛վ ապաշնորհք՝ որք զահ գերեաց և եթ գիտէք,
 Բարին Աստուած ո՞չ կարասցէ ըզձեզ մեղմել .
 Միթէ դըժուար թուի սըրտից ձեր դառնասէգ,
 Ծանր իցէ ձեզ ըզնա սիրել :

Դողայ գերի առ յերեսաց բըռնակալին .
 Բայց ո՞չ այնպէս , որդիք ըզհայր սիրել պարտին .
 Կամիք , զի Տեառն անձրեկացին 'ի ձեզ բարիք .
 Եւ զնա սիրել երբէք չունի՞ք :

Բոլոր պար .

Ո՛վ Տէրունեան քաղցրիկ պատուէր ,
 Սուրբ իրաւունք, շնորհք պատուական .
 Ո՛վ ծայրագոյն երանութեան ,
 Թէ տընկեսցին 'ի սիրտըս մեր հաւատք և սէր :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ .

ՏԵՍԱՐԱՆ Ա .

Յովսափէ, Սաղոմոն, Պար էրֆէյոյսոյ .

Յովսափէ .

Բա՛ւ է, դըստերք . դաշա՛ր առէք յօրհներգու-
թեանց .

Ժա՛մ է և մեզ յարիւ յաղօթս հասարակաց :
Ահա՛ մեզ դէպ . ո՛ն երթիցո՛ւք տօնախըմբել,
Ըստ մերում կարգի յանդիման Տեառն այսօր
կանգնել :

ՏԵՍԱՐԱՆ Բ .

Ձա՛ւարիա, Յովսափէ, Սաղոմոն, Պար էրֆէյոյսոյ .

Յովսափէ .

Ձի՛նչ տեսանեմ . որդեակ, ընդէ՛ր յետըս
դառնաս .

Յո՛ գունատի և շընչահատ այդպէս փութաս :

Ձաքարիա .

Մայրեկ .

Յովսափէ .

Հապա, զի՛նչ դու :

Ձաքարիա .

Տաճարն մեր սըղծեցաւ :

Յովսաբէ .

Զինորդ .

Չաքարիա .

Սեղան Տեառն Աստուծոյ յանյուշս արկաւ :

Յովսաբէ .

Ո՛հ սարսափիմ . . . լուսաւորեմ զմիտս իմ ծըփեալ :

Չաքարիա .

Հայր իմ՝ գըլուխ քահանայից , պատարագեալ
 Ըստ օրինաց ըզնոր հընձոց զհաց առաջին
 'ի ձօն Հաստչի՝ որ խընամէ զազգ մարդկային ,
 Արիւնալից ձեռօք զուխտին ըզհաշտութեան
 Ըզծըխաշունչ ընդերս բերէր 'ի նուիրան :
 Կանգնեալ յոտին Եղիակիմ մեր սիրական ,
 Պաշտէր ըզնա զիւրե իմ պէս զվըշեայ երկայն :
 Մինչ քահանայքն ըզթողուլուրդ և ըզսեղան
 Արեամբ զենլեաց ուողէին յերգս օրհնաբան ,
 Յարեաւ անկարծ ձայն խառնիխուռն . ահա՛ կա-
 ուեան

Աչք ամենայն , արձանացան ամենեքեան .
 Կին ոք . . . չկարեմ խօսիլ առանց հայհոյութեանց .
 Կին ոք . . . նա էր . . . Գոթողիա , կին դառնու-
 թեանց :

Յովսաբէ .

Տէր իմ .

Չաքարիա .

'ի օրահ՝ ուր միայն արք մտանել կարեն ,
 Սիգաճակատ վարէր ըզգնացս կինն անօրէն .

Այա կամէր նա անցանել ընդ ցանկապատին
 Ընդ սուրբ սահմանս՝ ուր ղևտականք միայն մը-
 խին :

Ամենուտեք խոյս տայր ամբոխն ղահի հարեալ .
 Հայր իմ վայրագ էր բարկութիւն զաչո իւր
 վառեալ .

Փարաւովնի այնչափ ասեղ չէր ինքն Մովսէս :
 «Տեկին , ասաց , եւ յահագին ՚ի տեղւոջէս ,
 «Ուր չէ արժան լինիլ կընոջ նա՛ դըժնէի .
 «Յառնե՞լ լըրբիս ՚ի մեծն Աստուած ՚ի կեն-
 դանի : »

Յայնժամ խոժոռ հայեացս ձըգեալ տիկինն դա-
 ժան ,

Այն ինչ բանայր յիշոցատու ըզպիղծ բերան ,
 (Չգիտեմ՝ քերեալ առ իւր աչօք հըրեշտակին ,
 Եցո՞յց արդեօք նմա զշանթեռանդն սուր ահագին),
 Պասլանձեցաւ ասո՛ն լեզու իւր նոյնհետայն ,
 Նըկուն եղև ժըզըրհութիւն իւր ամենայն .
 Մընաց եկաց ականակառոյց . անշարժ էր նա .
 Եղիակիմ յաւէտ յապուշ կըրթէր ըզնա :

Յովսաբէ .

Զի՞նչ ասես . . . ո՞հ , Եղիակի՞մ առ աչսն անկաւ :

Չաքարիա .

Մեք երկոքին հայեաք յայն կին անիրաւ ,
 Եւ զմի խռովու՞մն սիրտք մեր յայնժամ խըռովէին .
 Սակայն ընդհուպ զմեզ քահանայքն արտաքս հա-
 նին :

Եւաք անտի . զոր անդ եղևն սյլ ո՛չ գիտեմ .

Պատմել զաղմուկս աստ աս քեզ առի ես ճեմ :

Յովսաբէ .

Ի մեր ձեռաց խըլել ունի զնա թագուհին .

Չարահամբոյրն զնա ինքն խընդրէր ՚ի տաճարին :

Գուցէ առիթն իմ արտասուաց յայսմ ՚ի սլա-
հու

Տէր , առ կոծուլքս յիշեան զԴաւիթ , զծառայդ
հըլու :

Սաղովմիթ .

Եւ ո՞ արդեօք իցէ առիթն քոյդ արտասուաց :

Չաքարիա .

Ո՞չ տեսանես զԵղի՞ակիմայն վըտանդ զկենաց :

Սաղովմիթ .

Զիմրդ նա յանձն շարժեաց ցասումն ըղթա-
գուհւոյ :

Չաքարիա .

Ո՞ երկեցէ ՚ի յանտերունչ , յորք տըղայոյ :

Յովսաբէ .

Ա՛հա՛ դըշխոյն . ո՞ն թագիցուք մեք յիւր աչաց :

ՏԵՍԱՐԱՆ Գ .

Գողթուիա , Ագար , Աբնէր , Այի Գողթուիայ .

Ագար .

Տիկին , մեկնեաց դու ՚ի տեղեաց աստի չարաց .

Աստ տիրեն գարշ գըրգիւ , հրասլոյրք ամբօխալից .

Թող զայս տաճար 'ի բնակութիւնս քահանայից .
 Թափեալ զմըտացդ խորհուրդս խաւար , և յա-
 պարանս
 Փուլթալ փուլթա խընդրել անձինդ ասլահուլանս :

Գոթողիա .

Քան յայդ յինէն . չէ ինչ անյայտ քեզ ցաւ սըրտիս :
 Ե'րթ և ասու , զի փուլթասցէ Մաթան առ իս .
 Երանեցայց , եթէ նովաւ ըզցանկալի
 Գըտից զհանգիստ' որ հանապազ յինէն փախչի :

ՏԵՍԱՐԱՆ Դ .

Գողողիա , Աբներ , Այն Գողողիայ .

Աբներ .

Ներեալ , տիկին , եթէ ածեմ թեկն ըզնորա :
 Մի գարմասցիս դու ընդ այն գործ Յովիադայ .
 Ահաւասիկ մեր Տեառն պատուէր յաւէթական .
 Նա մեզ եցոյց զիւր սուրբ տաճար և ըզսեղան ,
 Ըզզոհս յանձնեաց միայն որդւոց Ահարոֆի ,
 Ղևտականաց նըշանակեաց զպաշտօն , զտեղի .
 Բայց և յաւէտ ազգի նոցա խըստիւ արգել
 Բաց յինքենէ զայլ ոք աստուած բնաւ ճանաչել :
 Աւանդ , որ եսդ արքայագնեացս և կին և մայր ,
 Ընդէ՞ր 'ի մէնջ օտարանսս մինչև ցայս վայր .
 Դու ո՞չ գիտես ըզմեր օրէնս . հա՞րկ է այսօր
 Ահա Մաթան . ընդ նմա թողուամ զքեզ աստանօր :

Գոթողիա .

Ինձ հարկաւոր ես դու , Աբներ . ընդ իս մընս :

'ի բայց թողցուք ըզլըբբուծիւն Յովիադայ
 Եւ զբաղմուծիւն զայն պաշտամանց ձեր սը-
 նոտեաց ,
 Որք ըզտաճարդ փակեալ պահեն առ յայլազ-
 գեաց :
 Այլ ինչ անլուր պատճառ է իմ դառն թախ-
 ծուծեան .
 Գիտեմ , 'ի զէն կըրթեալ յաւուրց քոյ մանկա-
 կան ,
 Անկեղծ ես դու , ըզթագաւորս քո մեծարեա ,
 Եւ 'ի սըրտէ ըզքոյդ Աստուած սիրես , պաշտես :
 Կայց աստ :

ՏԵՍԱՐԱՆ Ե .

Գոթոզիա , Մաթան , Աբհէր , Աշխ Գոթոզիայ .

Մաթան .

Տիկին , և միթէ մյս է քո տեղի .

Ձի՞նչ է պատճառ քոյդ խռովուծեան , քոյդ
 երկիւղի .

Աստ զի՞ կայ քո և թըշնամեացդ չարախտավար .

Միթէ կարե՞ս դու մըտանել յայս սիղծ տա-
 ճար .

Միթէ բարձե՞ր յանձնէ ըզքէնն զայն ահա-
 գին

Գոթոզիա .

Ինձ ուշադիր ունկն մատուցէք դուք երկոքին :

Ձէ ինձ արդ կամք ածել զանցեալն ձեր ա-
 ռաջի ,

Եւ ոչ համար ձեզ տալ զարեան՝ զոր հասեցի.
 Ձոր արարի, Աբներ, չար ինչ ոչ արարի.
 Ոչ է բընաւ իմ դատաւոր խումբ լըրբենի.
 Թէպէտ և զայն հրատարակեաց ազդն կատաղի,
 Ձիս անարատ եցոց երկին յաչա աշխարհի:
 Յերկուս ՚ի ծովս իշխանութիւն յազթողական
 Նորափետրէ շուք բարձրագոչ զԳոթողիայն.
 Ինև կայ այժմ Երուսաղէմ յապահովի,
 Եւ Յորդանան ոչ տեսանէ զԱբաբայի
 Եւ ոչ զգոռոզ Փըղըշտային ՚ի սպանդ հրոսակ,
 Որ շուրջ զափամբքն առ արքայիւքդ տայր աւ-
 պատակ.

Ձիս Սուրային համարի քոյր և թագուհի:
 Հուսկ և Յէու՝ իմ տան նեղիչ անհաշտելի,
 Արում առ իս զիւր յաճախել պարտ էր չարիս,
 Սէզն այն Յէու ՚ի Սամարիա դողայ զարդիս.
 Հալածատանջ նեղեալ ՚ի քաջ ՚ի դըրացւոցն,
 Ձոր յարուցի ամենուստեք ՚ի դէմ նորուն,
 Եթող նա ինձ յիմում վարիլ ՚ի տէրութեան:
 Պըտուղս խաղաղ ճաշակէի զիմաստութեան.
 Բայց յաւուրս ինչ ասան աղմուկ տաղտաղելի
 Ձիմ խափանէ զբարօրութիւն, զբախտ սըխրալի:
 Տեսիլ (և է՞ր երբէք ինձ փոյթ ըլտեսլենէ),
 Անտանելի տառապանօք զիմ սիրտ մաշէ.
 Նա զիս վանէ, և ես փախչիմ ՚ի նըմանէ:
 Թեատարած էին արհօրք գիշերական.
 Մայրս Յեղաբել երևեցաւ իմ յանդիման,
 Ձիւրև զըրբեղ ձորձ՝ զոր ունէրն յաւուր մա-
 հուան:

Դառն պատուհասք հըպարտութեանն չէին յաղ-
թեալ .

Երևա նորա գեղոյ փայլիւնն տյն ըշտարեալ ,
Որով ջանայր զերեսըս իւր զարդաներկել

Եւ զաննորոգ իւրոցն ալեաց նըշանս ջընջել :

« Հար զդողանի՝ ասաց, ո՞վ դուստր իմ սիրելի .

« Աստուածն Հրէից և քեզ յապայ յաղթել
ունի .

« Յաւիմ անչափ, զի պատուականդ յիւր սոսկալի

« Անկցիս 'ի ձեռս:» Յաւարտ բանիցն սարսափելի

Թուէր ըստուերն դէպ 'ի մահիճ իմ իջանել ,

Եւ ես ըզձեռս տարածեցի ըզնա գըրկել .

Բայց զի՞նչ էր ինձ անդ գըտանել, միայն խառ-
նուրդ

Ձոսկերց դիոցն , քարշ ընդ գետին , 'ի տիղմ
յագուրդ ,

Պատառտիս ըզկապերտից , զանդամս ասեղ ,

Ձորս խըլէին յիրերայ շունք արիւնասեղ :

Աբներ .

Ո՞վ մեծդ Աստուած .

Գովթողիա .

Յանհընարին յայս շըփոթման
Տեսի ըզտղայ 'ի լուստիայլ պերճ պատմուճան ,

Իբր քահանայ Եբրայեցւոյ զգեստաւորեալ :

Առ աչս նորա կենդանացաւ անձն իմ լըքեալ .

Բայց հանդարտեալ յայսմ ազմըկէ աղետալի ,

Մինչ ընդ աղնիւ դէմս համեստին զարմանայի ,

Ձգացի անկարծ սաստիկ հարուած ըզսուերոցն ,

Որով ըզստինս իմ խոցոտեաց տղայն չարաթոյն :
 Այս ամբօխմունք խառնափլնդոր և ասագին
 Գուցէ ձեզ գործ ինչ դիպուածոց երևեսցին :
 Ամաչելով ընդ իմս երկիւղ , ես յիրաւի
 Նսեմ գոլորշեաց զնոսա սլառուղ համարէի ,
 Բայց և հոգիս չարեացայուշ , աղմըկալի
 Ըզնոյն տեսիլ երկիցս ետես անդ յերայի .
 Ըզտղայն՝ ոյր ձեռք խոցասարել զիս միշտ ձըգին ,
 Մըթին իմ աչք երկիցըս ինձ սլատկերեցին :
 Մինչ երթայի վըշտասալաճս ՚ի մեր մեհեան
 Առ ՚ի խընդիր սուրբ Բահաղուն սաշտսլանու-
 թեան
 Եւ դոյզըն ինչ հանգըստութեան անձինս ան-
 կած ,
 (Ո՛հ զի՞նչ չառնէ երկիւղ ընդ միտս մեր մահա-
 ցուայ) ,
 Ահա ազդումի ինչ ՚ի տաճար զոտս իմ ուղղեաց
 Ըզձըրէից զիջուցանել զանգութ Աստուած :
 Ես կարծէի՝ թէ յիմ նուէրս նա հաշտեսցի ,
 Թէ այն Աստուած , որչափ և խիստ , յիս զը-
 թայի :
 Ներեա՛ ինձ , քուրմդ Բահաղխմայց : Ահա մըտի .
 Փախեաւ ամբօխն , դադարեցաւ զինլեաց զոհունի .
 Յիս Յովիադ յարձակեցաւ ՚ի մեծ ցասունի .
 Մինչդեռ իւր բանք էին ընդ իս՝ (ով սոսկա-
 լեաց) ,
 Ըզսպառնագին տեսի ըզտղայն՝ ոյր զիս խոցեաց ,
 Զոր տեսքն ասեղ նըկարեցին իմումս մըտայ .
 Տեսի ըզնա , իւր աչքըն նոյն , ընթայքըն նոյն ,

Իւր դէմքըն նոյն , իւր վըշեղէն ըզգեստըն նոյն .
 Նոյն ինքըն էր . կայր ընդ մեծի քահանային ,
 Սահայն փուխով յաչաց իմոց զնա մերթեյին :
 Ահա ընդ այս խըռովուխիւն 'ի հոգս ծըխիմ .
 Առ այս խոհեմ ձեր խորհըրդոց ես կարօտիմ :
 Ձի՞նչ է հըրաշքս այս յեղակարծ , յարդոյ Մա-
 թան :

Մաթան .

Ինձ սոսկալի թուին տեսիլքդ համանըման :

Գոթողիա .

Աբներ մտերիմ , այո տեսեր դու զայն տըղայ .
 Չէ՞ քեզ յայտնի՝ թէ յոր ազգէ և ո՞ է նա :

Աբներ .

Մանկուսք երկու ըզսեղանոյն սպաս տանէին .
 Մին է որդի Յովիադայ , միւսն բընաւին
 Չէ ինձ ծանօթ :

Մաթան .

Տեկին , առ ի՞նչ հարցափորձել .
 Հարկ է զնոսա զերկոսին իսկ 'ի բանտ դընել :
 (Ա. - Աբներ) .

Յայտնի է քեզ , զի գերյարգեմ զՅովիադա .
 Ես ոչ խընդրեմ քէն զգըռնահար գործոց նորա .
 Պանծամ յանձին ընդ իմ խորհուրդս ճըշմար-
 տասէր .

Բայց Յովիադա՝ թէպէտ որդի իւր նա լինէր ,
 Մի՞թ է հաճէ՞ր ընդ վայրիկ մի կեանս բօթա-
 հար :

Աբներ :

Միթէ կարէ՞ տըղայն լինիլ չարայօժար :

Մաթան .

Ետես դըշխոյն , զի էր յաղգեր նորա սուսեր .

Ոչինչ 'ի դուր առնէ երկին արդարասէր .

Եւ զի՞նչ քեզ այլ :

Աբներ .

Հաւատալուլ դոյն երազոյ

Միթէ հարկ է զարիւն հեղուլ ըզտըղայոյ :

Դեռ ոչ գիտես՝ եթէ յուամէ՛ է նա ծընեալ ,

կամ ո՞նա ինքն :

Մաթան .

Տիկնօջ՝ ահեղ է երևեալ :

Եթէ ծընունդ է ծընողաց քաջատոհմիկ ,

Թող և մեծ բախտն զիւր ճեպեսոյէ զանկուսն
սաստիկ .

Եթէ օրհաս 'ի խուժանին զնա եղ 'ի կարգ ,

Փոյթ ինչ իցէ , թէ հոսեսցի արիւն անարգ :

Մարթի՞ն արքայք ունիլ զայս յամբ արդարու-
թիւն .

Պատիժ արագ զնոցին հիմնէ զհանդըստուժիւն .

Մի հոգք ծանունք երբէք արկցեն զնոսա 'ի նեղ .

Որ է նոցա կասկածելի , չէ այլ անմեղ :

Աբներ .

Եւ զի՞նչ , Մաթան . միթէ վայն՞ը են քեզ այդ
բանք :

Որուամ սընունդ էին 'ի մարտս սպանդ ք , արհօրանք ,

Որ արքայից վերէ՛ թխընդիրս եմ տհաղին ,
 Չայն ամբառնամ 'ի պաշտպանութի տարաբախ-
 տին •

Այլ որում պարտ էր խընամել զնա իբրև հայր,
 Խաղաղութիւն մեղ աւետել 'ի վիշտս յամայր,
 Դիմակասքօղ ծածկեալ ըզքէնդ պատիր սիրով ,
 Լաս ընդ արիւն' եթէ ընդէ՞ր հոսէ մեղմով :
 (Ա. Գոթողիա) •

Տիկին, ինձ թոյլ ետուր անկեղծ ընդ քեզ խօսիլ •
 Յի՞մ իմեքէ և կամ յուամէ՞ քեզ երկընչիլ ,
 'ի տեսլենէ՞ թէ 'ի տղայոյն անմեղ , անկար ,
 Չորոյ չէն քաջ դիտեալ ըզդէմս՝ աչք քո խա-
 ւար :
 Լար :

Գոթողիա •

Ճըմարիտ է. թերևս , Ա. բներ , ես սըխալիմ •
 Թերևս 'ի զուր ընդ այդ տեսիլ ալէկոծիմ :
 Իսկ արդ՝ հանրկ է ինձ 'ի մօտոյ զնա տեսանել ,
 Եւ ըզդիմացն 'ի ժամ պատեհ ըզգիծս զըննել •
 Ա՛ղէ ասա՛ , զի զերկոսին ամցեն ան իս :

Ա. բներ •

Քան այդ... գուցէ...

Գոթողիա •

Միթէ և զսոյդ գու ո՛չ կամիս
 Ա՛ննել վասն իմ • ան ի՞նչ հերքութեանդ այդ անըն-
 տել ,
 Որ քաջ իշխէ 'ի նոր կասկածս զիս արկանել :
 Թող Յովսաբէ կամ Յովիադ ամցէ զնոսա •
 Թէ կամեցայց , հըրամայել կարեմ նոցա :

Գիտեա՛ն, Աբնե՛ր, ձեր քահանայք ունին միայն
Պարծիլ շնորհօք իմ մըշտաբուղիս ողորմու-
թեան .

Յայտնի են ինձ չարայանդուզն և զազրադին
Ձինէն և զիմս զօրութենէ խորհուրդք նոցին .
Բայց նոքա կեան, կայ և անքակ իւրեանց տաճար .
Խոնջ երախտիքս ունին ասո՛ գալ 'ի վըճար :
Յովհադա զանհամբոյր բարս իւր սանձեսցէ ,
Եւ մի կըրկին զիս յանարգանս իւր ցասուցէ :
Գընա՛ :

ՏԵՍԱՐԸՆ Զ .

Գոթողիա, Մաթան, Այն Գոթողիայ .

Մաթան .

Կարեմ այժմ անխափան ընդ քեզ խօսիլ,
Եւ զանըսքօղն ճըշմարտութիւն խօստովանիլ .
Հըրէշածինք մեքենային 'ի տաճարիս :
Քաջալերեանց, չե քո տեսեալ է ըզարիս :
Աբներ ընդ այգն գընաց առ պետն քահանայից .
Ձնորին գիտես սէր առ արիւն իւր արքայից ,
Որոց ժառանդ գուցէ կամք են Յովհադայ
Կարգել ըզողայն՝ որով երկին քեզ ըսպառնայ ,
Թէ որդի իւր և թէ օտար ոք նա իցէ :

Գոթողիա .

Բանաս զիմ աչս . ըզկամս երկնից միտք իմ ածէ
Արդէն 'ի լոյս . այժմ զերկբայս կարեմ ջըրել :
Ձիշէն տըղայ բընաւ զխորհուրդս թագուցա-
նել .

Մի բառ միայն զիւր ըզդատնիսն տայ մեզ գիտել,
 Ուստի կամիմ զնա տեսանել, հարցափորձել :
 Մինչ այս մինչ այն, Մաթան, գընա հըրամա-
յել
 Քաջ Տիւրացւոցս զանձամբք ըզդէնս դազտ ար-
կանել :

ՏԵՍԱՐԱՆ Է .

Յովա, Յովամբէ, Գովոյիա, Ջախարեա, Աբէեր,
 Սաղոմբէ, Երէու զեփաէանս, Պար էրՔեցողաց, Աղն
Գովոյիայ :

Յովսաբէ աւ էրէու զեփաէանս .

Խընամ տարջիք՝ ո՛վ պաշտօնեայք՞ Տեառն Աս-
տուծոյ,
 Մանկանցս անգին, ազնուագին, հեզաբարոյ :

Աբներ աւ Յովամբէ .

Միամըտեանց . տիկին, ես եմ պաշտպան սոցա :
Գովթողիա .

Ո՛վ սոսկալեաց... որպէս զի ևս հայիմ 'ի սա...
 Սա ինքըն է. անձն իմ զահի հարաւ կըրկին :
(Յուցանելով 'ի Յովա) .

Որդի՞ք է սա, Յովիադայ գերդ ամուսին :

Յովսաբէ .

Ո՞, սա՞, տիկին :

Գովթողիա .

Այո :

Յովսաբէ .

Ո՛չ , չեմ ես սորա մայր :

(Յոս-ցանէշով 'է Չասարիս) .

Ահա՛ որդիս :

Գոթողիա — **Յովսա** .

Մանուկ նազիկ , ո՞ն է քո հայր .

Պատասխանես :

Յովսաբէ .

Մինչ ցայսօր հայր իւր է երկին :

Գոթողիա — **Յովսաբէ** .

Եւ ընդէ՞ր դու պատասխանես . կարէ ինքնին
խօսիլ ընդ իս :

Յովսաբէ .

'ի դեռահաս 'ի մանկանէս

Մեկին , պայծառ ինչ ասացուածս դու լուիցե՞ս :

Գոթողիա .

Մանուկ է սա . իւր սըխրապանծ պարզմըտու-
թիւն

Ո՛չ մըթագնէ զարիւիւփայլն ճըշմարտութիւն :
Թո՞ղ ասասցէ զիւր վիճակի ըզպատմութիւն :

Յովսաբէ Զէնուսի .

Տէր , 'ի շըթուենսն հաճեանց լընուլ զիմաստու-
թիւն :

Գոթողիա .

Չի՞նչ է անունդ :

Յովաա .

Եղևակիմ է իմ անուն :

Գովթողիա .

Զի՞նչ անուն հորդ :

Յովաա .

Որք եմ, ասեն՝ որ Տեառն յանհուն,
Յառատ շնորհս եմ ՚ի ծընէ յանձն արա-
րեալ,
Եւ որ բընաւ զիմ ըղծընողս ոչ եմ տեսեալ :

Գովթողիա .

Ի՞նչ ծընողք :

Յովաա .

Նոքա թողին զիս յորբու թեան :

Գովթողիա .

Եւ ՚ի վաղո՞ւց :

Յովաա .

Յօրէ անտի իմ ծընընդեան :

Գովթողիա .

Ո՞չ կարիցես ինձ անուանել զաշխարհն ըղբոյ :

Յովաա .

Իմ հայրենիք է սուրբ տաճարս այս Աստուծոյ .

Զայլ ոչ զիտեմ :

Գովթողիա .

Զի՞նչ սլատմեն այլք . ո՞ւր զքեզ զըտին :

Յուլաս .

Ի մէջ գայլոց , որք գիշատել զիս ունէին :

Գոթողիա .

Եւ զ եբեր գքեղ յայս տաճար :

Յուլաս .

Աին ոք . անուն

իւր միաց ծածուկ , անյայտ է ցարդ ամենեցուն :

Գոթողիա .

Բայց զ տանէր զնախկին աւուրց քոց ըզխընամս :

Յուլաս .

Եթ՞նզ երբէք Աստուած զորդիս ՚ի կարօտանս .
 Նա տայ փոքունցն յօղականաց զճարակ նոցին .
 Իւր բարութիւնք ՚ի բընութիւն համայն ձըզին .
 Աւնա կարդամ , և հայրագութն սէր մեծարգոյ
 Սընուցանէ զիս ՚ի նուէրս սուրբ սեղանոյ :

Գոթողիա .

Ո՛հ նոր հըրաշք զիս արկանէ ՚ի խաւովութիւն .
 Քաղցր ձայն սորա , շընորհք սորա և մանկութիւն
 Տան յանըզգայս զատելութիւն իմ յաջոր-
 դել .

Բայց ի՞նչ արդեօք կարեկցութեան ձայնի լըսել :

Աբներ .

Սա է , տիկին , քո թըշնամի ահեղագին .
 Տեսիլք քո սուտ այժմ ակներև մեզ ընծային :
 Գիտեա՛ , զի գութն , յոր երևիսդ ալէկոծիլ ,
 Չէ այն հարուած՝ որ տայր զգողի քեզ հարկանիլ :

Գոթողիա — Յուլա և — Յուլաքէ .

Երթանք դուք այժմ :

Յովսաբէ .

Լուար ըզբանսն . սա նեղեսցէ
Ըզթագուհիդ , եթէ յերկար առ քեզ կացցէ :

Գոթողիա .

Մնացէք :— Ձիւրդ անցուցանես ըզքոյդ օրեր :

Յովաս .

Մըտավարժիմ 'ի սուրբ օրէնս , և կամ առ Տէր
Լինիմ յաղօթս . նա՛ ուսանիմ ևս վերծանել
Ձգերս երկնաձիր՝ զոր ինքն սկըսայ արդէն գը-
րել :

Գոթողիա .

Քեզ զի՞նչ օրէնքդ հըրամայես :

Յովաս .

Սիրել զԱստուած ,

Որ քէն առնու ըզսուրբ անուան իւր հայհոյած ,
Որ զանտերունչ , զանմեղ որբոյ միշտ թեկն ածէ ,
Որ զսէգս վանէ , որ զմարդասպանս պատուհասէ :

Գոթողիա .

Ձայդ քաջ գիտեմ . բայց 'ի տեղւոջս աստ զի՞նչ
առնեն

Ժողովքդ մարդկան :

Յովաս .

ՁԱստուած գովեն , բարեբանեն :

Գոթողիա .

Կամի՞ Աստուած, զի ժամ ընդ ժամ աղօթեացեն :

Յովա ս .

Ա՛յլ պիղծ արար է տարագիր 'ի տաճարէն :

Գոթողիա .

Զի՞նչ են հաճոյքդ :

Յովա ս .

Երբեք մեծի քահանային
'ի սեղանի անդ զաղ, ըզխուենկ տամ խընդագին .
Ունկըն դընեմ՝ զիսրդ երգեն զիսուս Աստուա-
ծեան ,

Եւ կամ հայիմ 'ի պաշտամունս հանդիսական :

Գոթողիա .

Մի՞թէ չգիտե՞ս այլ բերկրութիւնս վայելչական .
Դառնէ՛վիճակ քո պէս մատաղ, ազնիւ մանկան :
Ե՛կ յիմ պալատ, եկ տեսանել զիսուս իմ անբաւ :

Յովա ս .

Անյո՞ւշ կացցին Տեառն Աստուծոյ շնորհք ան-
զըբաւ :

Գոթողիա .

Ո՛չ կամիմ զայդ . 'ի մոռացօնս զնա մի արկցես :

Յովա ս .

Դու չաղօթես առ նա :

Գոթողիա .

Բայց դու աղօթեսցես :

Յովաա Տէկուսի .

Երկայնամիտ լիցիս , անձն իմ , եթէ տեսցես ,
 Ձի զայլ աստուած սա կարդասցէ :

Գոթողիա .

Դու սլաշտեսցես

Ըզքոյդ Աստուած . է և աստուած , զոր ես պար-
 տիմ

Պաշտել , սիրել : Ահա , նազիկ Եղիակիմ ,
 Աստուածք հըզօր :

Յովաա .

Յիմոյն արժան է թագուհւոյդ
 Գալ զերկիւղիւ . նա է Աստուած , և չէ ինչ քոյդ :

Գոթողիա .

'ի տան իմում գըտցես բերկրանս անձառելի :

Յովաա .

Ահ բախտ չարացիբը ջուրց հեղեղ ըսպառեսցի :

Գոթողիա .

Եւ ոյք են չարքդ :

Յովաաբէ .

Տիկին , ներել խըդրեմ օրմա . . .

Գոթողիա — Յովաաբէ .

Այսպէս ահա դուք ապառումս վարժէք ըզսա :

(Ա. — Յովաա) .

Եղիակիմ , շընորհս գըտեր իմ առաջի .

Դու չես այն սոսկական ոք վատթարագգի :

Յայտնի է քեզ , զի անզաւակ եմ թագուհի .

Թող զայդ հանդերձ, թող զայդ սլաշտօն քո փա-
նաքի.

Իմոցս կամիմ զքեզ մասնակցել հարըստութեանց.

Յայսլմհետէ դու փորձ առցես զիմ ըղխոստմանց.

Ամենուրեք նըստցիս ընդ իս, պըսակեսցիս

Ըզսեղանովս, դու եբը յորդի ինձ եղիցիս :

Յովաս .

Քեզ եբը յորդի :

Գոթողիա .

Այո... լնու կաս :

Յովաս .

Թողից զիմ հայր.

Եւ զնրպիսի ստացայց...

Գոթողիա .

Հապա :

Յովաս .

Զնրպիսի մայր :

Գոթողիա — Յովսէֆ .

Քաջ գիտէ սա զամենայն ինչ . ըզբանս սորա

Ազդէ հոգի Յովսաբէի, Յովիադայ :

Այսպէս ահա զսուրբ մանկութիւնդ թունաւո-
րեալ,

Աարէք զհանգիստ՝ զոր բարեսիրտս եմ ձեզ
տուեալ .

Զսոցին զազըոյթ, զատելութիւն դուք մըշակէք,

Եւ զանուն իմ գէթ գարշանօք սոցա յիշէք :

Յովսաբէ .

Միթէ կարե՞մք զմեր դառնավէպ ծածկել չարին ,
 Որոց վըկայ են տիեզերք , յորս ինքն պարծիս :

Գոթողիա .

Այո՞ արդար իմ բարկութիւն՝ յոր և սլանծամ ,
 Ձիմոցս թըշուառ արենայկցաց յապայց անգամ
 Լառ ըզքէն : Որ ինքն տեսի չար ըսպանումն
 Ըզհօրս , զեղբօրս , — զմօրս յաթողոյ գահավի-
 ժումն ,

Որ և տեսի՝ (ո՛վ տեսարան զարհուրագին) ,
 Ձի չարատանջ ըզմի նուագ յաւուր նըմին
 Կորեան ութսուն արքայորդիք՝ զո՛հք վըրիժու ,
 Որպէս ասեն , մարգարէից ժանտալեզու ,
 Ձորոց պատժեալ իցէ մայր զգործս զազըալի ,
 Միթէ անղօ՞ր յայնժամ էի ես թաղուհի ,
 Միթէ և դ՞նստր հէգ , քարասիրտ և փոքրոգի ,
 Միթէ լըսել հա՛րկ էր ձայնի կարեկցութեան ,
 Մինչև և ո՛չ հատուցանել կոյր ժանտութեան
 Ձչար ընդ չարուոյ և ըզսպանումն ընդ ըսպանման ,
 Մինչև և ո՛չ վարիլ խըստիւ ընդ չար Դաւթեանս ,
 Որպէս վարեալ էին ընդ թոյլ Աքահաբեանս :
 Ասյ իմ անձին , եթէ անհոգ անդ մընայի ,
 Եթէ գերգ մօրս ո՛չ լինէի բնաւ արժանի ,
 Եթէ և ձեռքս զիմոյ սրեան ծուփս յարուցեալ ,
 Խիստ հարուածովս չէին ըզձեր չար ուխտ ճըն-
 շեալ :

Հուսկ և զերկուց ազգացն մերոց զկասկեցու-
 թիւն

Խախտեաց անհաշտն ձեր Աստուծոյ քինառու-
թիւնն :

Ինձ գարշելի է ձեր Դաւթիթ, որոյ որդիք
Թէպէտ և են յիմ արենէ, բայց այլազգիք :

Յովսաբէ .

Յաջող են գործքդ: Աստուած իմ, տէս, դատեւն
ըզմեզ :

Գոթողիա .

Աաղուց հետէ ասն Աստուածդ պաշտպան է ձեզ.
Բայց ե՞րբ ունին լընանիլ բանք իւր կանխասաց.
Ե՞ր ոչ տայ ձեզ զոր խոստացեալ էր նա ազգաց,
Ձ ձեր ապաւէն, զորդի Դաւթի, զանզոյգն ար-
բայ.....

Բայց մեք տեսցուք զմիմեանս: Գոհ եմ: Բարեան
մընա :

Տեսի ինքնին զոր կամէի:

Աբներ ՝ Յովսաբէ .

(յանհեղու՛ ՚ի նա զՅովսաբէ) .

Կատարեցի

Ձ որ խոստացայ. ասն ցըքեզ, զոր և առի
ի քո ձեռաց :

ՏԵՍԱՐԱՆ Ը .

Յովսաբէ, Յովսաբէ, Յովսաբէ, Ձառարիա, Աբներ,
Սաղու՛թի, Լեւուհան, Պար էրֆէցոյաց:

Յովսաբէ ՝ Յովսաբէ .

Եդե՞ր դու ունկն սէգ դըշխոյին :

Յովիադա .

Լուայ ըզբանան, սըրտացաւեալ ընդ քումդ ան-
 ձինս
 Ես և Ղևեայքս՝ զինավառեալ քեզ 'ի յօգնել,
 Պատրաստ էաք զանձինս 'ի մահ ընդ քեզ մատ-
 նել :

(Ա.՝ Յովա՝ հարելով զհովա) .

Տէր է գըլխոյդ քում պահապան, մանուկ ան-
 դին,

Որ աներկիւղ քարոզեցեր զանուն նորին :

(Ա.՝ Աբէր) .

Ընորհ ունիմ քեզ . մեծ է և սուրբ սէր քո առ
 մեզ . . .

Մի մոռանար դու զժամըն՝ զայն . կացից ես քեզ :

(Ա.՝ զհովային) .

Եղեռնագործն, մարդախոշոշն այն 'ի կանանց
 Պըղծեաց զմեր աչս, պըղծեաց զաղօթս սրբա-
 նախանձ :

Մըտցո՛ւք անդրէն . անմեղն արիւն ձեռօքս հո-
 սեալ

Թո՛ղ մաքրեսցէ զկիճ՝ զոր են ոտք նորա կո-
 խեալ :

ՏԵՍԱՐԱՆ Թ .

Պար էրգեցողաց .

Մին յաղջկանց պարու .

Ո՛վ այն աստեղ նորանըշան ,

Որ զլոյսն 'ի մեզ ճառագայթեաց .

Ո՛վ այն մանկան անզուգական .
 'ի նա մերձիլ ինչ ո՛չ լըրբին
 Սէր փառամուլ, սնոտիալգեսաց,
 Հրապոյրք, խորհուրդք ընդ վայրածինս :

Մ.ՅԼ աղջիկն .

Մ.յն ինչ փութան խընկել զսեղան
 Պիղծ աստուծոյն Գոթողիայ ,
 Ալստահն մանուկ քարոզ կարդայ,
 Թէ Լն միայն է անվախճան,
 Եւ իբրև նոր ոք Եղիա
 Խօսի ընդ նոր Յեզաբելայ :

Մ.ՅԼ աղջիկն .

Ե՞րբ, գերդ մանուկ, անյայտ ծընունդ քո յայտ-
 նեսցի .

Որդի՞ իցես սըրբոյ ուրուճն մարդարէի :

Մ.ՅԼ աղջիկն .

Մ.յսպէս աճէր և Սամուէլ
 Ընդ հովանեաւ տաղաւարին .

Նա մարգարէ Եբրայեցւոց եղև աղգին .

Ըսփոփեսցե՞ս նըմին նըման զմերս Իսրայէլ :

Մ.ՅԼ աղջիկն երգէ .

Երջանկաւէտ է մանուկն այն ,

Ձոր Տէր սիրէ, խրատէ, վարժէ ,

Որ Տեառն ձայնի գոգ փըրկական

Ունկըն գընէ 'ի ծնընդենէ :

Այիլք աստեացս հեռի են միշտ առ 'ի նմա-

նէ .

Ձարդբ իւր անձինն են շնորհք երկնից .
 Ձիւր սուրբ հոգի, զիւր սիրտ անմեղ չապակա-
 նէ

Մեծավըտանգ գըրգիւ ժանտից :

Բողոք պար .

Բարեբաստիկ է մանուկն այն ,
 Ձոր Տէր կըրթէ , որում լինի պատըսպարան :

Նոյն ձայն հայն .

Սապէս 'ի մէջ գաղտնի ձորոյ

Առ ասիւն ցուրտ, մաքուր ջըրոյ

Ծաղկի 'ի դէմ ապարքտիոյ

Գոհար շուշան ,

Սէր բընութեան :

Այելք աստեացս հեռի են միշտ առ 'ի նմանէ .

Ձարդբ իւր անձինն են շնորհք երկնից .

Ձիւր սուրբ հոգի, զիւր սիրտ անմեղ չապակա-
 նէ

Մեծավըտանգ գըրգիւ ժանտից :

Բողոք պար .

Մանուկն երիցս է երանեալ ,

Թէ է զնա Տէր իւր օրինացն հըպատակեալ :

Մի ձայն հայն .

Տէր իմ, ընդէ՞ր շնորհք դեռածին

'ի մէջ չարեացս աճեն զաճումն անյայտ, վըհատ,

Եւ կամ ընդէ՞ր բարեհոգին

Անկանիցի 'ի խափանածս խորհըրդահատ .

Քանի՞ ոսոխք զնա 'ի հանդէս մըղեն մարտի .

Ո՛ւր քո արդարքն ասպատանին .

Ծածկեալ են չարք զիրեսս երկրի :

Ա.ՅԼ ձայն .

Յարկ դու շքեղ և հոյակապ քաղաք Դաւթի,
Լեառնն դու սուրբ՝ բնակարան Տեառն Արար-
չի ,

Ձի՞ սաստկացաւ 'ի վերայ ձեր ցասուքն երկնից :

Ձի՞նչ ասիցես, Սիօֆն, Սիօֆն դու սիրելի .

Ահա՛ յաթոռ քոյդ արքայից

Բազմեալ է կին չարաբարոյ, կին այլազգի :

ԲՈՂՈՐ պար .

Ձի՞նչ ասիցես, Սիօֆն, Սիօֆն դու սիրելի .

Ահա՛ յաթոռ քոյդ արքայից

Բազմեալ է կին չարաբարոյ, կին այլազգի :

Նոյն ձայն շարունակէ .

Ձի՞նչ ասիցես, Սիօֆն, Սիօֆն դու սիրելի .

Ահա՛ պղղծ են զօրհնեալ անուն Տեառն Արարչի,

Ձոր թագաւորք քո պաշտէին, ըզչարասէր

Ձօտար կընոջ բարձրր առնեն ըզպիղծ սս-
տուած

'ի սուրբ տեղւոջն՝ ուր քոյդ Դաւիթ երգէր,
գովէր

ԸզՏէր իւր հայր յերգս բարեբան և սըրբա-
սաց :

Մի ձայն հայն .

Տէր, մինչև ցե՞րք, ցո՞րքան ևս այլ
'ի քո ճակատ ընդդիմահարք ունին խաղալ .

Ահա՛ խրոխտան 'ի վերայ սուրբ քո տաճարի .

Նոքա անմիտ համարին զազգ քո սիրելի:

Տէր, մինչև ցեօրք, ցոօրքան ևս այլ
'ի քո ճակատ ընդդիմահարք ունին խաղալ:

Ա.ՅԼ ճայն.

Առ ի՞նչ, ասին, ձեզ այս վայրիք գործոց բա-
րեաց.

Ընդէ՞ր չառնուք ըզսըխրալեաց

Քաղցրիկ ճաշակ ըզհաճութեանց.

Չառնէ ինչ ձեզ ձերըդ Աստուած:

Ա.ՅԼ ճայն.

Ծիծաղեսցո՞ւք, երգս երգեսցուք,

Ասէ միշտ ազգն այն խելաժէտ,

'ի փափկութիւնս յաճախեսցո՞ւք

Յուրախալիր 'ի ծաղկաւէտ:

Անմիտք միայն յուսան յապայս ժամանակաց.

Անպարագիր են մեր օրեր արագադնաց.

Ժառանգեսցո՞ւք այսօր զկենաց վայելս անթիւ,

Եւ ո՞ր գիտէ՝ եթէ լիցուք մեք 'ի վաղիւ:

Բողոք պար.

Տէր իմ, մինչ մեք վերօրհնեսցուք զքո մեծութիւն,

Ձքո բարութիւնս, զվայելչութիւն

Ըզքոյդ փառաց անմահութեան,

Լալով լացցեն, սարսափեսցին առ երկիւղի

Որք ո՞չ տեսցեն ըզհրաշազան

Քաղաք քո սուրբ զերանելի:

Մի ճայն հայն.

Ձի՞նչ շահեսցին նոքա յաստեացն խաբեպա-
տիր,

Թէ ոչ ըզշահ ըզմոլութեան չարեացածին
 Ըզթանձր քընոյ, յորմէ հոգիքն նանրախընդիւր
 Եթէ յառնել երբէք ունին
 (Ո՛վ յարութեան զարհուրագին),
 Տէր իմ, մինչ տնանկն առ սեղանոյդ զխաղաղու-
 թեան

Ճաշակ առցէ զանճառելի ըզքաղցրութեան,
 Արբցեն, աւանդ, ՚ի բաժակէն դառնահամբոյր,
 Զոր դու յահեղ յայնրմ աւուր
 Տացես ծնընդոցն պըղծաբարոյ:

Բողոք պար.

Ո՛վ յարութեան զարհուրագին,
 Ո՛վ վաղանցուկ պատիր քընոյ,
 Ո՛վ մոլութեան չարեացածին:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Մաթան, Նաթաղ, Պար էրգեցոչաց.

Մաթան առ աղհուհու.

Ա՛ղղ արարէք Յովսաբէի՝ եթէ Մաթան
Մընայ նըմա ՚ի խօսակցիլ աստ լըռելեայն:

Մին յաղջկանց պարու.

Քորք իմ, Մաթան... Տէր, սատակեա՛ն զայրդ
մոլեգին:

Նաթաղ.

Ապաբան են, ցըրուին, փախչին ամենեքին:

Մաթան.

Ա՛նդք խաղասցուք:

ՏԵՍԱՐԱՆ Բ:

Ջաքարիա, Մաթան, Նաթաղ.

Ջաքարիա.

Լիբբ, յո՞ն կամիս դու անցանել...

Մի՛ իշխեսցես այլ ևս յառաջ զոտս քո վարել.
Սուրբ բնակարանս տեղի է սուրբ սպասաւորաց.
Ո՛չ հրամայեն օրէնք աստ մուտ առնել պըղծայ:
Եւ զո՞ն խընդրես. հայր իմ յաւուրս հանդիսական

Յետքս դառնայ ՚ի կռապաշտից գարշադաւան,
 Նոյն և մայր իմ ՚ի գուճս իջեալ առ սեղանոյ,
 Ո՛չ զըլանայ պատուիրանաց Տեառն Աստուծոյ:

Մաթան .

Որդեակ, մի ևս խրոովեսցիս: Մեք սպասեսցուք.
 Ինչ ինչ ունիմ ասել մօր քում շքեղաշուք.
 Ըզթագուհւոյն եկի յայտնել ըզհըրաման:

ՏԵՍԵՐԸՆ Գ .

Մ^աթ^ան, Ն^աբ^աղ .

Նաբաղ .

Չար ծընողաց ասան որդի ամբարտաւան:
 Բայց զի՛նչ կամի Գոթողիա առնել այժմիկ.
 Ուտի՞ ծնանին խորհուրդք նորա յեղափոխիկ.
 Ընդ այգն ՚ի վէս Յովիադայ վիրաւորեալ,
 Եւ յերազի ՚ի մանկանէն ըսպառնացեալ,
 Փութայր զգըլխով Յովիադայ ածել չարիս
 Եւ հաստատել զԲասաղ և զքեզ ՚ի տաճարիս:
 Զանճառելի էր քո բերկրանս յայնժամ բերկ-
 րեալ,
 Եւ իմ յաւարն յայն բազմաշահ ըզյոյս եղեալ...
 Բայց ո՞ արդեօք նըմին խափան է բազմարդել:

Մաթան .

Զաւուրս երկու չկարեմ, Նաբաղ, զնա ճանա-
 չել .

Չէ նա այլ ևս դըշխոյն այն քաջ և վեհապանծ,
 Աերամբարձեալ գերբան զերկչոտ ուխտ ըզկա-
 նանց,

Որ ընդ ձեռամբ ամէր ըզգունդ ընդդիմահար,
 Որ քաջ յարգէր ըզմի վայրկեան ծախեալ ընդ-
 վայր:

Երկիւղ անլուր շըրտուցանէ զմեծահոգին:
 Ծըփի, յուզի • միով բանիւ՝ նա այժմ է կին:
 Փոքր ինչ յառաջ 'ի վըշտալի հարուածս բանից
 Լըցի ըզսիրտ իւր կանխակոծ 'ի սաստս երկնից:
 Նա ինքն զիւր վըէժ յանձն արարեալ իմ խընա-
 մոց,

Հըրամայեալ էր ժողովել զգօրս Տիւրացւոց,
 Բայց մինչ եկաց իւր առաջի մանուկըն այն,
 Որպէս պատմեն՝ ծնունդ ընկեցիկ, [Ժըշուառա-
 կան,

(Չգիտեմ՝ վըտանդ արդեօք եբարձ նա ըզտես-
 լեան,

Թէ յաչս նորա երևեցաւ գեղեցկազան),
 Տարտամ, երկբայ ահա մընաց այն բարկուժիւն,
 Մինչ 'ի վաղիւ իւր յապաղեաց քինառուժիւն:
 Նա վարանէր յանհընարին տարակուսի

Եւ զիւր յածէր զմիտս 'ի խորհուրդս խոտորնակի:
 «Ըստուգեցի վասըն մանկան, նմա ասացի:
 «Չարք հարկանեն հըռչակ զփառաց նորին նախ-
 նեաց:

«Յովհադա զնա պահ ընդ պահ ցուցեալ նենդոց,
 «Երկրորդ Մովսէս ըզնա Հըէից վարդապետէ,
 «Եւ բազմախաբ հնարիւք ըզբանս իւր հաստա-
 տէ:»

Շառագնեցաւ, կատաղեցաւ ընդ այն համբաւ:
 Ո՛չ երբէք դաւ զոք որսացաւ այնչափ դիւրաւ:

«Եւ ընդէ՞ր ինձ մաշել զաւուրս 'ի նեղութեան»

«Բան է՝ ասաց, տալ զանձն 'ի ծովս տատամսու-
թեան»

«Մաթան, յայտնեա՛ Յովսաբէի՝ թէ զանհամար

«Գունդ յարուցից, թէ տեղացից հուր 'ի տա-
ճար,

«Թէ 'ի ճարակ սըրոյ հանից զամենեւեան,

«Եթէ չտացեն ինձ 'ի պատանդ զմանուկըն զայն»

Նաբաղ .

Եւ հաճեսցի՞ն վասն ապատոհմ, անյայտ մանկան,

Ձոր և գուցէ գըտին ուրեք ըստ պատահման,

Ձտաճար իւրեանց մատնել յաւեր հըրակոր-
ծանս

Մաթան .

Չե՞ն քեզ յայտնի տակաւ խրոխտանք առն մո-
լութեան»

Յովհադա սէգ է քան զսէգս 'ի մէջ մարդկան»

Դու սյժմ ինքնին տեսցես ըզնա՝ գիտեմ ես զայն,

Դառնահամբոյր մահու սպառիլ բարեյօժար,

Քան յիմ 'ի ձեռս տալ ըզմանուկն վընասակար»

Նա՛ Աստուծոյ է 'ի նուէր տուեալ ըզնա»

Ա՛հա՛ ճըշգրիտ վըկայութիւն սիրոյ նոցա»

Սակայն որ զինչ արդ և իցէ, զնա ո՛չ տացեն»

Յայնժամ զանձամբք անթիւ չարիս նորա ած-
ցեն»

Յայնժամ և ես հանդիսացայց վըրիժահան»

Յայնժամ զտաճարս տաղտկազազիր, բոյն չարու-
թեան,

Սուսեր և հուր յաչացս բարձցեն հիմնայտակ.
Յայնժամ....

Նաբաղ.

Եւ զի՞նչ վառէ զցասուճն քո դըժընդակ.
Ձի՞նչ իցէ այդ, և մի՞թէ սէ՞ր քո առ Բահաղ.
Քա՛ւ քեզ, Մաթան. կայց դու իմ պէս անհոգ,
խաղաղ.

Ո՛չ ճանաչեմ ահա՛ ծընունդս իսմայելի
Ո՛չ ըզԲահաղ և ո՛չ զԱ՛ստուած իսրայելի:

Մաթան.

Կարծիցե՞ս դու՛ եթէ երբէք կոյր ըզկուրայն
Նախանձայոյզ ես վառեցայց վասն անպիտան,
Գարշ աստուծոյ, կամ վասն չընչին ձեռագործի,
Ձոր անխընայ որդունք ծախեն միշտ ՚ի բագնի:
Մինչև ցայսօր գուցէ պաշտեալ էր իմ զԱ՛ս-
տուած,

Ձոր այս տաճար բարեբանէ յերգս սըրբասաց,
Ձոր ՚ի ծընէ ես ինքն ուսեալ էի օրհնել,
Եթէ իւր կամք չէին վայրագ կըրիցս արգել,
Եթէ չէին տանջեալ զիմ անձն ապերասան
Սէր մեծութեան, ծարաւ անկախ իշխանութեան:
Ա՛ւ ի՞նչ ածել քեզ յուշ, Նաբաղ իմ մըտե-
րիմ,

Ձ Յովհադայ և զիմ կըռիւն զայն ոխերիմ,
Ձ իմ ընդ նրմա ըզպայքարուճն վասն բուրվա-
ռին,

Ձ իմ սրտասուս, զգարան, զտագնապն զայն ա-
հագին.

Յաղթեաց նա ինձ. մինչ նոր պաշտօն անդ խընդ-
րէի,

Սըրտի մըտօք ախորժեցի զդուռն արքունի.

Իս ոտն առ ոտն մատեայ յականջս թագաւորայ,

Ահա իմ ձայն եղև պատգամ Աստուածասաց:

Ձկամս որսայի, ելանէի ՚ի փորձ սըրտից,

Գողտրիկ ծաղկամբք սերմանէի ըղխորս վախից,

Ըզլափ, ըզլչիւ փոփոխէի ըստ հաճոյից.

Ինձ կիրք նոցա արգոյ էին քան զբանս երկնից:

Որչափ անպուսպ տըմարդուժիւն Յովիադայ

Գիրգ ականջացն բընաւ ՚ի լուր ոչ փայր նոցա,

Այնչափ զնոսա յիմս պատրէի ճարտարուժիւն,

Գողանայի յաչաց նոցա զճըշմարտուժիւն

Եւ ՚ի պաճոյճս սքօղեալ զխորհուրդս խիստ, չա-

րազգեաց,

Անապորոյն էի յարիւն ողորմելեաց:

Մեզ հուսկ ապա հընարեցաւ նոր այլ աս-

տուած,

Եւ նոր մեհեան Գոթողիա նըմա կանգնեաց.

Լալով ելաց Երուսաղէմ ընդ իւր պըղծուժիւն,

Եւ սըրտաթափ մանկանցն Ղևեայ թոյլ բազ-

մուժիւն

Ամբարձ յերկինս զիւր ըզճըչիւն սաստիկ ողբոց:

Խրախոյս տուեալ վեհերոտի Եբրայեցւոց,

Օրինազանցս ընդ նոր ձեռնարկն յօժարեցայ,

Եւ քըրմուժեան Բահաղիմայց արժանացայ.

Որով ասեղ եղէ իմուճս դիմամարտին.

Նա՛ զխոյր կապեալ, զուգապատիւ գըտայ նըմին.

Բայց ընկերիդ ասա՛ լինիմ ես խոստովան,

Մինչև ցայսօր զգամ արհաւիրս յայսմ մեծու-
 թեանս
 Դառն յիշատակ այն Աստուծոյ՝ զոր ես թողի,
 Տանջէ, վըհատս ծընանի յանձն իմ կատաղի:
 Երանի թէ թափեալ ըզքէն իմ յայս տաճար,
 Ձիւր հալածանս յաչս աշխարհի ցուցից տը-
 կար,
 Եւ ՚ի միջի մահուանց, ջարդից, աւերակաց
 իմս եղեռամբք բարձից ըղխայթս խըղճի մըտաց:
 Ահաւասիկ և Յովսափէ:

ՏԵՍԱՐԸՆ Դ.

Յովսափէ, Մանան, Նաթաղ.

Մաթան.

Տիկին դու հեզ,
 Մի զարմասցիս՝ զի առ վայր մի խօսիմ ընդ քեզ
 Հըրեշտակեալս հըրամանաւ վեհ թագուհւոյն
 Կանգնել զհանգիստ, ջընջել զաղէտս վատթա-
 րաթոյն:
 Համբաւ, ըստ իս սըսապաճոյճ, ըզկանխածին
 Խըռովութեանց խաւար տեսլեան զարհուրագին
 Պընդեալ զկասկածս ՚ի վատ դաշանց Յովհադայ,
 Սաստկավառեալ էր ապաքէն զցասումն նորա:
 Չէ ինձ աստ կամք գալ ՚ի պարծանս իմ երախ-
 տեաց.
 Յայտնի են ինձ առն քո ընդ իս դործք զըրկանաց.
 Ես ընդ չարեաց հատուցանեմ ըզբարութիւն.
 Ես այսր եկի ձեզ աւետել զխաղաղութիւն.

Կեցջի՛ք զուարթ, զտօնս տօնեսջի՛ք աներկեան.
Բայց թագուհւոյն ՚ի դոյզն պատանդ ձեր հըլու-
թեան

(Թիւրել ըզկամսն յինչ ո՛չ բընաւ խընայեցի)
Տո՛ւք զորք մանուկն՝ զոր նա ետես յայսմ տաճա-
րի՛:

Յովսաբէ .

Զեղիակի՞մ :

Մաթան .

Ես ամաչեմ զամբթ նորին .

Ընդ այն տեսիլ խորհուրդք մըտացն ըստ չափ
ճըլիին .

Այլ յայսմհետէ լիջիք յոսոխս իւր ոխերիմ,
Եթէ զմանուկն աստ ո՛չ տաջիք ՚ի ձեռքս իմ .
Ահա՛ յանժոյժս պատասխանւոյ քու՛մ ըսպասէ :

Յովսաբէ .

Զայդ աւետիս խաղաղութեան նա աւետէ :

Մաթան .

Դըժուարագի՞ւտ են քեզ , տիկին , խոստմունք
նորին .

Ծանրամըտի՞ս դովաւ շնորհուկս առնել նըմին :

Յովսաբէ .

Ո՛վ սքանչելեաց . Մաթան հնարիւք իմն որջա-
սոյզ

Ծածկել կամի ըզկամս սըրտի եղեւնայոյզ .

Մաթան՝ անթիւ վըշտակըութեանցս չար հեղի-
նակ ,

Այժմ մերում երջանկութեան լինի խընդրակ:

Մաթան .

Բայց յի՞նչ խըղճես. միթէ ըզքոյդ ըզսի՞րտ որդի
'ի քո ձեռաց յափըշտակել ունին բըռնի.

Ո՞ է միւսն այն, քեզ սըրտեռանդն խանդակա-
թեալ.

Ընդ այդ քո սէր և իմ է արդ յապուշ կըրթեալ.
Միթէ նա գանձ է մեծագին, գերապատուեալ,
Կամ փըրկի՞չ ոք յերկնից անտի քեզ պարգևեալ:
Գիտեա՛, տիկին, զի տըհաճ բանք քո պընդեսցեն
Ձգաղտնի համբաւ՝ զոր աւասիկ տարածանեն:

Յովսաբէ .

Եւ զոր համբաւ:

Մաթան .

Թէ այն մանուկ է քաջազգի,
Թէ վասն նորա 'ի մեծամեծս այր քո մըխի:

Յովսաբէ .

Ընդ այդ համբաւ հըրսովառեալ քո մոլեգին....

Մաթան .

Բայց և ընդէ՞ր ինձ ո՞չ յայտնես ըզհաւաստին.
Գիտեմ ըզքեզ՝ զի ստուգավէպ ես դու 'ի բանս.
Գիտեմ ըզքեզ՝ զի զըրաւեալ էր քո ըզկեանս,
Քան թէ ըզհետ երբէք վարեալ զխարդախու-
թեան,

Կամ ասացեալ ինչ հակառակ ճըշմարտութեան:
Իսկ արդ՝ չիցէ՞ և ոք բընաւ տեղեակ նըմին.
Մինչև ցայսօր խաւարաքօ՞ղ է ազգ նորի.

Ո՛չ գիտիցես՝ նա յո՛յց ոմանց իցէ ծընեալ,
 Կամ յո՛յց ոմանց Յովհադա զնա ընկալեալ.
 Ասա՛, պատրաստ եմ միշտ հաւատս քեզ ընծայել.
 Ապա փութա՛ ըզքոյդ Աստուած փառաբանել:

Յովսաբէ.

Համարձակի՞ս զազրապարիշտդ յիշել զանուն,
 Զոր հայհոյել խըրատէ շուրթն քո չարասուն.
 Արկայութի՞ւն կամիս դընել իւր սըրբութեան
 Որ ՚ի բազնի զթունահամբոյր ըզսըտութեան
 Զբանս քարոզես բաղմեալ յաթու գարշ քըլ-
 մութեան,
 Որ ճանաչես միայն ըզնենդ և ըզդարան:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Յովհադա, Յովսաբէ, Մաթան, Նաթալ.

Յովհադա.

Ո՛ր եմ. ո՛չ զքո՛ւրմ ես տեսանեմ ըզհաստեան.
 Դուստր դու Դաւթի, ընդ մունս խօսիս ընդ դա-
 ւաճան.
 Միթէ այլ չի՞ք ՚ի քում անձին բընաւ կաս-
 կած,
 Թէ ընդ ոտիւք սորա զանդունդս բացցէ Աս-
 տուած,
 Թէ ՚ի մի վայր զձեզ լափեսցէ հուր գեհեւի,
 Կամ ջարդեսցեն ըզձեզ որմունք այս տաճարի:
 Աստ զի՞ կայ քո և թըշնամւոյս Աստուածա-
 մարտ.
 Ապականէ սա զօդ տեղեացս շընորհաղարդ:

Մաթան .

Այսպէս ահա բընահարի Յովհադա .

Յաւէտ խոհեմ արժան էր արդ լինիլ նըմա,
 Յարգել զգըշխոյն և մի բընաւ թըշնամանել
 Զոր առաքեալ է նա զպատգամ իւր աստ յայտնել :

Յովհադա .

Հապա, նա զի՞նչ հըրամայեաց գուժաբանել .

Եւ զի՞նչ պատգամ քո պէս հրեշտակ եկն մեզ ա-
 սել :

Մաթան .

Ըզկամս նորա լու արարի Յովսաբէի :

Յովհադա .

՚ի բայց ապա, հըրէշ, ծընունդ դու գարշելի .

Փուժան լընուլ ըզչափ գործոցդ եղեռնութեան,

Փուժան ՚ի խումբ անօրինաց . անդ կան մընան

Քեզ Աբիրոփն, Դաթան, Դովեկ, Աբիտոփել :

Ըունք՝ որոց Տէր մատնեաց ըզպիղծն զայն Յե-
 զաբել,

Որկորաբաց խընդրել խընդրեն ըզքեզ ՚ի կեր .

Քինառու է ՚ի քէն երկին արդարասէր :

Մաթան ՚ի ցնորման .

Թէ ո՞ ՚ի մէնջ տեսցուք յառաջ քան զելս
 աւուր

Նաբաղ, ելցո՞ւք ՚ի տեղւոջէս :

Նաբաղ .

Մի ինչ պակնուր .

Խըռովայոյ՞զ ծըփիս յանձին. յո՞ր կողմն երթաս.
 Ահաւասիկ քո ճանապարհ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Յովհաննէս, Յովսէփէ.

Յովսաբէ.

Արկածն եհաս.

Գոթողիա խըստիւ խընդրէ զԵղիակիմ.

Ծընունդ նորին և քո խորհուրդք, գիտեմ տէր
 իմ,

Չէն այժմ ծածուկ վայրիկ մի ևս, և չարն Մա-
 թան

ինձ աօացեալ էր զանուն հօր թըշուառ մանկան:

Յովիադա.

Եւ ո՞ն արդեօք իցէ յայտնեալ զայն Մաթանայ.

Ո՛չ աւելո՞րդ ինչ խօսեցար դու ընդ նրմա:

Յովսաբէ.

Ըստ իմո՞ւմ կարի ես սանձեցի ըզծուփս մըտաց.

Բայց լո՞ւր ինձ, տէր. մեզ ժամանեն արկածք չա-
 րեաց:

Մեք ըզՅովաօ պահպանեսցուք առ այլ դէպ ժամ.

Մինչև սկըսեալ է թըշնամեաց զյոյզս չարա-
 կամ,

Զմեզ պաշարեալ, ըզնա կորզեալ ՚ի մեր գըր-
 կաց,

Թո՞ղ ինձ ծածկել զնա միւսանգամ յաչաց պըղ-
 ծաց.

Ահա՛ բաց են նմա ճանապարհք , դրուենք ամե-
նայն .

Թէ հարկ է զնա տանիլ 'ի վայրս հեռի, խոպան,
Պատրաստ եմ ես . նա՛ քաջ գիտեմ ըզկիրճ ծա-
ծուկ ,

Ուր ո՛չ տեսցէ ոք զվատաբախտն , զանմեղ մա-
նուկ .

Անտի անցեալ մեր ընդ Աեդրոփն յորդաստան,
Մուտ արասցուք յայն անապատ, ուր մեղ նրման
'ի դառն փախուստ եղեալ ըզյոյս իւր ըզվերջին,
'ի խիստ որդւոյ զերծաւ Դաւիթ տառապագին :
Արջք և առիւծք չարկցեն զիս յահ վասն Յովա-
սայ .

Հրամայեսցե՞ս խընդրել նրպատ 'ի Յէուայ .
Ո՞չ ապաքէն խորհուրդ է այս մեզ ոգեշահ .
Ա՛ղէ զՅէու մեզ արասցո՛ւք աւանդապահ .
Կարեմ այսօր անցուցանել զնա յիւր աշխարհ,
Եւ զի չէ՛ ինչ աստի հեռի այն ճանապարհ .
Չէ՛ բնաւ Յէու անգըթասէր և տըմարդի .
Սիրելի է յաչըս նորա անուն Դաւթի :
Եւ զո՞ր արքայ՝ (եթէ միայն զնա Յեզաբել
Չիցէ ծընեալ) ո՛չ բաւեսցէ նա ցաւակցել .
Ո՞ ձեռընթափ լիցի ածել թեկն ըզնորին .
Ո՞չ ապաքէն արքայք համայն յառնել պար-
տին :

Յովիադա .

Աւանդ . ունայն, չար է խորհուրդ՝ զոր այժմ ինձ
տաս .

Դու յօգնութի՞ւն թոյլ Յէուայ վըստահանաս :

Յովսաբէ .

Բարկասցի՞ Տէր, եթէ ըզգաստ, ըզգոյշ կաց-
ցուք .

Ո՞չ մեղիցուք, եթէ յանձինս մեր յուսացուք :

Ո՞չ զմա՞րդ ունի Տէր 'ի գործի իւրոցն կամաց .

Ո՞չ ապաքէն նա ինքն զՅէու զինավառեաց :

Յովիադա .

Յէու՛ զոր սուրբ իմաստութիւն իւր էր ընտրեալ,

Յէու՛ յոր ետդ, որպէս գիտեմ, զյոյս հաստա-
տեալ,

'ի մոռացոնս հարկ ըզչնորհս իւր բարութեան .

Նա յանդորրու թողու զպիղծ դուստր Աքա-
հաբեան,

Երթայ ըստ չար թագաւորացն Իսրայելի,

Ունի զմեհեանս զազիր կըռոց Եգիպտոսի .

Յէու բուրէ անդ 'ի բարձունս խունկ զգարչու-
թեան,

Ձոր արգելեալ է մեզ Աստուած 'ի յաւիտեան .

Ձանուն իւր սուրբ ո՞չ վերօրհնէ սիրտ Յէուայ,

Ըզզըրկանացն չառնուն վըրէժ ձեռք Յէուայ :

Քա՛ւ մեզ, տիկին . առ Տէր Աստուած մեք կար-
դացուք .

Ցուցցո՛ւք զՅովաս . ըզնա թագիւ սլըսակեսցո՛ւք .

Բայց կամք են ինձ յառաջ քան զժամն նըշանա-
կեալ

Մըլիւլ յայս գործ, միեչչև չարիք են մեզ հա-
սեալ,

Մինչև ըզմեօք վըտանգս արկեալ է Մաթանայ :

ՏԵՍԱՐԱՆ Ի.

Յովիադա, Յովաբէ, Աղարեա, Պար երգեցողաց,
Ժողով չահանայեց եւ զեփափանաց.

Յովիադա .

Հապա, զե՞նչ դու. փանկ է տաճարս, Աղարիա:

Աղարիա .

Իմ առաջի են զամենայն դըրուեսն փակեալ:

Յովիադա .

Արդ դ՞ու միայն ընդ քո սուրբ գունդս ես ասա
Ֆնացեալ:

Աղարիա .

Երկիցս եկի շուրջ ըզգաւթօքն ըզսըրբ ութեան.

Չիք ոք բընաւ. իսպառ փախեան ամենեքեան.

Աստ է սուրբ ազգն. ահա՛ պաշտէ նա զՏէր Աս-
տուած:

Խոյս ետուն չարք. երկիւղ սաստիկ զնոսա ցըրուեաց.

Յորմէհետէ չէ Փարաւոփն զնոսա հարեալ,

Չէին նոքա յայնչափ տագնապ երբէք անկեալ:

Յովիադա .

Ազգ գերեծին, Աստուածամարտ, ազգ անպի-
տան....

Չիք ժամ 'ի բան արկանելոյ զայն ամենայն.

Բայց և ընդէ՞ր ցարդ ևս մանկունքս մընան ընդ
մեզ:

Մին յաղջկանց պարու .

Միթէ հընար իցէ մեզ, տէր, թողուլ ըզքեզ.

Իբրև զօտարս ըզմեղ ունի այս մեր տաճար.
Մեր հարք, եղբարք խըմբեալ են աստ միագումար:

Մ.ՅԼ աղջիկն .

Մ.ւնդ . թէ ձեռք մեր ապիկար ըստ Յայելի (1)
Ո՛չ հանցեն ոխ զանարդանացն Իսրայելի,
Ո՛չ ջաղխեսցեն զգլուխ թըշնամեաց Տեառն Ա-
րարչի,

Ի զոհ տացուք նըմա ըզկեանս մեր նորատի.

Մ.յն ինչ քո ձեռք վասն իւր անուան անդ մար-
տիցեն,

Մեր արտասուք յիւր սուրբ աթոռ աստ կար-
դասցեն:

Յովիադա .

Աւրէ՛թ խընդրացդ ահա մանկանց, քահանայից
Գունդ զինավառ՝ Իմաստութիւնդ յաւիտենից.
Ո՞ լըրբեսցի ՚ի պատերազմ գալ ընդ սոսա,
Եթէ դու ինքն նիզակակից լիցիս սոցա.

Հըզօր ես, Տէր. դու հարկանես և բըժըշկես,
Մեռուցանես և վերըստին կեցուցանես:

Ո՛չ է սոցա յանձինս իւրեանց ըզյոյս եղեալ.

Յուսան ՚ի քեզ, զի առ քեզ են միշտ կարդացեալ.

Յուսան միայն ՚ի կանխասաց խոստմունքս քոյ.

Դու խոստացար զնոսա երբեմն քումդ Օծելոյ.

Ըզքո սփոփանս լուան որմունք այս տաճարի,

Ձոր հաճեցար բընակութեանդ կազմել տեղի,

Որ քարոզէ զճըշմարտութիւն անմահ բանի,

(1) Դսմ. 42 7:

Որ և կացցէ մինչև ծագէ արև երկնի։
 Բայց զի՞ է, զի սիրտ իմ դողայ ըզսուրբ դողուն։
 Ո՛չ Աստուածեան հողի է այս կամ զօրութիւն...
 Առաջ... խօսի... նա ինքըն է... աչք իմ բանին...
 Սպասի դիշեր ապայ դարուց խաւարչըտին։
 Ո՛վ զլատականք, հարկք ինձ յունկն զձեր երգա-
 րանս։

Ձ իմ ըզմայլման ես խօսեցայց ընդ ձեզ ըլքանս։

Բողոր պար էրգէ Տաթմնու-Թեմմէ նու-աճարանայ.

Ձ ձայն լուիցնէք ըզՏէրունեան.

Սուրբ պատգամաց եմք ծարաւի,

Որպէս մատաղ բոյս ՚ի գարնան

Ցօղոյ ընդ այգն է ծարաւի։

Յովիադա .

Երկին, լճեր ինձ. երկիր, դիր ունկն իմումս ձայնի։

Ձ ի՞նչ դու, Յակովբ. քընէմձ է քո Տէր հըզօր.

Յառնէ արդ Տէր. կորիցես դու, ազգ մեղաւոր։

Աստուծոյ վէրսիւն սկսանին էրգէ Տաթմ-
 նու-Թեմն աճարայն նու-աճարանայ, և Յո-
 վիադա անդրէն անու- զլէլ Բանիցն .

Ձ ի՞ ձոյլ ոսկին անդ փոխեցաւ ՚ի չինչ կա-
 պար (1)....

Ո՞ է սպանեալն այն քահանայ (2).... ասան, տա-
 ճար....

(1) Արսայ Յովան։

(2) Որքէ Յովիադայ, չահանայապէսն և Տաթմարէ
 Ձախարեա, զոր սպան Յովան։

Լ անց, անիրաւոյ Երուսաղէմ • Լ անց, պիղծ քաղաք,
Արեանարբու մարդարէից Աստուածաւար •

Ատեայ զքեզ Տէր • ըզքեզ այլ ևս ոչ սիրէ նա •
Խուսնկ քո խուսնկ է դաժանահոտ յաչըս նորա •
Եւ յո՞ տանին ըզձեզ, տըղայք, ծերք և կա-
նայք (1) ••••

Քո՞ են փրլածքս, քաղաք դու պերճ •••• անկան
արքայք ••••

Տարաշխարհիկ վըտարանդին անդ քահանայք •••
Աործանեցան ասո՞ սեղանք ••• բարձան և տօնք •••
Քանդեանց, տաճար • հո՛ւր տեղասցի 'ի ձեզ, կիտ-
րոնք •

Ողբամ ըզքեզ, Երուսաղէմ չըքնաղագեղ •
'ի չի՞ք դարձան 'ի մի նուագ զարդք քո շըքեղ •
Ո՞ փոխեսցէ զաչս իմ 'ի դետս դառն արտասուաց,
Զի զքոյդ լայի զհարուածս չարեաց •

Ազարիա •

Ո՛վ սուրբ տաճար •

Յովսաբէ •

Դաւիթ •

Պոլո՛ր պար •

Աստուած դու Սիօփնի,

Յիշեա՛ զնախկին ըզքո շընորհս անճառելի •

Դարձեալ երգէ աստուծոյ Տաճարն Երուսաղէմ
ասե՛նայն նուագարանաց, և Յովսաբէ զհի՛ն
սուղ ինչ ժամու սկսանի վերստին •

(1) Գերուսեմն Բաբելոնի •

Անդ ՚ի խորոց անապատի

Լուսապայծառ Երուսաղէմ (1) վերածընի.

Անմահութեան ասան նըշան ՚ի ճակատին:

Ե՛րգս երգեցէք, ազգք աշխարհի.

Երուսաղէմ յարեալ շքեղ քան զառաջին.

Ուստի՞ առ նա ՚ի զանազան ծագաց երկրի

Դիմեն որդիք (2)՝ զորս չէր կըրեալ յորովայնի.

Երուսաղէմ, ամբարձ ըզգլուխ քո պըսակեալ.

Հայեանց յարքայս՝ որք ընդ քո փառս են սքանչացեալ.

Գետնատարած առաջի քո արքայք համայն,

Փոշուոյ ոտից քոց տան համբոյր:

Առ քեզ դիմէ անդ ազգ մարդկան.

Ձլոյս քո խընդրէ աչք նորա կոյր.

Երանեալ է՝ որ կըրեսցէ զՍիոն յանձին,

Որ ըզսիրտ իւր բորբոքեսցէ նախանձալիր.

Յերկիր ըզցօղ ցօղեան, երկին.

Ըզքօ փըրկիչ երկնեան, երկիր:

Յովսաբէ .

Աւանդ . ուստի՞ իցեն մեզ շնորհքդ անդիտելի,

Եթէ արքայք՝ յորոց փըրկին ծընանիցի....

Յովիադա .

Յովսաբէ դու, պատրաստեան ինձ զանգին զայն

Թագ,

(1) Եհէշէցի հաւաստացելոյ:

(2) Հէմանուս:

Տեսցէ 'ի տանս խաղաղութեան:

Այլ աղջիկն .

Ուրացեալ է Երուսաղէմ ըզՏէր Աստուած .
 Ընդէ՞ր նա ցայժմ լըռէ ընդ այն դառն իւր ար-
 կած .

Ընդէ՞ր Աբներ քաջագօտի
 Ո՛չ լինի այժմ մեզ հովանի:

Սաղովմիթ .

Ո՛հ յարքունիս՝ ուր բըռնութեան չի՞ք ինչ խա-
 փան,

Ուր փառք, պատիւ են վարձք միայն
 Խարդաւանաց, զըրկողութեան,

Ուր բընաւին չի՞ք իրաւունք ճըշմարտութեան,

Քոյր իմ, ո՞րք լիցի սլաշտպան,
 Լուեալ ըզկոծս անմեղութեան:

Այլ աղջիկն .

'ի մէջ չարեացս խիստ, ահագին
 Ո՞ւմ հանդերձեն զայն թագ անգին:

Սաղովմիթ .

Լուաք ըզձայն Տեառն Արարչի,

Բայց զոր նա աստ յայտնեաց իւրում մարգարէի

Ո՞րք պատմել մեզ մարթասցի .

Յօդնե՞լ մեզ այժմ յառնէ Աստուած .

'ի պատժե՞լ զմեզ յառնէ Աստուած:

Բողոք պար էրֆէ .

Ո՛վ խորհըրդոցդ . ո՛վ սպառնալեաց և սփոփու-
 թեանց .

Ո՛վ կանխասաց չարակրանաց և բարութեանց.
 Խիստ բարկութեամբ կամիս դու, Տէր,
 Մեզ ցուցանել զանչափ քո սէր:

Մի ձայն հայն.

Սիրօ՞ն ՚ի չիք ահա՛ դարձցի. զզարդսն ամենայն
 Ծախեսցէ հուր, լափիչ դաժան:

Այլ ձայն.

Աստուած պաշտպան է Սիրօնի. նորին հիման
 Խարիսխ է բան իւր սուրբ խոստման:

Առաջինն.

Սիրօն, զփայլիւն քո տեսանեմ աղօտացեալ:

Երկրորդն.

Սիրօն, ըզլոյս քո տեսանեմ յերկիր ծագեալ:

Առաջինն.

Սիրօն, յանդունդս զքեզ տեսանեմ խորասու-
 զեալ:

Երկրորդն.

Սիրօն, զճակատ քո տեսանեմ երկնամբարձեալ:

Առաջինն.

Ո՛վ կործանման.

Երկրորդն.

Ո՛վ այն փառաց անմահութեան.

Առաջինն.

Ո՛վ դառն ողբոց.

Երկրորդն.

Ո՛վ այն երգոց սուրբ յաղթուածեան:

Չայն երրորդ.

Մի խրուովիք. եկեսցէ ժամ, զի ինքն մեր Տէր
Չ գաղտնիս ածցէ 'ի յայտնութիւն:

Երեքեան 'ի մի ձայն.

Մեծարեսցո՛ւք զիւր բարկութիւն.
Հաստատեսցո՛ւք ըզյոյս յիւր օհր:

Այլ ձայն.

Տէր, ո՞ն զօրրտին՝ որ զքեզ սիրէ,
Ամբօխեսցէ զխաղաղութիւն.
Ըզքո սուրբ կամս նա կատարէ,
Չար ցանկութեանց ոչ հետևի.
Գո՞յ ինչ յերկրի կամ անդ յերկնի
Գիրքան զանմահ խաղաղութիւն
Չ անմեղ սրբտին՝ որ զքեզ սիրէ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ՉՈՐՐՈՐԴ.

ՏԵՍԱՐԱՆ Ը.

Յովսէփ, Յովսէփէ, Ջասարիս, Սաղաւթի, Ղե-
սասէան թ, Պար էրֆէցոչաց.

Սաղոմիթ առ աղջկունս.

Եղիակիմ ընթացակցեալ Ջաբարիայ,
Նազէ առ մեզ. ահա՛ և մայր իմ ընդ նոսաւ
Ձի՞նչ երկոքին նոքա ՚ի քօղս բարձեալ ունին.
Ձի՞նչ սուր է այն՝ զոր առաջի նոցա տանին:

Յովսաբէ առ Ջասարիս.

Դի՛ր ՚ի վերայ այս սեղանոյ, որդեակ անդին,
Ձմեր օրինաց ըզսուրբ մատեանդ զայդ ահա-
գին.

Դի՛ր այժմ և դու, Եղիակիմ իմ սիրաւիւր,
Ձայդ թագ շքեղ մերձ մատենին Լստուա-
ծաձիր.

Ղևտական դու, քեզ զայդ ահեղ սուր ըզԴաւթի
Յովիադա ասաց դընել մերձ այն թաղի:

Յովսա.

Տիկին, սո՛ղէ, զի՞նչ իցէ այս նոր տեսարան.

Առ ի՞նչ այս սուր, առ ի՞նչ այս թագ և այս
մատեան.

Յորմէհետէ յայս սուրբ տաճար եմ ընկալեալ,

Ըզհանդերձանսդ ոչ է իմ աստ հրբէք տեսեալ:

Յովսաբէ.

Ունիմք, որդեակ, զամենայն ինչ յայտնաբանել:

Յովաա.

Զի՞մ արդեօք գլուխ դու թագազարդ կամիս
պըճնել.

Տես, տիկին դու, զի մի զայս թագ անպատուես.
ցես,

Մի զարքային՝ որ զսա կըրէր, այժմ պըղծես.
ցես

Ըզիշատակ. մանուկս, արջոց 'ի կեր թողեալ....

Յովսաբէ Յեւելով նմա պէտքն.

Ես կատարեմ, որդեակ, զոր են ինձ պատուիրեալ:

Յովաա.

Բայց զի՞նչ է այդ. տիկին, յողո՞ց դու ելանես.

Ընդէ՞ր այդպէս անմըխիթար արտասուիցես.

Պարտիցի՞մ ես աստ յողջակէզ այսօր բերեալ.

Որպէս էր գիրգն դուստր Յեփիթայեայ պատա.
րագեալ.

Զիջուցանել ըզբարկութիւն Տեառն Աստուծոյ.

Աւասիկ եմ. 'ի ձեռըս հօր է կեանք որդւոյ:

Յովսաբէ.

Ահա՛ որ քեզ ունի յայտնել ըզկամս երկնի.

Մի ինչ բընաւ դու երկիցես:

(Ա. Գ. Գ. Գ. Գ.)

Ելցո՞ւք աստի:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Յովհաննէս, Յովնա.

Յովնաս՝ ճեպելով 'ի գերէս չահանայապէսիս.
Հայրիկ.

Յովհաննէս.

Հայա.

Յովնաս.

Առ ի՞նչ իցէ այս հանդերձան:

Յովհաննէս.

Այո՛, որդեակ, հարկ է ինձ այժմ յայտնել քեզ
զայն.

Ժամ է գիտել քեզ տի նախքան զամենեսին

Ձոր Տէր Աստուած վըճռեալ է քեզ և իւր
ազգին.

Ժամ է յառնել քեզ 'ի հաւատս, 'ի քաջութիւն

Եւ ըզգենուլ զազնիւ եռանդն, ըզսըբութիւն,

Ձորս իմ խընամք 'ի խորս սըրտի քո տընկեցին.

Հատն արդ Տեառն զոր պարտական ես դու նը-
մին.

Փութան զնախանձ սըրբանուէր յանձին վառել:

Յովնաս.

Պատրաստ եմ զկեանս, եթէ կամի, նըմա զոհել:

Յովհաննէս.

Ստէպ ընթերցար դու զպատմութիւն թագաւո-
րաց.

Չե՞ս մոռացեալ. որդեակ, ըզհետ ո՞ր օրինաց
Պարտի երթալ որ արժանի է պերճ թաղի:

Յովաս.

Արքայ խոհեմ՝ այսպէս ասաց Տէրն կենդանի (1),
Բընաւ ըզյոյս իւր ո՞չ դընէ յարժաթ, յոսկի,
Միշտ երկընչի յիւր Աստուծոյ, յամենայնի
իւր առաջնորդ ըզսուրբ օրէնս նորա ունի,
Չէ լըծադիր անագորոյն իւրում աղղի:

Յովիադա.

Որդեակ իմ, դու ո՞ր արքայի հետեւիիր,
Եթէ երբեքն յաթոռ շքեղ ինքն բազմիիր:

Յովաս.

Միայն Դաւիթ ինձ օրինակ յայնժամ լինէր.
Նա զՏէր Աստուած փրկաց ի սէր սրբբանուէր:

Յովիադա.

Ապա այլ ևս ո՞չ երթայիր ըստ եղեռանց
Չար Յովրամայ, Աբողիայ օրինազանց:

Յովաս.

Աւանդ, հայրիկ.

Յովիադա.

Ձի՞նչ դու առ այս. հապա, ասան:

Յովաս.

Սատակեսցի որ երթիցէ ըզհետ նոցա:

(1) Եզր օրեւ. 42. Ժէ. 45բ. 17—20:

(Յոզիտարս տնկանի յոսո նորս)

Զի՞նչ առնես դու. զքե՞զ տեսանեմ իմ առաջի:

Յովիադա.

Քեզ տամ զպատիւ՝ զոր պարտ եմ տալ իմ
արքայի.

Յովաս անգին, նախնւոյդ Դաւթի լեր արժանի:

Յովաս.

Ե՞ս եմ Յովասդ:

Յովիադա՛ յառնելով.

Ծանիր ըզնորհս անճառելի.
Ի՞քն Տէր Աստուած կապեալ ըզձեռն մօր մո-
լեզին,

Յորժամ արդէն ՚ի քում սըրտի էր սուր նորին,
Ըզքեզ ընտրեաց, ըզքեզ փըրկեաց ՚ի մահուանէ:
Բայց չէս տակաւ դու ազատեալ ՚ի նըմանէ.

Նոյն այն եղեռն՝ որ տանէր զկինն գարշաբարոյ
՚ի սպանանել զվերջինդ յորդւոց որդւոյ իւրոյ,
Եւ այժմ ահա՛ ՚ի քո կորուստ է զնա վառեալ,
Թէ և զանուն քո ո՛չ է իմ ումեք յայտնեալ.
Բայց ընդ դրօշիւքդ գիտացին հոգք իմ գումա-

րիւ
Զազգ՝ որ պատրաստ է ՚ի չարաց զքէն քո հա-
նել:

Մ՛հետ աստ առէք, ո՛վ պետք ազգացն ազնուա-
կան,

Երջանկատոհմ պաշտօնատարք տանս սըրբու-
թեան:

ՏԵՍԱՐԸՆ Գ.

Յովաս, Յովիտա, Ազարիա, Իսմայէլ Երէսայ
 աստուծոց զհամէանայ.

Յովիադա.

Ահա, արքայ, վասն քո սոքա են զինուորեալ.
 Քահանայք դուք, ահա արքայն՝ զոր խոստացեալ
 Եի ես ձեզ:

Ազարիա.

Եղիակիմ:

Իսմայէլ.

Այս գիրգ տըղայ....

Յովիադա.

Ե ժառանգորդ թագաւորացն թըշուառ Յուդայ,
 Աստաբախտիկն Աբողիայ որդի վերջին,
 Որում՝ գիտէք, Յովաս անուն յորջորջեցին:
 Յուդա համայն վասն այս ծաղկան վաղաթարշամ
 Ընդ ձեզ զարտօսը ցաւակցուծեան ցօղեալ յայն-
 ժամ,

Կարծէր՝ թէ սա էր ընդ եղբարս իւր ըսպանեալ.

Այն և սա էր անդ՝ ի խոր խոցահարեալ,

Բայց Տէր Աստուած զայն մահաբեր վէրս բը-
 ժըշկեալ

Եւ զկիսաշէջ ըզջերմուծիւն սըրտին պահեալ,

Հըրամայեաց՝ ըզտըքուն աչս դահճաց խաբեալ,

Ձի Յովսաբէ զարիւնալիցն ՚ի գիրկս բարձեալ

Եւ արարեալ զիս գողակից, յայսմ տաճարի

Ձանմեղ մանուկս զայս թագուացէ ընդ դայեկի:

Յովաս.

Ե՞րբ կարացից հատուցանել, հայր յարգելի,
Ըզքո սիրոյ, ըզքո բարեաց վարձ արժանի:

Յովիադա.

Յովաս, առ այլ դէպ ժամանակ պահեա՛ դու զայն:
(Առ զհարսնսն).

Իսկ արդ՝ ահա՛ ձեր թագաւոր, ձեր յոյս միայն.
Յայսօր խընամ տարայ ըզսա ձեզ պահպանել.

Պաշտօնեայք Տեառն, ձեր է ըզդործ իմ պըսակել:
Ե՛րբ չարամիտն, անգուժն այն դուտար Յեզա-
բելայ

Տեղեկացի՛ եթէ Յովաս դեռևս աստ կեայ,

Ձսա վերըստին դառնակըտիտ մահու սպանցէ,

Ձոր և վանէ, թէև տակաւ ոչ ճանաչէ:

Ե՛րբ եղերուք, մինչև չարաց է յարուցեալ.

Փութացէք դուք փըրկել զձրէայս գերեվարեալ,

Կանգնել զօրէնս, հանել ըզվրէժ թագաւորաց

Եւ զայս արբայ ձեր ցուցանել երկուց ազգաց:

Այդ մեծ իմ գործ բազմավըտանդ է յիրաւի,

Ձի ճակատիմ ես թագուհւոյ քաջագօտի,

Որ ընդ ձեռամբ ունի զանժիւ բանակս զօրաց

Լիբբ Տիւրացւոյ, Եբրայեցւոյ նենգաւորաց.

Բայց իմ պաշտպան, իմ առաջնորդ է Տէր երկնի,

Եւ յայս մանուկ է ապաւէն իսրայելի.

Ահա՛ խռովէ Տէր քինառու զայն թագուհի,

Ձոր և խաբեալ, զձեզ աստ թագուն ժողովեցի.

Նա զմեզ կարծէ լինիլ անդէն, անձեռընհաս:

Պըսակեօցնօք, քարոզեսցնօք փութով զՅօվառ.
 Ապա գնասցնօք, քաջ զօրականքդ նոր արքայի,

Կոչեալ մեզ յողն ըզլասուաւոր պատերազմի
 Եւ ղինուորեալ մեծահաւատ զսիրտս քընէած,

Յառագաստի անդ խընդըել ղկինն ընդդիմակաց:

Եւ ո՞ կարէ քընահարիլ ղքուն մահաբեր,
 Մինչև չանսալ ձայնի երկնից, չերթալ ղհետ մեր,
 Ըզհամախումբ տեսեալ ղհանդէս ըզսըրբու-
 թեան,

Ըզթագաւոր՝ զոր պահպանեաց Տէր յիւրում տան,

Ըզթառանգորդ Ահարովնի՝ գըլուխ մարտկաց

Մանկանց Ղևեայ, քահանայից, ղլետականաց

Եւ ղզէնս ասեղ՝ զորս Տեառն Դաւիթ մատոյց
 ՚ի ձօն,

՚ի ձեռս աղգաց խաղաղասէր, բարեպաշտօն:

Անդ Տէր Աստուած զոսոխս յերկիւղ արկցէ ան-
 կարծ.

՚ի պիղծ արեան լուացարնօք դուք պարծ ՚ի պարծ.

Հարէք ըզդունդ Խորայելեան և Տիւրացի.

Ո՞չ ապաքէն էին նախնիք ձեր անուանի

Քաջ ղլետականքն՝ որք ՚ի պաշտել Խորայելի

Յանապատի անդ ղգարշ աստուած ըզՆեղոսի

Չեռօք իւրեանց սատակեցին ղդիրգ աղգականս,

Տեառն մատուցին ղարիւնախառն ըզնուիրանս

Եւ սըրբութեամբ նահատակեալ յահեղ մարտի,

Կացին միայն ըսպասատարք այս տաճարի:

Բայց տեսանեմ՝ ղի քաջավառ էք գալ ընդ իօ.

Արդ յայս մատեան դուք երդուարնօք նոր ար-
 քայիս,

Ձոր հաճեցաւ այսօր երկին ձեզ պարգևել,
 Վասըն սորա կեալ, մարտընչել և մեռանել:

Ազարիա՝ հօնօրէն ՚ի ծայր սեղանոյ, և եղև
 ղձեռն իւր ՚ի վերայ ոտքէ ճամբելն:

Աստ միաձայն երդնումք վասն մեր, վասն մեր եղ-
 բարց

Կարգել զՅովա ս ծաղկափլթիթ յաթոռ իւր
 հարց

Եւ մի ՚ի բայ թողուլ ըզսուր ՚ի մեր ձեռաց,
 Մինչև հանցուք ըզվրէժ սորա ՚ի թըշնամեաց:
 Բայց եթէ ոք զիւր դըրժեսցէ ըզսուրք երդումն,
 Հաճեաց, Աստուած, թափել ՚ի նա ըզքո ցա-
 սումն

Եւ ՚ի շնորհաց քո անպատում ողորմութեան
 Անմասն առնել զորդիս նորա ՚ի յաւիտեան:

Յովիադա.

Եւ դու, արքայ, ո՞չ կամիցիս երջի առնել
 Ըզսուրք օրէնս Տեառն Աստուծոյ միշտ պահ-
 պանել:

Յովաս.

Եւ կարիցե՞մ զնովիմքք ՚ի կեանս իմ անցանել:

Յովիադա.

Որդեակ՝ ներեա՛, զի զքեզ այդպէս իշխեմ կոչել,
 Ներեա՛ իմումս առ քեզ սիրոյ և արտասուաց,
 Ձորս վասն անձինդ երկիւղ անսուտ խըլէ յաչաց:
 Ո՞չ աճեցար դու ՚ի զեղխանս դրան արքունի:
 Ո՞չ է քո դեռ ըզփառս զգեցեալ ըզթունալի,

Ո՛չ պապական ազատ իշխանութեան,
 Եւ ո՛չ լուեալ ըզհրապուրչաց ձայն խարդաւան.
 Նոքա քեզ յուսկն շըշընջեսցեն վաղվաղակի,
 Թէ սուրբ օրէնք միայն ահեղ են վասն ազգի,
 Թէ արքայի չի՛ք այլ օրէնք բաց յիւր կամայն,
 Թէ պարտ է նմա զամենայն ինչ զոհել փառացն,
 Դատապարտել զազգ իւր յարտօսը, ՚ի տառա-
 պանս,

Ճընշել ըզնա, ածել ՚ի նա ըզհալածանս,
 Կառավարել զնա երկաթի գուլաղանաւ:
 Այսպէս ահա՛ խորոց ՚ի խորս, դաւոյ ՚ի դաւ
 Ապականեալ ըզքո բարուց ըզսըբութիւն,
 Նոքա տացին քեզ նախատել զճըշմարտութիւն,
 Զառաքինիս նըկարեսցեն քեզ այլադէմ.
 Նոքա, աւանդ, խոտորեցին զարքայն խոհեմ....
 ՚ի սուրբ մատեանս երդուի՛ր հանդէպ այս վը-
 կայից,

Թէ ո՛չ թողցես երբէք զԱստուածն յաւիտենից,
 Թէ խիստդ սա չարն և հովանի բարեգործին
 ՚ի դատ զԱստուած կոչեսցես քեզ և տընան-
 կին,

Միշտ յուշ բերեալ՝ թէ զքեւ արկեալ զայդ
 զգեստ վըշեայ,

Եւ դու էիր որք և տընանկ նըման նոցա:

Յովան՝ Ենդ ճիջ սեղանոյ, երեալ զճեռն իւր ՚ի վէրայ
 սուրբ հասկէնի.

Երդնում ձեզ միշտ երթալ ըզհետ սուրբ օրինաց.
 Պատժեա՛ զիս, Տէր, եթէ երբէք զքեզ մոռացայց:

Յովիադա .

Ե՛կ արդ . ժամ է իւղով սըրբով զքեզ օծա-
նել .

Ե՛կ Յովաբէ, կարես դու այժմ աստ մուտ առ-
նել :

ՏԵՍԱՐԱՆ Դ .

Յովա, Յովիադա, Յովաբէ, Ջախարիա, Սաղոմ-
թի, Աղարիա, Իսայէլ, Երէս այլ աստ ջնորդս զի-
սանսաց, Պար էրգեցոյաց .

Յովաբէ իարեւով զՅովասա .

Արքայ ընտիր, որդի Դաւթի .

Յովասա .

Անզոյդ իմ մայր .

Ջաքարիա, փուլթան գըրկել ըզքո եղբայր :

Յովաբէ աս Ջախարիա .

Որդեակ, անկիր յոսո արքայի քո պատուական :
(Ջախարիա անհանի յոսո Յովասայ) .

Յովիադա՝ Տիւղէն աստ իարեւ զՏիւղմաթի .

Այսպէս գմիւնանս դուք սիրեսջիք ՚ի յաւիտեան :

Յովաբէ աս Յովասա .

Գիտե՛ս դու այժմ՝ յոր արեւէ է քո ծընեալ :

Յովասա .

Գիտեմ և ո՛ր էր ՚ի կենաց զիս զըրաւեալ,
Եթէ չէր քո

Յովսաբէ.

Կարե՞մ ապա կոչել, Յովսա,
Զքեղ յանուն քո:

Յովաս.

Միշտ սիրեսցէ ըղքեղ Յովաս:

Պար.

Սա է....

Յովսաբէ.

Սա է Յովաս:

Յովիադա.

Ահա և զլատական:

ՏԵՍԸՐԱՆ Ե.

Յովաս, Յովիադա, Յովսաբէ, Զասարեա, Սաղոմ-
թի, Աղարեա, Իսմայէլ, Երէս այլ առաջնորդս զե-
րասէանաց, Զհասէան թ, Պար երգեցողաց.

ՂԼտական.

Ո՛չ դիտեմ զի՛նչ ՚ի ճակատ Տեառն անդ չարք
խոկան.

Բայց սուրք ահեղ ընդ ամենայն տեղիս շկահեն,
Առ են խարոյկք ՚ի մէջ դրօշից, փանդուունք
հընչեն.

Գոթողիա զօրաթողով է յիրաւի.

Կուրացեալ են մեզ ճանապարհք, անցք նը-
պաստի.

Ահա և զլեռան՝ ուր մեր տաճար է կառուցեալ,
 Չարայանդուզն զօրք Տիւրացւոց են պաշարեալ:
 Ո՞քն 'ի նոսա հայհոյելով եկն անդ ասել,
 Եթէ գերեալն Աբներ չկարէ մեզ պաշտպանել:

Յովսաբէ — Յով:

Որդեակ անգին, ըզքեզ 'ի զուր ետ ինձ երկին.
 Ո՛չ խնայեցի յինչ 'ի փրկեանս քումըդ անձին...
 Զհայր քո Դաւիթ ո՛չ յիշէ Տէր ամենեին:

Յովիադա — Յով: Բէ:

Ո՛չ երկընչիս դովաւ զարդար ցասուքն նորին
 Չըգեւ 'ի քեզ և յայս արքայ քո սիրելի.
 Եթէ ըզսա 'ի քո ձեռաց թափեալ բըռնի,
 Ըզտուն Դաւթի ջընջել կամէր Տէր քինառու,
 Յո՛ւշ լիցի քեզ, լեռան է այս սուրբ՝ ուր այժմ
 Իս դու,

Ուր անտըրտունջ նախահայրն մեր ամենեցուն
 Ամբարձ երբեքն զձեռս 'ի վերայ անմեղ որդւոյն,
 'ի փայտակոյտ հանեալ ըզպտուղն ըզծերութեան,
 'ի Տէր յանձեալ ըզկատարուքն իւր սուրբ խոստ-
 ման

Եւ ընդ իւրուքն հարազատի նըմա զոհեալ
 Ըզյոյս՝ զոր էր աղգն ամենայն 'ի նա եղեալ:
 Ժամ է 'ի մարտ մեզ տնօրինիլ: Արդ՝ Իսմա-
 յէլ,

Հորկ է ըզկողմն արևելեան քեզ՝ պահպանել,
 Քեզ՝ ըզհիւսիս, քեզ՝ զարևմուտս, քեզ՝ ըզհա-
 րաւ.

Մի որ զեռանդն անմըտութեան ցուցցէ բընաւ,

Մի ոք 'ի ձէնջ' թէ քահանայ, թէ ղւտական,
 Յարձակեսցի մինչև լուիցէ զիմ հըրաման.
 Ամենեքեանդ միախորհուրդ յառաջ մըղեալ,
 Պահպանեսջի՛ք ըզկողմն՝ զոր ձեզ իմ է յանձնեալ:
 Ոսոխք կարծեն զմեզ գըտանել յանկարգու-
 թեան.

Զմեզ համարին նոքա 'ի կոյր կատաղութեան
 Երկչոտ ինչ խաշն՝ մատնեալ նոցա 'ի չար զեն-
 լի:

Ազարիա, դու ուղեկից լեր արքայի:
 (Ա.՝ Յո՛ւն).

Ե՛կ, պատուական դու շառաւիղ տանն վեհափառ,
 'ի քո պաշտպանս ազգել զխրոխտանս ըզքաջա-
 վառ.

Ե՛կ ըզքո գլուխ թագազարդել յաչըս դոցա,
 Եւ թէ մեռցիս, գոնէ մեռի՛ր իբրև արքայ:
 Յովսաբէ դու, եկ ընդ սըմա:

(Ա.՝ զեփեմէն ոչ).

Տո՛ւր ինձ զայդ սուր:

(Ա.՝ պար էրֆեցոյց).

Մանկունք անմեղ, մատուցէք Տեառն զարտօսը
 մաքուր:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Սուղեֆէ, Պար էրֆեցոյց.

Բողոր պար էրֆէ.

Գնացէք, որդիք Ահարովի.

Ո՛չ է նախնեացդ զինեալ նախանձ

Ընդ այսպիսի մարտ յաղթապանձ.

Գնացէք, որդիք Ահարովնի.

Դուք մարտընչիք վասն Աստուծոյ և արքայի:

Մի ձայն Տէրայն.

Եւ ո՛ւր են այժմ, Աստուած հրղօր,

Նետք՝ զորս լարես 'ի բարկուժեան.

Դու չե՞ս Աստուածն նախանձաւոր.

Դու չե՞ս Աստուածն քինաւուժեան:

Ա.ՅԼ ձայն.

Ո՛ւր են, Աստուած դու Յակովբայ, շնորհք քո
բարեաց.

'ի մէջ անչափ մերոցս չարեաց

Միայն ձայնի՞ լըսես գործոց մեր չարազգած.

Դու չե՞ս Աստուածն այն ողորմած:

Բողոր պար.

Ո՛ւր են, Աստուած դու Յակովբայ, շնորհք քո
բարեաց:

Մի ձայն Տէրայն.

'ի քո ճակատ արքն անօրէն,

Տէր իմ, լարեն 'ի մարտի անդ զնետս ահա-
գին.

Բարձցո՛ւք իսպառ՝ նոքա ասեն,

Յերկրէ ըզտօնս Աստուածային.

'ի խիստ լըծոյ ազատեսցո՛ւք զազգ մարդկա-
յին.

Սպանցո՛ւք ըզսուրբս, կործանեսցո՛ւք զսեղանս
նորին:

Մի ևս յերկրի աստ մընասցէ

Այն յիշատակ անուան նորին.

Մի բնաւ նա ինքն, մի իւր Քրիստոս մեզ տի-
րեսցէ:

Բողոք պար.

Եւ ո՛ւր են այժմ, Աստուած հըզօր,

Նետք՝ զորս լարես 'ի բարկութեան.

Դու չե՞ս Աստուածն նախանձաւոր.

Դու չե՞ս Աստուածն քինառութեան:

Մի ձայն հայն.

Թըշուառ ժառանգ մեր արքայից,

Տանն սըրբութեան ծընունդ վերջին և մեծա-
գին,

Աւանդ, միթէ մօր ժանտալից

Կամք են 'ի սուր իւր հարկանել զքեզ վերըստին.

Ասա՛, արքայ դու սիրելի,

Հրեշտակ արդեօք քեզ պաշտպանեաց յօրօրո-
ցի,

Թէ Տէր Աստուածն այն կենդանի

'ի մահուանէ վերակոչեաց ըզքո հոգի:

Այլ ձայն.

Ո՛վ մեծդ Աստուած, 'ի նըմանէ՞ ըստգըտեսցին.

Չարապարհիշտ այն գործք հաւու և հօր նորին.

'ի յաւիտեան զըրկես ըզնա 'ի քո շնորհաց:

Բողոք պար.

Ո՛ւր են, Աստուած դու Յակովբայ, շնորհք քո
բարեաց.

Դու չե՞ս Աստուածն այն ողորմած
Մին յաղջկանց պարու ո՛չ երգելով
 Լըսե՞ք, քորք իմ, ըզձայն փանդուան
 Խիստ Տիւրացւոցն գարշազաւան:

Սաղովմիթ.

Լըսեմ և զկոծս խրոխտ զինուորաց.
 Ո՛վ դառնութեանց, ո՛վ արհաւրաց.
 Փախիցո՛ւք մեք ամենեքեան,
 Թագիցո՛ւք մեք ընդ փլրկական
 Հովանեաւ Տեառն չարահալած:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ՆԻՆԳԵՐՈՐԴ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ջաքարիա, Սաղոմոն, Պոլ էրֆէյոզաց.

Սաղովմիթ.

Ջի՞նչ ասիցես, Ջաքարիա իմ սիրական:

Ջաքարիա.

Յաճախեցէք առ Տէր զաղօթս սըրբանուէր.

Գուցէ վերջին իցէ այս ժամ 'ի կեանքս մեր.

Քոյր իմ, արդէն հըրաման է մըղել ըզմարտ:

Սաղովմիթ.

Ջի՞նչ ընդ Յովաս:

Ջաքարիա.

Պաճուճեցաւ նա թագազարդ.

Իւղով սըրբով էօժ ըզնա վեհ քահանայն.

Ո՛հ զի՞նչ խայտանս անդ խայտային աչք ամենայն

Ընդ յարուցեալն 'ի մահուանէ այն գիրգ արքայ:

Քոյր իմ, տեսաք մեք զկարեվէր ըսպի նորա,

Տեսաք մեք ևս զհաւատարիմ նորին դայեակ,

Որ թագուցեալ 'ի մէջ այս սուրբ տան ընդարձակ

Եւ պահպանեալ զաւանդն անգին, իւր խընամոյ

Չունէր վըկայ բայց զաչս իմ մօր և Աստուծոյ:

Մեր ղևտակաւք արտասուէին 'ի հըրճուանաց.

Անդ խառն էր ձայն հեծկըլտանաց և բերկրանայ,

Անդ ՚ի միջի ուրախութեան մեր անպատում
 Յովաս ոչինչ մեծամըտէր յանձին իւրում.
 Խոնարհութեամբ ըզձեռանէ նա զոմի ունէր,
 Քաղցրաժըպիտ իմի գըղուանօք յոմի ակնարկէր,
 Երդնոյր եթալ ըստ անխարդախ խրատուցնոցին,
 Հայր կամ եղբայր զնոսա կոչէր զամենեսին:

Սաղովմիթ.

Բայց այս գաղտնիք չե՞ն տարածեալ յայլ ևս տե-
 ղիս:

Չաքարիա.

Ո՛չ. զայն գիտեն միայն որք ենն ՚ի տաճարիօ:
 Գիրգ բազմութիւն մանկանց Ղևեայ կարգաբա-
 ժան

Առ սուրբ դըրամբք կանգնեալ են այժմ ՚ի լը-
 ութեան,

Որք և պարտին անկարծ գըրոհ տալ դաս առ դաս,
 Գոչեալ ՚ի նշան բուռն յարձակման՝ կեցցէ Յո-
 վաս:

Եւ զի արքայն մի բնաւ անկցի ՚ի սլատահար,
 Նմա թիկնասլահ զԱզարիա կարգեաց իմ հայր.
 Բայց սըրազէնն Գոթողիա չարախոկաց

Ծիծաղիզթոյլ մեր պատնիշօք դրանց պըղընձեաց,
 Կառուցանէ ըզմանգղիոնս իւր ասագին,

Սպառնայ ՚ի սուր մատնել ըզմեզ զամենեսին:

Քոյր իմ, ոմանք ՚ի քահանայս մեզ ասացին

Թագուցանել ըզտապանակն զայն մեծագին

՚ի ստորերկրիայ տեղուջ՝ զոր հարք մեր են փո-
 րեալ.

Ամօ՛թ գլխոցդ՝ ասաց անդ հայր իմ ղայրա-
գնեալ.

Սուրբ տապանակն՝ որ կործանեաց զմարտկոցն
չարաց,

Որ յետո դարձոյց ըզՅորդանան արագընթաց,

Որ զգարչ աստուածս կոխան արար քաղու՛մ ան-
գամ,

Թագիցէ՞ արդ յերեսաց կնոջն այն անըզգամ:

Մայր իմ բընաւ անբաժան էր ՚ի Յովասայ.

Աչս արձակեալ կէս ՚ի սեղան և կէս ՚ի նա,

Լըռիկ էր նա. տեսիլ նորա յոգնաթախի՛ծ

խըլէր արդեօք զարտօսը յաչաց անողորմից.

Ձնա պահ ընդ պահ ողջագուրէր արքայն գողտ-
րիկ,

Գըգուէր ըզնա... Եկա՛յք ընդ իս, քորք իմ նա-
զիկ.

Աւա՛ղ, եթէ այսօր արքայ մեր մեռիցէ,

Թո՛ղ մահ դաժան ըզմեզ ընդ նմա միակցեսցէ:

Սաղովմիթ.

Ձի՞նչ ձեռն յանդուգն ըլխիստ հարուածս անդ
հարկանէ....

Ձի՞նչ տեսանեմ. ո՞ն զղևտականս մեր խուճապէ.

Ընդէ՞ր ծածկեն նոքա ըզգէնս. ՚ի մէջ չարեանց

Արդէն անկեալ իցէ տաճարս:

Չաքարիա.

Միամըտեանց.

Աստուած զԱբնեբ մեզ առաքէ:

ՏԵՍԵՐԱՆ Բ.

Աբիեր, Յովիտար, Յովուբէ, Ջախարիա, Սաղոմ-
 թէ, Իսմայէլ, Երէն- զե-սահանք, Պար էրֆէյոզադ.

Յովիտարա.

Անգին Աբներ,

Ո՛չ հաւատամ աչաց իմոց. զիմրդ անցեր
 Ընդ շըրջապատ բանակ զօրաց խըրոխտ, դաժան.
 Մեզ լու եղև՝ թէ պիղծն այն դուստր Աբա-
 հաբեան

Ի կատարել դիւրաւ զխորհուրդս իւր չարավառ,
 Ի կապանօք կապեալ ըզձեռս քո մեծափառ:

Աբներ.

Բայց նա երկեաւ յանձնէ իմմէ քաջ և անմեղ.
 Երանի թէ թափէր նա յիս զիւր վրէժ ահեղ:
 Ի բանտ մըթին ըստ հրամանի նորին արկեալ,
 Ըսպասէի՝ զի զայս տաճար նա տապալեալ
 Եւ տակաւին ո՛չ շիջուցեալ զճարաւ արեան,
 Զիմ փուլթասցէ կարճել աւուրս թըշուառա-
 կան,

Որք տեսանեն մինչև ցայսօր զլոյս արևու,
 Տեսեալ զարքայս իմ անկանիլ ողորմ մահու:

Յովիտարա.

Ապա հրաշի՞րք ի՞նչ դու գըտեր ըզնորհս նորին:

Աբներ.

Միայն Աստուած գիտէ զխորհուրդս խըստասըր-
 տին:

Առչեալ նա զիս, արկեալ յիս զաչա իւր զայրա-
գնեալ,

«Տէս՝ ասաց ինձ, զօրք իմ զտաճարդ են պաշարեալ»

«Հուր քինառու ունի իսպառ զնա կործանել»

«Լնդ ձեր Լստուած ոչ կարասցէ նմա պաշտպա-
նել»

«Չեր քահանայք՝ բայց ինձ արժան է վաղվաղել»

«Ջանձինս երկու դաշնադրութեամբք կարեն
փլրկել»

«Թող ՚ի ձեռս իմ զԵղիակիմ տացեն նոքա

«Եւ ընդ նրմա զգանձ՝ զոր երբեմն Դաւիթ
արքայ

«Ի՛ր ժողովեալ, զոր այժմ պահէ Յովիադա,

«՚ի տաճարի գաղտնակընիք փակեալ ըզնա»

«Ե՛րթ և ասա՝ եթէ սովաւ գէթ ապրեսցին»»

Յովիադա.

Մեզ զլնչ խորհուրդ տացես առ սյս, Լբներ
անգին»

Լբներ.

Եթէ պահեալ է արդարեւ սյս մեր տաճար

Ըզգանձս ոսկւոյ սյն արքայի գերամեծար

Եւ զամենայն՝ զոր ինչ փլրկել կարողացար

Յազահ ձեռաց Գոթողիայ վընասահար,

Տուր նրմա զսյն» Միթէ կամի՞ս՝ զի ազգ դաժան

Տապալեսցէ ըզքերովբէս և ըզսեղան,

Ջի զտապանակն պըղծեալ անդ ձեռք ամբար-
տաւան,

Ըզգաբիրայն շաղախեսցեն ՚ի քուժ արեան»

Յովիադա.

Բայց գործ իցէ արդարախոհ և վեհափառ
 Ըզխիսա տանջանս ածել զգըլխով մանկան թը-
 շուառ.

Ինքն Տէր Աստուած յիս ապաստան արար ըզնա.
 Գործ է զանձինս կեցուցանել մահուամբ նորա:

Աբներ.

Ո՛վ մեծդ Աստուած, առաջի քո բաց է սիրտ իմ.
 Ո՛ տայր՝ զի չարն ոչ յիշէր բնաւ Նշխակիմ,
 Ջի իմ արեամբ հաշտիլ կարէր եղեռն նորա
 Ընդ Աստուծոյ՝ որ չարաչար տանջէ ըզնա:
 Բայց յօգորտ ինչ իցեն նրմա խնամք քո չընչին.
 Մեռցի և նա, եթէ մեռջիք ամենեքին.
 Ո՛չ արգելու Աստուած խընդրել զանկարելին:
 Չեռամբ իւր մօր ըստ հրամանի ժանտ արքային
 Մանուկն Մովսէս՝ ի Նեղոս գետ էր ընկեցեալ
 ՚ի ծնընդենէ՝ ՚ի դառն կորուստ դատապարտեալ.
 Ո՛չ գոյր ինչ յոյս, բայց փըրկեաց զնա Տէր
 բարերար,

Եւ բըռնահարն եղև նրմա խընամատար:

Եւ ո՞ գիտէ զոր նա կարգեացն Նշխակիմայ.

Բա՛բէ, գուցէ ըզնոյն օրհաս վըճուեալ նրմա,

Արդէն շարժեալ է ՚ի գորով ցաւակցութեան

Ջարեանարբու մեր արքայից թըշուառական:

Յովսաբէ ևս ընդ իս ետես ըզթագուհին.

Տեսաք ըզնա՝ զի կակղայեալ էր սիրտ նորին.

Տեսաք ըզնա՝ զի զիջեալ էր ցասումն նորին:

(Ա՜ Յովսաբէ).

Տիկին, լորու կաս յայսմ վըտանգի անհընարին.

Միթէ կամի՞ս՝ զի վասն մանկան օտարազգի
 Յովիադա ըզժողովուրդ, ըզքեզ, զորդի
 Ձուր մատնեսցէ 'ի սուր անգուժ Գոթողիայ,
 Ձի ծախեսցէ զայս սուրբ տաճար հուր անխընայ:
 Ձի՞նչ առնէիր, եթէ լինէր մանուկըն այն
 Քոյոցդ նախնեաց թագաւորաց ծնունդ պա-
 տուական:

Յովսաբէ Բէշ Եւ Յովիադա

Ընդէ՞ր սըմա ինչ ո՞չ յայտնես. յօժարակամ
 Հանցէ սա զքէն թագաւորաց:

Յովիադա.

Դեռ ո՞չ է ժամ:

Աբներ.

Տէր, մի ծախեր ըզժամանակն 'ի սընոտիս.
 Այն ինչ ինձ տալ պատասխանի դու տարտամիս,
 Մաթան՝ գազանն այն կատաղեալ, ճեպ 'ի ճեպոյ
 Խընդրէ հրաման պատերազմի 'ի թագուհւոյ:
 Կամի՞ս՝ զի յոոս անկայց սուրբ առնդ մեծայարգի.
 Յանուն տեղւոյս շընորհազարդ և սոսկալի,
 Ուր Տէր բնակի, և ուր միայն դու մըտանես,
 Որչափ և խիստ իցեն օրէնք՝ զորս մեզ դընես,
 Խափանեսցո՞ւք զարկածս չարեաց անկարծելի:
 Տո՛ւր ինձ անէ ժամանակ ինչ առնուլ ոգի.
 Յայսմ գիշերէ մինչ ցըլաղիւ ես զելս իրաց
 Հընարեցից՝ եթէ զիւրդ 'ի թըշնամեաց
 Ապահովել է մեզ վանձինս և ըզտաճար.
 Բայց դու յիմ բանս, յիմ արտասուս կաս ան-
 յօժար.

Ո՛չ շարժեսցի մաքուր կըրօն քո խըստամբեր։
 Ի՛նչ արդ՝ բա՛ւ է, գըտէք դուք ինձ հատու սուսեր։
 Ա՛ռ սուրբ դըրամբք՝ ուր մընայ ինձ չարն թըշ-
 նամի,

Թո՛ղ ես մեռայց, պատերազմեալ վասն տաճարի։

Յովիադա.

Յօժարամիտ եմ ընդ խորհուրդս քո օգտակար։
 Ա՛բնիր, բարձցո՛ւք զանակընկալ դառն պատահար։
 Ա՛յո՛ մեզ գանձ ինչ ՚ի Դաւթէ է մընացեալ,
 Որոյ և պահ է յիս միայն ապաստանեալ,
 Որ վերջին յոյս է Հըրէից թըշուառական,
 Ձոր արթուն հոգք իմ ծածկեցին յաչաց մարդ-
 կան.

Բայց զի հարկաւ այժմ պահանջէ զնա թագու-
 հին,

Կատարեցից ըզկամս նորա. դըրուք մեր բացցին։
 Թո՛ղ եկեսցէ նա աստ ընդ քաջս մեծամեծաց,
 Բայց ըզխուամբ իւր վայրագամիտ օտարագդեաց
 Հեռացուցէ ՚ի սեղանոց, զի մի տեսից
 Ձտունն սըրբութեան յաւար մատնեալ յանո-
 ղորմից.

՚ի խէթ չարկցեն զնա դասք մանկանց, քահա-
 նայից.

Թո՛ղ անդ ընդ քեզ նա կարգեսցէ ըզթիւ աղխի։
 Ըզճնունդ մանկան՝ յորմէ անչափ նա երկընչի,
 (Ձարդարութիւն գիտեմ, Ա՛բնիր, ըզքո սըրտի),
 Իւր առաջի կամիմ ես քիզ պատսաբանել.
 Տեսցես՝ թէ հարկ է զնա ՚ի ձեռս իւր յանձն
 առնել.

Դու գատեցես ըզնա և զչարն Գոթողիա:

Աբներ.

Արդէն ասան, տէր իմ, եղէց պաշտպան նրմա.

Մի երկընչիր: Առ առաքիչն իմ ես փութամ:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Յովիստո, Յովսափէ, Ջասարիա, Սաղուճիւ, Իս-
 Տայէլ, Երէնու Ղաթաշանս, Պար էրֆէցոչաց.

Յովիադա.

Ո՛վ մեծդ Աստուած, ասան քո զոհ. հատեալ է ժամ:
 Լո՛ւր, Իսմայէլ:

(Մէջ՛ ինչ խօսի ընդ նմա).

Յովսաբէ.

Ո՛վ Տէր հըզօր և մարդասէր,
 կապեան կըրկին զաչս իւր կապով՝ յոր կապեցեր,
 Երբ ՚ի նմանէ խըլեալ զայն գիրդ, անմեղ զենլի,
 Ինձ հոռուր զնա ՚ի սլահսպանել յիմուամ գըրկի:

Յովիադա.

Մի կորուսցես ըզթամանակն. երթ, Իսմայէլ,
 Մի ըստ միոջէ ըզհըրամանս իմ կատարել.
 Տես զգուշութեամբ, զի մինչ մըտցէ աստ թա-
 գուհի.

Լիցի յաւէտ խաղաղութիւն յամենայնի:

(Առ պար էրֆէցոչաց).

Պատրաստեցէք զայն դահ շըբիղ վասն Յովա-
 սայ.

Թող այօր առ մեզ ընդ սուրբ զինուորս եկեացէ նա:

(Ա.՝ Յովն. Բ.՝)

Կոչեա՛ն, տիկին, և ըզդայեակն իւր պատուական...
Սըրբեա՛ն յաչացդ զայդ արտասուս յորդահոսան:

(Ա.՝ զհասանն ոհն.)

Այն ինչ գոռոզն, ժանտախորհուրդն այն թագուհի

իւրովք հանդերձ անցցէ ընդ սեամս դրանց տաճարի,

Եւ ոչ այլ ևս լիցի հընար նմա յետս դառնալ,
Փոյթ տար տըքուն՝ զի ՚ի շըփոթ անակընկալ

Ձբանակ չարաց արկցեն մեր փողք պատերազմի,
Ձի փութասցէ ազգն յօգնութիւն իւր արքայի.

Քարող կարդա՛ եթէ զիւրդ զՅովաս անմեղ
Փըրկեաց հըրաշք ՚ի թագուհւոյ արիւնահեղ:

Ահա՛ նա գայ:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Յովն., Յովն. Բ., Յովն. Բ., Ձախարիա, Սաղոմոն,
Ա. զարիա, Ժողով հահանայից և զհասաննայ, Պար
երգեցողաց.

Յովն. Բ.

Ո՛վ զլատականք, ամենուստեք

Յաներևոյթս զայս սուրբ տեղի դուք պատեցէք,
Եւ յիս յանձնեալ ըզքաջութիւնդ եռանդնա-

լից,

Կացէք հանդարտ, մինչև ես ինքն զձեզ կոչեցից:

(Ա. Բեհեմիսի նոյս Լաֆշիս)։

Արքայ, յանձին այժմ կարողես դու քաջ յուսալ,
 Ձի ընդ ոտիւքդ տեսցես զոսոխս դիւթաւալ :
 Որ չարաչար 'ի մանկութեանդ զքեզ հալածէր,
 'ի քո կորուստ ահա՛ փութայ աստ անվեհեր.
 Սակայն մի ինչ դու երկիցես 'ի նրմանէ.
 Ընդ մեզ հրեշտակն այն սատակիչ զքեզ պահպանէ.
 Բազմեաց յաթող, և... Բանան զդրունս մեր
 տաճարի.

Ա. և նուազ մի թագիր յետուստ վարագուրի :
 (Փռէ՛ք զՄարագոյրն)։

Տիկին, հատաւ գոյն երեսացդ :

Յովսաբէ.

Այ մեր անձանց.

Ձտուն սըրբութեան լըցին ոսոխք խըրոխտա-
 պանծ.

Ո՛չ տեսանես ըզբազմաթիւ խումբդ գարշելի :

Յովիադա.

Ես տեսանեմ, զի փակեն զդրունս սուրբ տաճարի.
 Յապահովս եմք ամենեքեան :

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Գոթուշիս, Յովաս, Յովիադա, Յովաբէ, Աբեհեր,
 Այն Գոթուշիսյ.

(Յովաս Լաֆուցեալ է յետուստ Մարագոյրի)։

Գոթողիա և Յովիադա.

Այր չարութեան,

Ա Էս հեղինակ դաշնակցութեանց ստահակու-
 թեան,
 Գլուխ ասլըստամբ, գարշախորհուրդ խըռովու-
 թեան,
 Յաւերժ ոսոխ վըսեմափառ իշխանութեան,
 Որ յԱստուած քո ասլաստանեալ էիր յանձին,
 Գիտացի՞ր այժմ ըզնանրութիւն յուսոյդ չընչին.
 Նա 'ի ձեռս իմ մատնեաց ինքնին զտաճար և
 զքեզ.

'ի սեղանի՝ ուր զոհ զոհես, արդէն ըզքեզ
 'ի դէպ էր ինձ.... Բայց յայն ևս գին ես շա-
 տանամ.

Տո՛ւր անյապաղ զոր խոստացար ինձ միանգամ.
 Ո՞ւր է մանուկն և ընդ նըմին գանձն մեծագին:

Յովիադա.

Ա աղվաղակի հաճոյք կամացդ կատարեսցին.

Զ երկոսին ևս ցուցից քեզ յաչս ամենեցուն:

(Ա արագոյնն Բանի: Յովա Բաղնէալ է
 յաւուս իւր. դայեակ նորս է 'ի ծուհի
 իջէալ յաջէ. Աղարիս, սուր 'ի ճեռի, է
 'ի ճախէ, և ճերձ 'ի նս Զախարիս և
 Սաղովթիէ էն 'ի գուճս իջէալ 'ի վէրայ
 սարճանացն ամուսոյ. Բաղնու-Թիւն զը-
 նավաս զեփականաց դասակարգէալ է
 յայնչոյս և յայնչոյս):

Ահա մանուկն, ազնիւ ծընունդ արքայազուն.

Թագուհի դու, տես ըզնըշանս քո չար սըրոյ.

Ո՞չ ճանաչես ըզժառանգորդ մեր աթոռոյ.

Որդիդ է սա, որդի թըշուառ Ոքողիայ:

Աբներ, ազգք դուք, տեսէք, Յովաս է ձեր արքայ
Աբներ.

Տէր իմ.

Գոթողիա — Յովհար.

Մատնիչ.

Յովհարա.

Տեսանե՞ս զայս մըտերմասէր
 Ըզկին՝ որ նմա, գիտես, ըզկաթն իւր դայեկէր:
 Գիրգն Յովսաբէ զմանուկն անմեղ ՚ի քէն փըր-
 կեաց.

Ըզիս տաճարս այս ընկալաւ, և Տէր պահեաց.
 Ահա զայս գանձ թողեալ է ինձ Դաւիթ ար-
 քայ:

Գոթողիա.

Այդ դարան քո չարագուշակ լիցի նըմա:
 Զինուորք իմ քաջ, փոլթացէք զիս փըրկել
 աստի:

Յովհարա.

Զինուորք դուք Տեառն, պաշտպանեցէք ձեր
 արքայի:

(Աստուծոյ Բանի յաստի Բարոնի: Ա-
 բնի ներսահողին աստուծոյն, և զեւս-
 հանին զինուորացի Տասնէն յաճեալն հող-
 Տանց ՚ի աստուծոյն անդր.)

Գոթողիա.

Ո՛ւր իցեմ ես. ո՛ր մատնուլթեանս. լսի՛յ իմ անձին.

Պաշարեալ են զիս թըշնամիք, զէնք ահագին:

Յովիտագա.

'ի զուր զտեղեօք յածին քո աչք. Տէր վրիժա-
հան

Ըրջապատեալ է զթագուհիդ ամբարտաւան.

Չքեզ 'ի մեր ձեռս մատնեաց Աստուած՝ զոր
խոտեցեր.

Տո՛ւր արդ նրմա զհամար արեան՝ զոր հոսեցեր:

Գոթողիա.

Եւ զի՛նչ. զինուորքս արձանացան յահէ ան-
տի.

Յո՛ վարեցեր զոտս իմ, Աբներ դու գարշելի:

Աբներ.

Ակայ է Աստուած...

Գոթողիա.

Թո՛ղ անդ զԱստուածդ. մատնիչ, փութա՛ն
Առնուլ զիմ վրէժ:

Աբներ անհանելով յոսս Յովիտայ.

Յիմ արքայէ՞, 'ի Յովասան:

Գոթողիա.

Սա՛ն է Յովաս. սա՛ն է արքայդ: Չարք, մի պար-
ծիք.

Ըզձեր տաճար պաշարեալ են իմ Տիւրացիք.

Լըսեմ ահա՛ ըզձայն զօրաց՝ զի զիս կոչեն,

Գան 'ի թիկունս: Հա՛ր ըզդողի, գունդ անօ-
րէն:

ՏԵՍԱՐԸՆ Զ.

Իսմայէլ, Յովտա եւ Դայեմէն Դորա, Գոթոզիս, Յովհադա, Յովտաբէ, Լ.Բէնէր, Լ.Կարբիս, Զ.Մարբիս, Սաղոմոն, Ժողով Կահմանայից եւ զհասկանաց, Այլ Գոթոզիսայ.

Իսմայէլ եւ Յովհադա.

Տաճարս ազատ է յօսոխաց. օտարք փախեան,
Եւ Հըրէայք մեզ անձնատուր նուաճեցան.

Զոր օրինակ հողմ ցըրուիցէ յօդս անդ ըզճուլս,
Չայն Բարձրեւոյն ցըրուեաց ըզխուամբն զայն չարամուլս:

Սուրբ զԼտականք մեր սլատմեցին, զի կենդանի
Է դեռ որդի Ռթողիայ ողորմելի,

Զի փըրկեցաւ նա 'ի սըրոյ անդուժ դահճաց,
Զի խաբեցաւ Գոթոզիա ժանտախոկաց:

Խառն աղաղակ բազմախըռիւ ժողովըրդեան

Եւ ձայն փողոյ արկին ըզզօրս ամբարտաւան

Յաղմուկ, յարհօրս անհընարին, որպէս եհար

Քաջն Գեդէոֆն զՄադիամեանս լընասահար:

Չար Տիւրացիքն 'ի բաց ձըգեալ զգէնս 'ի ձեռաց,

Խոյս ետուն անդ առ յերեսաց մեր զինուորաց.

Առ երկիւղի և Հըրէայք ոմանք փախեան,

Բայց մընացեալքն մեզ ընդ ձեռամբ խոնարհեցան,

Լուեալ ըզհրաշս՝ զորս Տէր արար ընդ այն մանկան:

Ծերք, տղայք, կանայք, ամենեքին միաբերան,

Ուրախութեամբ զմիմեամբք փարեալ, օրհնեն
զԱստուած,

Գովաբանեն զարբայ՝ զոր մեզ նա առաքեաց,
 Գովաբանեն ըզյարուցեալն որդի Դաւթի:
 Ընկեցիկ է Բահաղ աստուածն այն գարշիլի.
 Կործանեցան դրունք մեհենի կըռապաշտից.
 Մաթան սպանաւ...

Գովթողիա.

Յաղթանակես, Աստուած Հրէից.

Յովաս է սա. ՚ի զուր կամիմ ես զինքն խաբել.

Ահա տեղին՝ զոր ես ետու խոցահարել.

Ահա ընթացք, ահա շարժուածք Ոքողիայ,

Դառն յիշատակք արեան՝ զոր անձն իմ միշտ ա-
 տեայ:

Կործանեցաւ իմ Աքահաբ. Դաւիթ պանծայ.

Քո են այս գործք, Աստուած անդուծ և պատ-
 ժահար.

Դու ինքն ՚ի վրէժ վառեալ ըզսիրտ իմ անարդար,

Մաշէիր զիս խըղճիւ մըտայս դառնաչարչար,

Լըր զի անդէն առ այս մանուկ զգուծ իմ շար-
 ժեալ,

Լըր զի ՚ի գանձս քո բազմաշահ զիս որսացեալ.

Նրկընչի մատնել զնոսա ՚ի հուր, յաւար:

Ձ թագ կապեայէ ընդ որ և ինքն դու հաճեցար.

Հըրամայեան նմա հարկանել զիս ՚ի սուսեր

՚ի դնել իւրում իշխանութեան նշան բարեբեր.

Ահա զոր այժմ ՚ի դուրս մահուան խընդրէ իւր
 մայր.

Բայց զի՞նչ... Յուսամ, զի լըծընկէց և գիմահար

Ապրատամբեալ առաջի քո, լուիցէ նա

Չայնի արեան Աքահաբու, Գովթողիայ,

Ձի երթիցէ ըստ հօր իւրոյ և ըստ հաւուն,
 Ձի ջընջեսցէ զանուն քո սուրբ, ըզիառս ան-
 հուն,

Ձի պըղծեսցէ ըզքո սեղանս, և ըզնախնեաց
 Առցեն իւր ձեռք ըզքէն յանձանց արդարագնաց
 (Գովհոյիս էլանէ արիստիս, և զիստիստիս
 էրիստիս զհէստիս)։

Յովիադա •

Արտաքս հանէք զայդ կին, գըլուխ մեղապարտից •
 Մի պըղծեսցէ այլ ևս զայս տուն ջընորհալից •
 Ո՛վ քինառուք սըրախողխող ձեր արքայից,
 Մահուամբ դորա բարձէք զբողոք արեան նոցա •
 Եթէ ածցէ անդ յանդուզն ոք ըզթեկն դորա,
 Յահեղ սուսեր դուք մատնեցէք զնա ընդ դըմա։

ՏԵՍԵՐԸՆ Ի •

Յովսա և Դայեան նորա, Յովիստա, Յովսէն, Աբ-
 նէր, Աղարիս, Իսմայէլ, Չախարիս, Սողոմոն,
 Ժողով չահանայից և զիստիստից •

Յովաս եջեալ յաւհոյն •

Որ տեսանես զիմ ամբօխուսիս, զիմ տառապանս,
 Տէր իմ Աստուած, դարձո՛ յինէն զայն հայհոյանս •
 Մի բընաւին լըցցին անէծք կնոջն դարշելի •
 Ըսպան զՅովաս, եթէ ըզքեզ նա մոռասցի։

Յովիադա և զիստիստիս •

Առչեցէք զազգն • յուցցուք նըմա ըզմեր արքայ •
 Նորոգեսցէ զհաւատարիմ դաշն ընդ նըմա։
 Եկոյք ընդ իս, ազգ, քահանայք և դու սրբայ,

Դնել միւսանդամ ընդ Աստուծոյ զուխտ Յա-
կովբայ,
Եւ ՚ի մեղաց ապաշաւեալ նոր սըրբութեամբ,
՚ի նա զանձինս ապաստանել կըրկին երդմամբ:
Յոտս արքայի, Աբներ, զապաշտօնդ կնլ զառաջին:

ՏԵՍԱՐԱՆ Ը.

Ղեկավարն Տէ, Յովնա եւ Դայեան նորս, Յովիսա,
Յովնաբէ, Աբներ, Աղարեա, Իսայէլ, Ջախարեա,
Սաղովբէ, Ժողով չահանայից եւ զեկեղանաց.

Յովիադա աւ զեկեղանն.

Պատժեցիք դուք զամբարտաւան ըզթագուհին:
Ղևտական.

Այո՛, սուսեր եբարձ ըզկեանս անօրինին.
Երուսաղէմ՝ երկարատե, դառն զոհ նորին,
Այժմ ՚ի լըծոյն տաժանակիր ալատ կացեալ,
Ջնա տեսանէ լուղեալ յարեան իւրում նեխեալ:

Յովիադա.

Արդարահաս, ահեղ մահուամբ կնոջն չարարար
Ուսիր, արքայ դու շըրէից, մի մուանար,
Թէ է յերկինս խիտ դատաւոր թագաւորաց,
Է՛ հայր ուրբոց, է քինառու եւ անմեղաց:



ՍՏՈՒԳՎԱՄ Է 1971

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՖՈՒՆԿՑԻՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿՎԵՆԱՍ: ՍՏ

ՍՏՈՒԳՎԱՄ Է 1971
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎՐԻՊԱԿԻ.

Երէս. Տոշ. Սեւշ.	Ռ-շէշ.
12. 7. կենցաղավարելոցն	կենցաղավարելոցն
14. 4. զվեհափառ	զվեհափառն
23. 6. գետոց և և աղբե- րաց,	գետոց և աղբե- րաց,
29. 8. աստուածոյն	աստուածոյն
33. 25. յասացուածո՝	յասացուածս՝
40. 16. վշտաց	վշտաց
54. 24. դործս	դործս
62. 5. Միս Սարա, Սամփ- սոփն	Միս Սարա Սամփ- սոփն
63. 49. անգամ	անգամ
69. 14. կիսով 'ի 'ի տամ- կուլթենէ,	կիսով 'ի տամկու- լթենէ,
87. 14. վիճակ	վիճակն
101. 4. ստգտեալ էին թէ	ստգտեալ էին՝ թէ
122. 24. Տոլր զգայիսոն	Տոլր զգաւազան
123. 10. Չաքարիաս իմ	Չաքարիա իմ
133. 2. զբազմուլթիւն	զբազմուլթիւնն